

# ԱՐՏԱՎԱԶԴԻ ՈՒԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Ռ. ՎԱՐՈՒԱՆՅԱՆ



ԵՐԵՎԱՆ 2004

THE UNIVERSITY OF CHICAGO  
DEPARTMENT OF CHEMISTRY  
5301 S. DICKINSON DRIVE  
CHICAGO, ILLINOIS 60637

RESEARCH ASSISTANT  
JAMES H. HARRIS

1968-1969

1969-1970

1970-1971

1971-1972

THE UNIVERSITY OF CHICAGO  
DEPARTMENT OF CHEMISTRY  
520 SOUTH MICHIGAN AVENUE  
CHICAGO, ILLINOIS 60607

RESEARCH REPORT NO. 1000

1963

BY

ROBERT M. WAYNE

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY  
&  
HISTORY MUSEUM OF ARMENIA

*COINAGE OF ARTAVAZDES II*

*by*

*RUBEN VARDANYAN*

*Publishing house MOUGHNI*

*YEREVAN*

*2004*

937 ( = 919. 81 )

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

## ԱՐՏԱՎԱԶԴ II-Ի ԴՐԱՄՆԵՐԸ

A II  
89865

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՈՒՂՆԻ հրատակարչություն

ԵՐԵՎԱՆ

2004



ՀՏԴ 93/99 (093) : 737  
ԳՄԴ 63.2  
Վ 301

**Տպագրության հովանավոր՝  
Կարեն Վարդանյան**

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ  
Հնագիտության եւ ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի  
որոշմամբ

Վարդանյան Ռուբեն  
Վ 301 Արտավազդ II-ի դրամները. - Եր., «Մուղնի» հրատ.,  
2004: - 140 էջ:

Աշխատության մեջ առաջին անգամ ի մի են բերվել Արտավազդ II-ի (մ.թ.ա. 55-34 թթ.) դրամների վերաբերյալ տվյալները, որոնք հետազոտվել են համակողմանիորեն, փորձ է արվել բացահայտել դրանց աղբյուրագիտական հնարավորությունները:

Գիրքն ընդգրկում է ՀՊԹ-ի, գիտական աշխատություններում և վաճառքի կատալոգներում հրատարակված, ինչպես նաև հավաքորդների տրամադրած ներկայումս ուսումնասիրության համար հասանելի նյութը:

Վերլուծվել են դիմերեսի ու դարձերեսի պատկերատիպերը, գրությունները, մենագրերը, տարեթվերը, չափագիտությունը և Արտավազդ II-ի դրամաթողարկմանը վերաբերող այլ տարրեր:

Արտավազդի ժամանակաշրջանը հնարավորինս ամբողջական ներկայացնելու նպատակով քննարկվել են Մ. Անտոնիոսի և Կլեոպատրայի Հայաստանին վերաբերող դրամները, ինչպես նաև Ատրպատականի արքաների դրամները:

ԳՄԴ 63.2

ISBN 99941-33-21-7

© ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ, 2004 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ներածություն</b>	<b>7</b>
<b>1. Արտավազդ II-ը ըստ պատմագրական աղբյուրների</b>	<b>9</b>
<b>2. Արտավազդ II-ի դրամները</b>	<b>25</b>
<b>2.1 Պղնձե վաղագույն թողարկումը (ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΑΡΤΑΥΑ[ΖΔΟΥ])</b>	<b>26</b>
<b>2.2 Դրախմաները (ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ)</b>	<b>26</b>
<b>2.3 Դարձերեսին նոճու պատկերով պղնձե թողարկումները (ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ)</b>	<b>30</b>
<b>2.4 Դարձերեսին Նիկեի պատկերով պղնձե թողարկումները (ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ)</b>	<b>33</b>
<b>2.5 Տետրադրախմաները (ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΣΔΕΩ ΘΕΙΟΥ)</b>	<b>44</b>
<b>3. Արտավազդ II-ի դրամների դիմերեսի պատկերատիպերը</b>	<b>48</b>
<b>3.1 Վաղագույն դիմապատկերը</b>	<b>48</b>
<b>3.2 Դիմապատկերը դրախմաների և պղինձների վրա</b>	<b>48</b>
<b>3.3 Դիմապատկերը տետրադրախմաների վրա</b>	<b>54</b>
<b>3.4 Թագի խորհրդանշանները</b>	<b>57</b>
<b>3.5 Դիմապատկերը դիմարվեստի տեսանկյունից</b>	<b>60</b>
<b>4. Արտավազդ II-ի դրամների դարձերեսի պատկերատիպերը</b>	<b>66</b>
<b>4.1 Կվադրիգան հունա-հռոմեական դրամներում</b>	<b>66</b>
<b>4.2 Կվադրիգան Արտաշեսյանների դրամներում</b>	<b>74</b>
<b>4.3 Արտավազդ II-ի դրախմաների և տետրադրախմաների դարձերեսների պատկերագրական տարբերությունները</b>	<b>81</b>
<b>4.4 Նիկե և նոճի</b>	<b>83</b>
<b>5. Գրությունները</b>	<b>86</b>
<b>5.1 Հնագրական դիտարկումներ</b>	<b>90</b>
<b>5.2 Մենագրերը</b>	<b>90</b>
<b>5.3 Դրամաթողարկման տարեթվերը և ժամանակագրությունը</b>	<b>95</b>

6. Վերաթողարկումներ	97
7. Չափագիտությունը, և դիտարկումներ դրամաթողարկման կնիքների վերաբերյալ	102
7.1 Կշիռ, չափ և կնիքների առանցքային հարաբերությունը	102
7.2 Դրամաթողարկման տեխնիկական առանձնահատկությունները	106
8. Դրամագյուտերը	108
9. Հայաստանը Մարկոս Անտոնիոսի և Կլեոպատրայի դրամներում	110
10. Ատրպատականի դրամները և Հայաստանը	116
Վերջաբան	124
Օգտագործված գրականություն	126
Հավելված. Արտավազդ II-ի դրամների մատենագրությունը	133
Լուսանկարների տախտակներ	

## ՆԵՐԱՄՈՒՔՑՈՒՆ

Արտավազդ II-ի դրամների վերաբերյալ հրատարակութունները մինչ այժմ ունեցել են առավելապես արձանագրող բնույթ, որոնցում ներկայացվել է Արտավազդի այս կամ այն դրամը, կամ նրա դրամների ընդհանուր բնութագիրը՝ առանց դրամագիտական տվյալների մանրամասն վերլուծության<sup>1</sup>: Նաև այդ պատճառով, Արտավազդ II-ի ժամանակաշրջանի մասին պատմագիտական ուսումնասիրություններում դրամագիտական տվյալների հնարավորությունները օգտագործվել են ոչ բավարար չափով<sup>2</sup>: Սույն աշխատությունը Արտավազդ II-ի դրամները համակողմանիորեն դիտարկելու և նրանց աղբյուրագիտական հնարավորությունները բացահայտելու փորձ է: Մենք դեռևս չունենք մեղ հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները, բայց ժողովելով և վերլուծաբար դիտարկելով մինչ օրս հայտնի նյութը, կարող ենք հանգել որոշակի հետևությունների: Արտավազդի դրամաթողարկման ուսումնասիրությունն իրականացնելու դժվարություններից մեկը նրա դրամների սակավությունն է և դրանց հայտնաբերման վերաբերյալ տվյալների գրեթե բացակայությունը:

Աշխատանքը կատարվել է ՀՀ պետական բյուջեից թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում: Այն ավարտին հասցնելու և հրատարակման պատրաստելու գործում իր օժանդակությունն է ցուցաբերել *Martin Price Fund*-ը:

<sup>1</sup> Վերջերս լույս տեսավ Ե. Ներսեսյանի հոդվածը նվիրված Արտավազդ II-ի միայն արծաթե դրամներին, ուր ի մի է բերված մինչ այժմ հայտնի դրամագիտական նյութը, տե՛ս NERCESSIAN 2003:

<sup>2</sup> Տե՛ս Հավելված 1-ը, ուր հավաքված է Արտավազդ II-ի դրամներին վերաբերող գրականությունը:

Երախտապարտ եմ Կարեն Վարդանյանին՝ գրքի հրատարակումը հովանավորելու համար:

Կատալոգում ներկայացված դրամագիտական նյութը հնարավորինս ամբողջական դարձնելու իմ ցանկությանն ընդառաջելով, իրենց հավաքածուներում ունեցած Արտավազդ II-ի դրամների տվյալներն ու լուսանկարները սիրով տրամադրեցին Եղիա Ներսեսյանը, Անդրանիկ Այվազյանը, Կարեն Վարդանյանը, Հակոբ Մկրտչյանը:

Հատուկ շնորհակալություններս Եղիա Ներսեսյանին և Պրոֆ. Անտոնիո Ինվերնիցցիին՝ բարոյական աջակցության համար: Ծնորհակալ եմ Արմինե Զոհրաբյանին գրքի ձեռագիրն ընթերցելու և արժեքավոր դիտողությունների համար:

## 1. ԱՐՏԱՎԱԶԴ ԻԼ ԸՍՏ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Արտավազդ Ի-ի թագավորության շրջանի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունների համար պարտական ենք Դիոն Կասսիոսին, որը մ. թ. 200-223 թթ. ընթացքում ստեղծած իր «Հռոմեական պատմության» մեջ բավական հանգամանալից կերպով ներկայացնում է Կրասսոսի և Անտոնիոսի արչավանքների պատմությունը: Արտավազդի մասին մյուս հիմնական գրական աղբյուրը Պլուտարքոսն է (մ. թ. 46 - 123 թթ.)՝ Կրասսոսի և Անտոնիոսի կենսագրություններով: Իրադարձությունների ժամանակագրությունն ավելի որոշակի է Դիոնի մոտ, մինչդեռ Պլուտարքոսը նրան լրացնում է դեպքերի նկարագրության որոշ մանրամասներով: Արտավազդը հիշատակվում է նաև մի քանի այլ հեղինակների մոտ՝ Հովսեպոս Փլավիոս, Հրեական Հնախոսություն XV, 104, Ստրաբոն, Աշխարհագրություն XI 13, 4; XI 14, 6, 10, 15, Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Բ, գլ. իբ, իգ և այլն, բայց նրանց հաղորդած տեղեկությունները կա՛մ կրկնում են վերոհիշյալ երկու հեղինակների ասածը, կա՛մ վերաբերում են արքայի հետ կապված որևէ մասնակի հարցի, կա՛մ շղարշված են առասպելական պատմություններով:

Գ. Սարգսյանի հետ արձանագրենք, որ «դարաշրջանին վերաբերող առաջին հայացքից հարուստ թվացող աղբյուրները իրականում չափազանց միակողմանի են: Դրանք լույս են սփռում բացառապես այն անցքերի ու երևույթների վրա, որոնք կապված են Հռոմի պատմության հետ: Մնացածը թանձր մշուշի մեջ է: Հայաստանի այս շրջանի ներքին կյանքի մասին չի պահպանվել ոչ մի տվյալ»<sup>3</sup>:

<sup>3</sup> ՀԺՊ I, 615:

Տիգրանի որդի Արտավազդի մասին, մինչև նրա թագավոր դառնալը, ոչ մի տեղեկություն չկա: Հ. Մանանդյանը, առանց աղբյուրը նշելու, գրում է, որ «Տիգրան II-ի որդին, Արտավազդը, ինչպես ենթադրում են, դեռևս հոր ծերության օրերին նրա աթոռակիցն էր»<sup>4</sup>:

Արտավազդի թագավորման սկիզբը ենթադրաբար ընդունվում է մ.թ.ա. 55 թվականը, քանի որ Կիկերոնի ճառերից մեկը վկայում է, որ 56 թվին Տիգրանը դեռևս իշխող թագավոր էր (Cicero Pro Sestio XXVII, 59), իսկ 54 թվականին Կրասսոսի արշավանքը նկարագրելիս Պլուտարքոսը որպես Հայաստանի թագավոր է հիշատակում Արտավազդին (Plut. Crass. XIX):

Նույն 55 թվականին Հռոմում կոնսուլներ են ընտրվում Կրասսոսը, Պոմպեոսը և Կեսարը, որոնցից առաջինին որպես պրոկոնսուլական նահանգ բաժին է ընկնում Ասորիքը: 54 թ. գարնանը Կրասսոսը ժամանում է Ասորիք, զորքով ներխուժում է Եփրատի ձախափնյա պարթևական տարածքները և հետ վերադառնում ձմեռելու: 53 թ. գարնանը Պարթևաստանի արքա Որոդ II-ի դեսպանները ժամանում են Կրասսոսի մոտ, որից հետո ակնհայտ է դառնում առաջիկա պատերազմի անխուսափելիությունը (Plut. Crass. XVIII): Այնուհետև Կրասսոսին է այցելում Արտավազդը: Այս մասին հաղորդում է Պլուտարքոսը և այստեղից էլ իմանում ենք, որ Հայաստանի թագավորն արդեն Տիգրանը չէր. «Կրասսոսին առավելապես խրախուսեց Արտավազդը (բնագրում՝ Արտարազոս), հայոց թագավորը: Նա ժամանեց ճամբար վեց հազար հեծյալներով: Սրանք, ինչպես նրանց անվանում էին, արքայի թիկնապահներն էին և ուղեկիցները: Արտավազդը խոստանում էր տալ ևս մեկ բյուր զրահապատ հեծյալներ և երեք բյուր հետևակ, որոնց

<sup>4</sup> ՄԱՆԱՆԴՅԱՆ 1977, էջ 243: Հայտնի չէ, թե ինչի հիման վրա է արված այս ենթադրությունը, բայց մեր ցուցակ 1-ի պղնձե, առայժմ բացառիկ դրամն այսօր մասամբ կարող է դրա հիմքերից մեկը համարվել, որտեղ Արտավազդը հիշատակված է միայն արքա տիտղոսով և թագը կրում է այնպես, ինչպես հայրը, թեև սրանք վճռորոշ փաստարկներ չեն և կարող են մեկնարանվել նաև այլ կերպ:

կպարենավորեր ինքը: Նա համոզում էր Կրասսոսին Պարթևաստան արշավել Հայաստանի միջով, քանի որ այնտեղ նա ոչ միայն ամեն ինչ առատորեն կունենար զորքի համար, քանզի այդ մասին ինքը կհոգար, այլ կընթանար ապահով ճանապարհով, պաշտպանված լինելով լեռներով, բլուրների անվերջանալի շարքով, որոնք դժվարանցանելի են հեծելազորի համար, որը պարթևների միակ ուժն է: Կրասսոսը գոհ մնաց արքայի բարյացակամությունից և շուտ օգնությունից, բայց ասաց, որ կառաջանա Միջագետքի միջով, որտեղ թողել է բազմաթիվ արի հոռմայեցի ղինվորների: Այնուհետև հայոց թագավորը մեկնեց» (Plut. Crass. XIX)<sup>5</sup>:

Շուտով, 53 թ. գարնանը, Կրասսոսը 42 հազարանոց զորքով անցնում է Եփրատը: Հոռմեացիների դեմ ուղարկելով Սուրեն զորավարին, պարթևների արքա Որոդը ներխուժում է Հայաստան «որը մի ժամանակ Տիգրանի երկիրն էր, որպեսզի Արտավազդը Տիգրանի որդին, որն այն ժամանակ թագավորում էր (այնտեղ), իր սեփական երկրի վիճակով մտահոգված, որևէ օգնություն չուղարկի հոռմայեցիներին» (Dio XL. 16, 2)<sup>6</sup>: Որոդի պլանը գործեց և Արտավազդն, իրոք, չկարողացավ կատարել խոստացածը. «Արտավազդ Արմենի մոտից դեսպաններ ժամանեցին և Կրասսոսին հայտնեցին, թե որքան ծանր վիճակում է Արտավազդը, որը մեծ պատերազմի է բռնվել Հերոդեսի Հայաստան ներխուժման պատճառով: Ջրկված լինելով Կրասսոսին օգնություն ուղարկելու հնարավորությունից, նա խորհուրդ է տալիս նրան, որ ավելի լավ կլինի, եթե ինքը Կրասսոսը ևս շրջվի ու գա այնտեղ և, միանալով հայերի հետ, միասին կովի Հերոդեսի դեմ. իսկ եթե ոչ, ապա ճանապարհ գնալիս և կամ բանակելիս թող մշտապես խուսափի այնպիսի տեղերից, որոնք բարենպաստ են հեծելազորի համար, և թող նա մոտենա

<sup>5</sup> Պլուտարքոսից և Դիոն Կասսիոսից մեջբերված հատվածները տրված են Ս. Կրկյաշարյանի թարգմանությունով:

<sup>6</sup> Նաև Plut., Crass., XIX, 3: «Արդ՝ Որոդեսն իսկույն բաժանեց իր զորքը երկու մասի, և ինքն Արտավազդին պատժելու համար ավերում էր Հայաստանը, իսկ Սուրենին ուղարկեց հոռմայեցիների դեմ»:

լեռնային տեղանքին: Բայց Կրասսոսը, զայրացած և անխոհեմ, պատասխան չգրեց, այլ միայն պատվիրեց ասել, որ այժմ նա ժամանակ չունի Հայաստանի համար. բայց հետո կգա այնտեղ և Արտավազդին կպատժի դավաճանության համար» (Plut. Crass. XXII)<sup>7</sup>:

53 թ. մայիսին Նառան քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հռոմեացիները պարտվում են, Կրասսոսը սպանվում է, իսկ նրա գլուխն ու ձեռքը Սուրենն ուղարկում է Հայաստանում գտնվող Որոդին (Plut. Crass. XXXII): «Երբ այս անցքերը տեղի էին ունենում, Հերոդեսն արդեն հաշտվել էր Արտավազդ Արմենի հետ. նրանք համաձայնվել էին, որ Արտավազդի քույրը ամուսնանա Հերոդեսի որդու՝ Բակուրի հետ<sup>8</sup> (բնագրում՝ Պակորոս), նրանք փոխադարձաբար իրար մոտ խնջույքներ ու կերուխում էին կազմակերպում, հաճախ հունական ներկայացումներ էին տրվում, քանի որ Հերոդեսին օտար չէին հունարեն լեզուն և գրականությունը, իսկ Արտավազդը նույնիսկ ողբերգություններ էր հորինում, գրում էր ճառեր ու պատմական երկեր, որոնց մի մասը պահպանվել է» (Plut. Crass. XXXIII)<sup>9</sup>: Այնուհետև Պլուտարքոսը պատմում է Կրասսոսի գլխի հետ կապված հայտնի պատմությունը<sup>10</sup>:

51 թ. օգոստոսին պարթևական զորքերը արքայազն Պակորոսի գլխավորությամբ անցնում են հակահարձակման, մտնում են Ասորիք ու հասնում մինչև Անտիոք (Dio XL. 28-29): Արտավազդն այս ռազմարշավին օժանդակում էր Կապադովկիայի սահմանի մոտ զորաչարժեր կատարելով<sup>11</sup>: Նույն թվականին պարթևական զորքը հեռանում է Ասորիքից և չորս տարի տևած պատերազմը դադարում է (Dio XL. 29-30):

<sup>7</sup> Պլուտարքոս, Կենսագրություններ, Երևան, 2001, էջ 125-126:

<sup>8</sup> Տե՛ս Աղ. 15.12:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 143-144:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 144-145:

<sup>11</sup> ՀԺՊ I, էջ 610, որտեղ հղված է՝ Cicero, Epist. ad fam., XV, 3, 1:

Հոռմում թեժանում էր քաղաքացիական պատերազմը: 49 թ. Հունվարին Պոմպեոսը թողնում է Իտալիան և գալիս է Հունաստան, փորձելով Հուլիոս Կեսարի դեմ պայքարում ստանալ Արևելքի իր երբեմնի բարեկամների օժանդակությունը: «Այսպիսով բացի Փառնակեսից և Որոդեսից - քանզի սրան նույնպես փորձեց իր կողմը գրավել, թեպետև Կրասսոսներին սպանելուց հետո սա թշնամի էր դարձել - բոլոր մնացածները, որոնք երբևիցե մտերմացել էին նրա հետ, թե՛ դրամ տվեցին և թե՛ ոմանք օգնություն ուղարկեցին, ոմանք էլ անձամբ բերեցին: Իրականում Պարթևը (Որոդեսը) նրան խոստացել էր, որ եթե ստանա Սիրիան, ապա կղաչնակցի նրա հետ. բայց քանի որ չստացավ այն, ուստի և մերժեց նրան օգնել» (Dio XLI. 55, 3-4): Արտավազդը ևս օգնել էր Պոմպեոսին, ուղարկելով մի ղորախումբ (App. Bell. civ. II, 71), որը մասնակցել էր 48 թ. Հունիսին կայացած Փարսալոսի ճակատամարտին, ուր Պոմպեոսը պարտություն կրեց, փախավ Եգիպտոս և սեպտեմբերին սպանվեց: Հոռմի դեմ հանդես եկող և հանդուգն նվաճողական քաղաքականություն վարող Փառնակը՝ Միհրդատ Եվպատորի որդին, որը հորը դավաճանելու գնով դարձել էր Բոսպորի արքան և այժմ ուզում էր իր թագավորությունն ընդարձակել Պոնտոսի ու չրջակա թագավորությունների հաշվին<sup>12</sup>, և որին 62 թվականին Պոմպեոսը ընդունել էր իր բարեկամների և դաշնակիցների շարքը (Dio XXXVII. 14, 2), դավաճանեց նաև Պոմպեոսին<sup>13</sup>: «Իսկ Փառնակեսին, որը փորձում էր արդարանալ, թե չի օժանդակել Պոմպեոսին, ուստի և իր այդ վերաբերմունքի համար ներողամտություն էր հայցում, (Կեսարը) նրա հանդեպ ոչ մի բարյացակամություն չցուցաբերեց, այլ մինչև իսկ հանդիմանեց նրան, իրեն բարեգործություն անողի հանդեպ վատ և անարգ

<sup>12</sup> «Եվ երբ (Կեսարը) արչավեց Փառնակեսի դեմ, որն արդեն Պոնտոսի և Հայաստանի ոչ քիչ մասերին էր տիրում...», Dio, XLIV, 46, 1:

<sup>13</sup> Ինչպես դրամներն են ցույց տալիս, Փառնակեսը Պոմպեոսի կողմից նույնիսկ ճանաչվել էր արքայից արքա, տե՛ս ВАРДАНЫН 1999:

գտնվելու համար» (Dio XLI. 63, 3-4): 47 թվականին Եգիպտոսից Պոնտոս ժամանելով, Կեսարը «եկավ, տեսավ և հաղթեց» Փառնակին՝ նրան դուրս վճռելով երկրից (Plut. Caesar. L; Dio XLII. 47): Դիոն Կասսիոսը գրում է նաև. «Եվ Կեսարը այնքան մեծ մարդասիրութուն դրսևորեց, որ գովարանեց Պոմպեոսին հարած մարդկանց ու թույլատրեց նրանց պահել այն ամենը, ինչ (Պոմպեոսը) պարգևել էր իրենց, իսկ Փառնակեսին և Որոդեսին ատեց, քանզի չօգնեցին (Պոմպեոսին), նրա բարեկամը լինելով հանդերձ» (Dio XLIV. 45,3):

Պարթևաստանից և Բոսպորի թագավորութունից հետո երրորդ նշանակալից ուժն Արևելքում Արտավազդի Հայաստանն էր: Թեև որևէ ուղղակի կամ անուղղակի վկայություն չկա, բայց պատմաբանները ենթադրում են, թե հռոմեա-պարթևական առաջին պատերազմից ի վեր՝ 53 թվից սկսած, Արտավազդը դարձել էր Որոդի դաշնակիցը<sup>14</sup>: Բայց, ինչպես տեսնում ենք, Դիոնը Արտավազդին Կեսարի թշնամիների շարքում չի հիշատակում: Դիոնի վերոհիշյալ վկայությունից անուղղակիորեն հետևում է նաև, որ Արտավազդը լինելով հռոմեացիների դաշնակիցը, Պոմպեոսից հետո շարունակում էր այդպիսին համարվել նաև Կեսարի կողմից: Թեև 54-51 թթ. հռոմեա-պարթևական պատերազմի ընթացքում Արտավազդը ստիպված էր զիջումներ անել Որոդին, բայց հավատարիմ էր մնում Պոմպեոսի հետ իր հոր կնքած և, ըստ երևույթին, 50 կամ 49 թ. իր հետ վերահաստատած դաշնագրին<sup>15</sup>:

o

<sup>14</sup> ՄԱՆԱՆԴՅԱՆ 1977, 257. ՀԺՊ I, 616:

<sup>15</sup> Որ այդպիսի պայմանագրերը հարգվում էին նաև ժառանգների կողմից, վկայում են Պլուտարքոսի հետևյալ խոսքերը, երբ Պոմպեոսի մտերիմները խորհրդակցում էին, թե որ երկիրն ուղևորվի նա իր թշնամիներից խուսափելու համար. «Սակայն Թեոֆանես Լեսբոսացին հայտարարեց, որ իրեն անհեթեթ է թվում, անուշադրության մատնելով Եգիպտոսը, ընդամենը երեք օրվա ճանապարհի հեռավորության վրա գտնվող, և Պտղոմեոսին, թեև դեռ շատ երիտասարդ, բայց հոր կողմից Պոմպեոսին բարեկամությամբ ու երախտիքով պարտական...» (ընդգծումը՝ Ռ.Վ.), Plut., Pomp., LXXVI:

Մ. թ. ա. 47-ից մինչև 40 թ. ընկած ժամանակահատվածը շատ կցկտուր է լուսարանված գրավոր աղբյուրներում, իսկ Հայաստանի վերաբերյալ տեղեկություններն առհասարակ բացակայում են: Կեսարը խիստ թշնամարար էր տրամադրված պարթևների հանդեպ և պատրաստություններ էր տեսնում մի նոր խոշոր արշավանքի նրանց դեմ ու, ինչպես կարելի է ենթադրել, թարմացրել էր դաշինքը Արտավազդի հետ: Այս ամենը պետք է, որ կրկին սրած լիներ Հայ-պարթևական հարաբերությունները, ավելի ճիշտ կլինի ասել՝ պարթևների ճնշումը Հայաստանի վրա<sup>16</sup>:

Արևելքի պրոկոնսուլությունն ընդունած Անտոնիոսը դեռ Ալեքսանդրիայում էր, երբ Բակուրի՝ Որոդ II-ի որդու և արքայակցի, և պարթևների կողմն անցած հռոմեացի զորավար Լաբիննոսի կողմից զլխավորվող զորքերը մ.թ.ա. 40 թ. արագորեն գրավեցին ամբողջ Ասորիքը և Փյունիկիան՝ հասնելով մինչև Պաղեստինի սահմանը: Սակայն, 39 թվականին «Սիրիան, որը լքել էին պարթևները, (վենտիդիոսը) վերագրավեց առանց մարտի, բացի Արադոս (քաղաքից), և դրանից հետո առանց դժվարության գրավեց Պաղեստինը, ահաբեկելով այնտեղ թագավորող Անտիգոնոսին: Այս ամենը կատարելուց հետո, նա մյուս բոլոր մնացածներից յուրաքանչյուրից շատ դրամ գանձեց. շատ դրամ գանձեց նաև Անտիգոնոսից (Հրեաստանի թագավոր), Անտիոքոսից (Կոմմագենեի թագավոր) և Մալքոս Նարատեացուց այն պատճառով, որ նրանք օգնել էին Պակորոսին» (Dio XLVIII. 41): 38 թ. Բակուրը կրկնեց իր արշավանքն Ասորիք, բայց այս անգամ անհաջող. Գինդարոս լեռան մոտ պարթևները պարտվեցին: Բակուրը սպանվեց, իսկ մնացյալ զորքը ապաստան գտավ Կոմմագենեի մայրաքաղաք Սամոսատում, Անտիոքոս I արքայի մոտ (Dio XLIX. 25; Plut. Crass. XXXVII):

<sup>16</sup> Արտավազդի դրախմաները թողարկվել են 50-48 թթ. ընթացքում, որից հետո, մեր այսօրվա տվյալներով, դրանց թողարկումը դադարել է: Պարթևական ճնշման հետևանքներից չէ՞ր արդյոք Արտավազդի դրախմաների թողարկման այդքան արագ դադարեցումը:

Գ. Սարգսյանը ենթադրում է, որ Բակուրի սպանվելուց հետո (38 թ.) հայ և պարթև թագավորների խնամհական կապերը խղվել էին և Հայաստանի ու Պարթևաստանի միջև սառնություն էր սկսվել<sup>17</sup>: Այսինքն, ենթադրվում է, որ 53 թվից սկսած, անփոփոխ, Հայաստանը Պարթևաստանի դաշնակիցն էր և միայն 38 թվին Բակուրի և ապա Որոդի մահով այդ հարաբերությունները որոշ չափով սառել էին: Այս տրամաբանությունը շարունակելով, հետազոտողները գտնում են, որ Անտոնիոսի կողմից ուղարկված Արևելքի կուսակալ Կանիդիոսը մ.թ.ա. 37 թ. վերջին և 36-ի սկզբին<sup>18</sup> զորքով գալիս է Հայաստան և հարկադրում է Արտավազդին դառնալ Հռոմի դաշնակիցը<sup>19</sup>: Նկարագրելով մ.թ.ա. 37 թվին (Ագրիպպասի և Գալլոսի կոնսուլության ժամանակ) Պարթևաստանում կատարված իշխանափոխությունը, Դիոն Կասսիոսն անմիջապես շարունակում է. «Եվ ահա ձմեռվա մնացած կեսին Գելլիոսի և Ներվայի իշխանության ժամանակ, Պուպլիոս Կանիդիոս Կրասսոսը, արշավելով իբերների դեմ, այդ կովում հաղթեց նրանց թագավոր Փառնարազոսին, ստիպեց նրան դաշնակից դառնալ և նրա հետ միասին ներխուժելով հարևան Ալբանիա և հաղթելով սրանց ևս ու սրանց թագավոր Զոբերոսին, սրանց նույնպես իր կողմը գրավեց (ընդգծումը՝ Ռ.Վ.)» (Dio XLIX. 24,1): Այսպիսով տեսնում ենք, որ Հայաստանի անունն առհասարակ չի հիշատակվում, հետևաբար մենք չգիտենք, թե Արտավազդն արդյո՞ք հարկադրված էր ենթարկվել հռոմեացու ճնշմանը, թե՞ նրա համար ցանկալի էր դեպքերի հենց այդպիսի ընթացքը: Համենայն դեպս, միակ աղբյուրը, որը

<sup>17</sup> ՀԺՊ I, 617:

<sup>18</sup> DEBEVOISE 1938, 122; ՄԱՆԱՆԴՅԱՆ 1977, 257, նշում է 37 թվը, ՀԺՊ I, 617՝ տարեթիվ չի նշում:

<sup>19</sup> DEBEVOISE 1938, 122: «forced Armenia to become a Roman ally», ՄԱՆԱՆԴՅԱՆ 1977, 257՝ «Արտավազդը ստիպված եղավ ընդունել Հռոմի գերիշխանությունը և նորից դառավ հռոմայեցիների դաշնակիցը»: ՀԺՊ I, 617՝ Անտոնիոսը Կանիդիոսին հանձնարարել էր ինչ գնով էլ լինի ապահովել Հայաստանի լոյալությունը և նա Արտավազդից կորդեց այդ համաձայնությունը:

հիշատակում է Կանիդիոսի արչավանքի մասին Դիոնն է, որը լուում է Հայաստանի մասին<sup>20</sup>:

Այդ անհանգիստ ժամանակաշրջանում երկրների միջև հարաբերությունները հաճախ փոխվում էին կտրուկ և տրամագծորեն: Ատրպատականի Արտավազդ թագավորի նախորդը՝ Միհրդատ թագավորը, Տիգրան Մեծի փեսան էր և Լուկուլլոսի դեմ պատերազմում նրա հավատարիմ դաշնակիցը (Dio XXXVI. 14,2): Տիգրան Մեծի և Միհրդատի հաջորդները՝ երկու Արտավազդները, ինչպես տեսնում ենք, հիշատակվում են որպես թշնամիներ: Սակայն ե՞րբ և ի՞նչ պատճառով էին դաշնակցային հարաբերությունները փոխարինվել թշնամականի: Գրավոր աղբյուրներն այդ մասին ոչինչ չեն հայտնում, այլ միայն արձանագրում են, որ Անտոնիոսի արչավանքի նախօրյակին Հայաստանը և Ատրպատականը թշնամացած էին, իսկ վերջինս նաև պարթևների դաշնակիցն էր: Այստեղից հետևում է, որ Կանիդիոսն առանձնապես կարիք չուներ մեծ ջանքեր գործադրելու Արտավազդ II-ին հռոմեացիների կողմը գրավելու համար:

36 թ. դարնան վերջին (ապրիլին կամ մայիսի սկզբին)<sup>21</sup> Անտոնիոսը շուրջ հարյուր հազարանոց բանակով մտավ Հայաստան՝ մտադրված լինելով «արչավանք ձեռնարկել մեղացիների թագավոր Արտավազդի դեմ, որը թշնամի էր Մեծ Հայքի իրեն անվանակից թագավորին... և այնտեղ իմանալով, որ Մեղացին շատ էր հեռացել իր հայրենի երկրից, դաշնակից պարթև (թագավորին) օժանդակելու համար, իր գումակը և զորքի մի մասը թողեց Օպալիոս Ստատիանոսի հետ, պատվիրելով նրանց հետևել իրեն, մինչդեռ ինքը, վերցնելով հեծելազորը և հետևակի հզորագույն մասը, շտապեց առաջ, համոզված, որ առանց դիմադրություն կգրավի թշնամու (ամրությունները). և նա նետվելով նրանց արքայանիստ Փրասպա

<sup>20</sup> Ռ. Մանասերյանը ճիշտ է նկատել, որ այդ ժամանակ հայերի և հռոմեացիների միջև պատերազմ չի եղել: Կանիդիոսի արչավանքն ուղղված էր իրերների և աղվանների դեմ, ՄԱՆԱՍԵՐՅԱՆ 1997, էջ 23:

<sup>21</sup> DEBEVOISE 1938, 124.



(քաղաքի) վրա, սկսեց հողաթմբեր պատրաստել և հարձակումներ գործել» (Dio XLIX. 25,1-2):

ՀԺՊ I-ում Գ. Սարգսյանը գրում է, որ «Արտավազդը իր կամքին հակառակ միանում էր հռոմեական արշավանքին» (էջ 617): Որևէ հիմք չկա մտածելու, որ Արտավազդը Անտոնիոսի արշավանքին մասնակցում էր հարկադրաբար, ընդհակառակը, երկու Արտավազդների միջև թշնամության մասին Դիոնի վկայությունից ելնելով կարելի է եզրակացնել, որ Արտավազդ II-ը շահագրգռված էր հռոմեացիների արշավանքի հաջող ելքով: Իսկ Պլուտարքոսի այն վկայությունը, թե Փրասպայից նահանջելիս հռոմեական լեգեոնները «բարեհաջող անցան (Արաքս) գետի մյուս ափը և ոտք դրին հայկական հողը՝ ապաստան րաց ծովում երկար դեգերելուց հետո առաջին անգամ ցամաք տեսնելով, նրանք սկսեցին համբուրել քարերն ու ավազը և լալ ուրախությունից, միմյանց գրկախառնվելով» (Plut. Ant. XLIX), ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, հռոմեացիները Հայաստանը դիտում էին որպես դաշնակից ու բարեկամ երկիր, հող, որտեղ իրենք ապահով են: Նրանց դժգոհությունն, ըստ Պլուտարքոսի, ուղղված էր անձամբ Արտավազդի դեմ, որն իրր դավաճանել էր իրենց: 36 թվականին Հայաստանը դեռևս նվաճված երկիր չէր, Անտոնիոսն այն նվաճված հռչակեց միայն 34 թ., երբ ձերբակալեց Արտավազդին և պարտության մատնեց նորընտիր Թագավորին՝ Արտաշեսին:

Գ. Սարգսյանը գրում է նաև, որ «Նա (Արտավազդը) հենց սկզբից հակված պիտի լիներ հարմար պահին ի սպառ լքելու իրեն պարտադրված այս ձեռնարկությունը» (ՀԺՊ 1, 618): Եթե մար Արտավազդը հայ Արտավազդի թշնամին էր (իսկ մենք հիմքեր չունենք չհավատալու այդ մասին Դիոն Կասսիոսի վերը մեջբերված վկայությանը, XLIX. 25,1), և այդ պահին պարթևները պաշտպանում էին մարերին, ապա Մարաստանի դեմ ուղղված հռոմեական արշավանքը ըխում էր նաև Հայաստանի շահերից: Պլուտարքոսն այս մասին ասում է. «Այդ անսպասելի անհաջողությունը հենց սկզբում, հասկանալի է, սաստիկ հուսալքեց Անտոնիոսին և նրա մարդկանց, իսկ Հայաստանի արքա Արտաբազը հռոմեացիների գործը

Համարեց տանուլ տված և, հավաքելով բոլոր յուրայիններին, հեռացավ, թեև պատերազմի գլխավոր մեղավորը հենց ինքն էր» (Plut. Ant. XXXIX): Հիշենք նաև Դիոնի Հետևյալ խոսքերը, որոնք վերաբերում են արդեն մ.թ.ա. 35 թ. դեպքերին. «Միաժամանակ նա (մար Արտավազդը) կամենում էր (Արտավազդ) Արմենին պատժել հռոմայեցիներին (իր երկրի դեմ) բերած լինելու համար» (Dio XLIX. 33,1): Արտավազդի կողմից պատերազմից խուսափելը կարելի է բացատրել, հավանաբար, այն հանգամանքով, որ նա արչավանքի ընթացքում հասկացել էր Անտոնիոսի ձեռնարկման անհեռանկարությունը և կանխատեսելով արչավանքի անհաջող ելքը չէր ցանկացել ավելի ևս սրել իր հարաբերությունները Ատրպատականի և Պարթևաստանի հետ, որոնց դեմ հանդիման Հայաստանը մնալու էր միայնակ՝ պարտված հռոմեացիների նահանջից հետո:

Անտոնիոսի և Արտավազդի հարաբերությունների հետագա սրման հարցում շատ կարևոր են Արտավազդի և Օկտավիանոսի միջև բարեկամական կապերի մասին Դիոն Կասսիոսի ակնարկները. «... այսուհանդերձ (Օկտավիանոս) Կեսարին հաջողվեց այն, որ հայոց թագավորին վերաբերող գրվածքներից ոչինչ չհրապարակվի. քանզի սրան կարեկցում էր, քանի որ գաղտնարար կապեր էր հաստատել նրա հետ Անտոնիոսի դեմ և միաժամանակ նախանձում էր Անտոնիոսին նրա հաղթահանդեսի համար» (Dio XLIX. 41,5): Այս հատվածը վերաբերում է մ.թ.ա. 32 թ. դեպքերին<sup>22</sup>, երբ Արտավազդն Ալեքսանդրիայում գերի էր պահվում: Ուշագրավ է մյուս վկայությունը. «(Օկտավիանոս) Կեսարը մեղադրում էր (Անտոնիոսին) այն բանի համար, որ վերջինս... Արմեն (Արտավազդին) խաբելով, ձերբակալելով ու շղթայելով, մեծապես վարկարեկել էր հռոմեական ժողովրդի հեղինակությունը» (Dio L. 1,4): Պլուտարքոսը նույնպես Անտոնիոսին մեղադրում է երդմնադանցություն մեջ, որ «Անտոնիոսը ուխտադրժորեն գերի վերցրեց Արտարազդին»: Այնուհետև փորձելով մեղմել նրա այս հան-

<sup>22</sup> Այստեղ Դիոնը հիշատակում է մ.թ.ա. 32 թ. կոնսուլներ Դոմիտիոսի և Սոսիոսի անունները:

ցանքը, գրում է. «Բայց Անտոնիոսը, իր համար որպես արդարացում, կարող է վկայակոչել Արտավազի դավաճանությունը, որն իրեն լքել էր մարական հողում...» (Plut. Ant. XCII (V)): Տակիտոսն ավելի խիստ է իր ձևակերպումներում. «(Հայաստանը) այդ ժամանակ թագավոր չուներ և գտնվելով պարթևների ու հռոմեացիների հզոր երկրների միջև, մեր նկատմամբ անհավատարիմ էր Անտոնիոսի անպատիվ արարքի պատճառով, որը Արտավազդին, հայերի թագավորին, բարեկամության դիմակի տակ իր մոտ էր կանչել, իսկ հետո շղթայել էր և, ի վերջո, մահվան էր մատնել» (Tacit. Ann. II,3):

Ե՞րբ էր սկսվել Օկտավիանոսի և Արտավազդի գաղտնի կապը: Արդյո՞ք այն հաստատվել էր, երբ Արտավազդը գերության մեջ էր, թե՞ ավելի վաղ՝ 36-34 թթ. ընթացքում: Առաջին դեպքում պետք է ենթադրել, որ գերության մեջ գտնվող Արտավազդն ինչ-որ հնարավորություն կարողացել է գտնել Օկտավիանոսի հետ կապ հաստատելու համար: Սակայն, առավել հավանական է թվում, որ այդ կապը երկուսի միջև հաստատվել է Ատրպատականում Անտոնիոսի պարտությունից հետո և որ այն այնքան էլ գաղտնի չի եղել, մասնավորապես, Անտոնիոսի համար<sup>23</sup>:

Պատմաբանները վաղուց արդեն նկատել են, որ Արտավազդի դավաճանության հարցը ուռճացվում էր Անտոնիոսի պարտությունը ինչ-որ ձևով արդարացնելու համար: Դժվար թե Օկտավիանոսը կարեկցեր մեկին, որն իրոք դավաճանած լիներ հռոմին<sup>24</sup>: Այդ է ցույց տալիս նրա վերա-

<sup>23</sup> Այս կապակցությամբ Ն. Դիրվոյսը գրում է. «The fact that Octavian had attempted to enlist the aid of Artavasdes (Dio Cass. XLIX, 41.5, possibly also Vergil Georg. IV.560) may have provoked Antony's action. The Armenians, who know nothing of this intrigue, found in the seizure of their king a permanent grievance against Rome (Tac. Ann. II.3)», DEBEVOISE 1938, p. 134.

<sup>24</sup> Կարևոր է Հ. Մանանդյանի այն դիտողությունը, որ «եթե Արտավազդը հռոմեացիներին դավաճանած լիներ՝ նա, անշուշտ, կալանավորվելուց հետո իսկույն մահվան կղատապարտվեր, ինչպես Կապադոկիայի Արիարաթ թագավորը, որին Անտոնիոսը ...

բերմունքը Արտաշեսի նկատմամբ: Օկտավիանոսը մերժեց իր պատանդ եղբայրներին վերադարձնելու Արտաշեսի խնդրանքը, պատճառաբանելով, որ նա սպանել էր Հայաստանում թողնված հռոմեացիներին (Dio XLI. 16,2), բայց և Արտավազդ Մեղացուն վերադարձրեց նրա Յոտապե դստերը, որին որպես կին իր Ալեքսանդր որդու համար տարել էր Անտոնիոսը, քանի որ Մեղացին հայ-պարթևական ուժերի կողմից պարտվելուց հետո ապաստան էր փնտրել Օկտավիանոսի մոտ (Idem.): Այս դեպքում Օկտավիանոսն անտեսեց, որ Արտավազդ Մեղացին և Անտոնիոսը պայմանավորվել էին «իրար օգնել մեկը՝ պարթևների դեմ, իսկ մյուսը՝ (Օկտավիանոս) կեսարի դեմ», և իրար փոխադարձաբար որոշ թվով ղինվորներ էին տվել (Dio XLIX. 44,2), ու ընդառաջեց նրան:

Մ.թ.ա. 34 թվականին Անտոնիոսը խաբեությամբ ձերբակալում է Արտավազդին և, որպես պատանդ պահելով, նրա հետ այցելում է Հայաստանի ամրոց-գանձատները՝ որոնցից մի քանիսը հիշատակում է Ստրաբոնը (Strabo XI. 14, 6), արքայի համար փրկագին պահանջելով (Dio XLIX. 39, 5):<sup>25</sup> «Գանձերի

մահապատժի էր ենթարկել դավաճանության համար 37/6 թվի ձմեռը» (ՄԱՆԱՆԴՅԱՆ 1977, էջ 272, 257, տե՛ս Dio, XLIX, 32,3): Դավաճանության և իր երկրում եղած հռոմեական կայազորներին ոչնչացնելու համար Անտոնիոսը 38 թ. դաժան պատժի ենթարկեց հրեաների արքա Անտիոգոսին, որին «խաչին կապելով, մտրակահարեց - (պատիժ), որին ոչ մի այլ թագավոր չէր ենթարկվել հռոմայեցիների կողմից - և դրանից հետո սպանեց նրան» (Dio, XLIX, 22,3,6): 39 թ. Սիրիայից և Պաղեստինից պարթևներին հետ մղելուց հետո, Անտոնիոսի զորահրամանատար Վենտիլիոսը «չատ դրամ գանձեց նաև (հրեաների արքա) Անտիոգոսից, (կոմմագենացիների արքա) Անտիոքոսից և Մալքոս Նաբատեացուց այն պատճառով, որ նրանք օգնել էին Պակորոսին» (Dio, XLVIII, 41,5):

<sup>25</sup> «Եվ այստեղ ձերբակալելով նրան, սկզբում պահում էր առանց կապանքների և շրջագայում նրա հետ այն ամրոցները, որտեղ գտնվում էին գանձերը, որպեսզի կարողանա դրանք ստանալ առանց պատերազմի, արդարանալով, որ իբր նրան ձերբակալել է միայն այն պատճառով, որպեսզի հայերին հարկազրի տուրք վճարել նրա անձի և նրա թագավորության փրկության համար» (Dion, XLIX, 39. 5): Դիոնի շարադրանքից այնքան էլ պարզ չէ, թե ո՞ւմ առջև էր արդարանում Անտոնիոսը՝ հայերի՞, թե՞ այն հռոմեացիների, որոնք,

պահապանները» և «ղենք կրողները» մերժում են գործարքը (Dio XLIX. 39, 6) և թագավոր են ընտրում Արտավազդի ավագ որդուն՝ Արտաշեսին, որն այդ իրադարձությունների ժամանակ կարողացել էր փախչել (Joseph. Ant. XV, 104-105):<sup>26</sup> Երբ առանց պատերազմի արքունական գանձերին տիրանալու Անտոնիոսի հույսը չարդարացավ և հայերն իրենց արքայից հրաժարվելու գնով որոշեցին նոր արքա ընտրել ու պաշտպանել իրենց, Անտոնիոսը ղենքի ուժով տիրանում է Հայաստանին, ոմանց հոժարակամ, ուրիշներին բռնությամբ նվաճելով (Dio XLIX. 40, 1): Արտաշեսը նրա դեմ պատերազմ է սկսում, բայց պարտվում է ու փախչում Պարթևաստանի թագավոր Հրահատի մոտ (Dio XLIX. 40, 1): Այս ամենից հետո Անտոնիոսը իր Ալեքսանդր որդուն նշանում է Յոտապեի՝ 35 թվականից իր դաշնակիցը և հայ Արտավազդի ու պարթև Հրահատի թշնամին դարձած Ատրպատականի Արտավազդ արքայի դստեր հետ և, լեզեոն-

գուցե արդեն Հայաստանում, համաձայն չեն եղել նրա արարքի հետ: Իսկ գուցե այս խոսքերն արտացոլում են Անտոնիոսի դեմ Հռոմում տարածված մեղադրանքը՝ Հռոմեացուն անվայել դավաճանական արարքի համար: Հմմ. Dion, L, 1.4, Tacit. II,3, Plut., XCII (V):

<sup>26</sup> «Իսկ երբ գանձերի պահապանները ուշադրություն չդարձրին նրան և ղենք կրողներն էլ (Արտավազդի) փոխարեն թագավոր ընտրեցին նրա որդիներից ավագագույնին՝ Արտաշեսին...» (Dion, XLIX, 39. 6): «Ուշադրություն չդարձրին նրան» արտահայտությունը կարելի է հասկանալ երկակի՝ «ուշադրություն չդարձրին Անտոնիոսին» կամ «ուշադրություն չդարձրին Արտավազդին»: Կոնտեքստից ելնելով, այս խոսքերը, ըստիս, պետք է հասկանալ հետևյալ կերպ. «պահապանները» և «ղենք կրողները» ուշադրություն չդարձրին ո՛չ միայն Անտոնիոսին, այլև նրա հետ հարկադրաբար շրջագայող Անրտավազդին և, փաստորեն, իրենց թագավորից հրաժարվելով, ընտրեցին Արտաշեսին: Այժմ մեզ համար դժվար է դատել, թե նրանք համոզված էին, որ պետության գանձերը հանձնելով որպես փրկագին, իրենք, միևնույն է, հետ չեն ստանա իրենց արքային, թե՞ նախընտրեցին արքային ղոհելու գնով պահպանել պետության ունեցվածքը, կամ, ի վերջո, գուցե կարծում էին, թե նորընտիր արքան կարող է ազատել ձերբակալված հորը, երկրից դուրս քշել Հռոմեական լեզեոնները ու, միևնույն ժամանակ, պահպանել պետական գանձարանը: Իհարկե, եղավ այն, ինչ եղավ, բայց Դիոնի խոսքերը ակնարկում են մի բարդ իրադրություն մասին, որի մանրամասներն այդպես էլ հասու չեն լինելու մեզ:

ները Հայաստանում թողնելով, վերադառնում է Եգիպտոս, իր հետ տանելով Արտավազդին՝ կնոջ, որդիների (Dio XLIX. 40, 3 և ուրիշներ) և նրա սատրապների հետ միասին (Joseph. Ant. XV, 104):

33 թվականին, իբր պարթևների դեմ արշավելու համար, Անտոնիոսի բանակը Հայաստանով շարժվում է մինչև Արաքս գետը (Dio XLIX. 44, 1-3), որը Հայաստանի և Ատրպատականի սահմանն էր (Plat. Ant. XLIX, 2): Արշավանքը չի իրագործվում, նա բավարարվում է միայն Ատրպատականի արքա Արտավազդի հետ համաձայնություն կնքելով, ըստ որի՝ ա) պայմանավորվում են իրար օգնել, մեկը պարթևների դեմ, մյուսը՝ Օկտավիանոս Կեսարի դեմ, և այդ առնչությամբ իրար որոշ թվով զինվորներ են տալիս, բ) մար Արտավազդը ստանում է Անտոնիոսի կողմից նորանվան Հայաստանից որոշ մասեր, գ) Անտոնիոսը տանում է նրա Յոտապե դատերը իր որդի Ալեքսանդրի հետ ամուսնացնելու համար, դ) Արտավազդը Անտոնիոսին է հանձնում 36 թվականին Ստատիանոսի դեմ ճակատամարտում զրաված զինվորական զրոշները: Բացի այդ, Անտոնիոսը Փոքր Հայքը Հայաստանից անջատելով, պարզեում է Պոնտոսի արքա Պուլմոնին, որը միջնորդել էր իր և Ատրպատականի Արտավազդի միջև հարաբերություններ հաստատելու հարցում: Պ. Լուկիոս Փլավիոսին, որը 33 թվականին<sup>27</sup> ընտրվել էր հավելյալ կոնսուլ և Անտոնիոսի հետ գտնվում էր Հայաստանում, թողնում է այստեղ իրրև կառավարիչ, իսկ ինքը 33/2 թվականի ձմռանը շտապում է Հոնիա և Հունաստան՝ Օկտավիանոսի դեմ պատերազմելու (Dio XLIX. 44, 3-4):

32 թվականին մար Արտավազդը, օգտվելով դաշնակից հռոմեացիների ներկայությունից, հաղթում է իր վրա հարձակում գործած պարթևներին և Արտաշեսին, որը ցանկանում էր իր տոհմական իշխանությունը հաստատել Հայաստանում (Dio XLIX. 44, 4):

<sup>27</sup> БИКЕРМАН 1975, с. 223.

31 Թվականին, Օկտավիանոսի դեմ ճակատամարտի պատրաստվելիս, Անտոնիոսը հետ է կանչում մար Արտավազդին որպես օգնություն հանձնած ու նաև Հայաստանում թողած իր զորքերը, որի հետևանքով Մեդաքին պարտվելով, ապաստան է խնդրում Անտոնիոսի հակառակորդի՝ Օկտավիանոսի մոտ, իսկ Արտաշեսը, պարթևների օժանդակությամբ, հաստատվում է Հայաստանում (Dio XLIX. 44, 4): Հռոմը միաժամանակ կորցնում է և՛ Հայաստանը, և՛ Մարաստանը, որը կա՛մ ամբողջությամբ, կա՛մ մասամբ ենթարկվում է Արտաշեսին: Հավանաբար նույն թվականին Արտաշեսը սպանել է տալիս Հայաստանում մնացած հռոմեացիներին (Dio LI. 16, 2):

31 թվականի վերջին կամ ավելի ուշ, Արտաշեսը դիմում է Օկտավիանոս Կեսարին, նրանից խնդրելով վերադարձնել Հռոմում որպես պատանդ պահվող իր եղբայրներին: Կեսարը մերժում է բավարարել խնդրանքը, այն սլատճառաբանելով հռոմեացիների կոտորածով (Dio LI. 16, 2)<sup>28</sup>:

<sup>28</sup> 31/0 թ. է թվագրվում Արտաշես II-ի մեզ հայտնի երկու բրոնզե թողարկումներից առնվազն մեկը, որի վրա նշված է թողարկման տարեթիվը ըստ պոմպեոսյան տոմարի. այս մասին տե՛ս ՎԱՐԴԱՆՅԱՆ 2000 կամ VARDANYAN 2001.

## 2. ԱՐՏԱՎԱԶԴ Ի-Ի ԴՐԱՄՆԵՐԸ

Աշխատութեան մեջ օգտագործվել են այն դրամները, որոնք Հայտնի են Հրատարակութեաններից, որոնք պահվում են ՀՊԹ դրամագիտութեան բաժնում և որոնք տրամադրվել են Հավաքորդների կողմից<sup>29</sup>:

Ստորև ներկայացվող ցուցակներում խմբավորված են նախ՝ Արտավազդ II-ի «արքա» տիտղոսով պղնձե թողարկումը, ապա՝ դրախմանները և մյուս պղնձե թողարկումները, և վերջում՝ տետրադրախմանները: Ընտրվեց այս կարգը, քանի որ այն, ընդհանուր առմամբ, արտացոլում է նաև Արտավազդի դրամաթողարկման ժամանակագրական Հաջորդականությունը:

Յուրաքանչյուր խմբի ներսում՝ դրամները դասավորված են ըստ կշիռների նվազման կարգի: Սա դասակարգման լավագույն ձևը չէ, ավելի լավ կլիներ դրամները խմբավորել ըստ դիմերեսի պատկերագրութեան մանրամասներում նկատվող տարբերությունների: Սակայն, Հատկապես պղնձե դրամներում, այդպիսի դասակարգման փորձը կլիներ թերի՝ դրամների մեծ մասի վատ պահպանվածութեան պատճառով, մանավանդ որ դրամների մի մասն ինձ ծանոթ է երբեմն ոչ այնքան որակյալ լուսանկարներից:

<sup>29</sup> Այս կապակցութեամբ խորին երախտագիտութեանս եմ Հայտնում Եղիա Ներսեսյանին, Անդրանիկ Այվազյանին, Հակոբ Մկրտչյանին, Կարեն Վարդանյանին:

2.1 Պղնձե վաղագույն թողարկումը  
(ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΑΡΤΑΥΑ[ΖΔΟΥ])

Աղյուսակ 1

Դիմ. Արտավազդի կիսանդրին աջ, երիտասարդ դիմագծերով: Թագը հինգ սրածայր ելուստներով, վղկալով և ականջակալով (ինչպես հոր՝ Տիգրանի թագը): Թագը դարձաբարդ խորհրդանշանները հստակ չեն (աստղ երկու արծիվների միջև): Գլխի հետևում A տառը:

Դարձ. Նոճի: Գրությունը. աջից՝ ΒΑΣΙΛΕΩ[Σ] ↓, ձախից՝ ΑΡΤΑΥΑ ↓: Ներքևում Α (α) տառը: Կետավոր շրջանակ:

1.1.\* կշ. 2.76 գ տրամ. 14.0 մմ առանցք. 11 ժամ

Ա. Այվաղյանի ժողովածու:

2.2 Դրախմաները (ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ)<sup>30</sup>

Աղյուսակ 2

Արծաթ

Դիմ. Արտավազդի կիսանդրին աջ, երիտասարդ դիմագծերով: Թագը հինգ սրածայր ելուստներով, վղկալով և վեր բարձրացված ու թագի ճակատային մասում ամրացված ականջակալներով: Թագի կենտրոնական մասում, քառանկյան մեջ՝ աստղ երկու արծիվների միջև: Երևում են ապարոչի

<sup>30</sup> Չափազիտական տվյալները՝ կշիռը, տրամագիծը, տրված են այնպես, ինչպես դրանք կան հրատարակություններում: Երբեմն նույն դրամի վերաբերյալ կան տարբեր տվյալներ (ցուցակում տալիս են ենթադրաբար վստահելի կշիռը, իսկ տարբերվող տվյալը հիշատակում են ծանոթագրության մեջ), երբեմն դրանք տրված են լինում կլորացված թվերով, մի շարք դեպքերում կա միայն կշիռը, առանց տրամագծի չափի և կնիքների առանցքների հարաբերության մասին նշումների: Ուստի գրականությունից վերցված տվյալներն, այս տեսակետից, ոչ միշտ են լրիվ ու անսխալ:

ժապավենները, ականջը և նրանից կախված օղը, եռագալար մանյակը պարանոցին, արքայական ծիրանու վերին մասը: Դիմապատկերը երիզում է ուլունքաձև շրջանակը:

Դարձ. Քառաձի մարտակառք արչավելիս, դեպի ձախ: Կառապանը երկար զգեստով, ճառագայթավոր թագով, ձախ ձեռքով բռնել է ձիերի սանձը, իսկ աջ ձեռքում՝ Նիկեն է, որը պսակ է դնում նրա գլխին: Ձիերի դիմաց  $\text{⌘}$  մենագիրը, Նիկեից ձախ  $\zeta$  (ստիգմա) կամ Z (ձևտա) տառերը: Գրությունը վերևում ΒΑΣΙΛΕΩΣ →, ներքևում ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ →:

Կշիռը տրամ. առանցք. տարին

2.1.\*<sup>31</sup> 4.04 գ 8.3 մմ 1 ժ.  $\zeta$  (= 6)

ՀՊԹ, 17824/54 (Սառնակունքի դանձ) = ՄՈՒՇԵՂՅԱՆ 1964, աղ. II, 3 = ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973, էջ 81, թիվ 130 = ՄՈՒՇԵՂՅԱՆ 1983, մեծացված լուսանկարը = MOUSHEGHIAN, MOUSHEGHIAN & DEPEYROT 2000, no. 130 = NERCESSIAN 2003, a1-p2a:

2.2.\* 4.04 գ 19.8 մմ 12 ժ.  $\zeta$

ՀՊԹ, 16022 (Սառնակունքի դանձ) = ՄՈՒՇԵՂՅԱՆ 1964, աղ. II, 2 = ՀԺՊ 1 1971, էջ 605 = ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973, էջ 81, թիվ 129 = ТИРАЦЯН 1973, p. 51, рис. 4, 2 = АРАКЕЛЯН 1976, тб. LXXVI = ТИРАЦЯН 1976 (ՀՍՀ), էջ 144 = ՄՈՒՇԵՂՅԱՆ 1983, էջ 56, թիվ 46, աղ. 74 = MOUSHEGHIAN, MOUSHEGHIAN & DEPEYROT 2000, no. 129 = NERCESSIAN 2003, a1-p1a:

2.3. 3.96 գ  $\zeta$

Հիշատակված է BEDOUKIAN 1978, no. 130-ի տակ, Մյունցկաբինետ, Բեռլինի թանգարան, լուսանկարը տրված է:<sup>32</sup>

2.4.\* 3.86 գ 20 մմ 12 ժ.  $\zeta$

<sup>31</sup> Աստղանիշով նշված են այն դրամները, որոնց լուսանկարները կան տախտակներում:

<sup>32</sup> Այս դրամի, ինչպես նաև Բեռլինի Մյունցկաբինետում երկու այլ դրամների (տե՛ս 2.11 և 2.12) գոյություն մասին Հիշատակող միակ սկզբնաղբյուրը Ջ. Պտուկյանն է: Դրամների տվյալները ճշտելու և դրանց լուսանկարները Բեռլինի Մյունցկաբինետից ձեռք բերելու մեր փորձերը, ցավոք, Հաջողություն չունեցան:

NFA V, 1978, no. 213 (NERCESSIAN 1995, p. 196, note 16) = NERCESSIAN 1995, no. 124, Y. Nercessian coll. = NERCESSIAN 2003, Y. Nercessian coll., a1-p5a:

2.5. \* 3.85 գ 20 մմ Տ

Naville 10, 15 June 1925, no. 1573 (3.85 g, 20 mm) = Leu & NFA, 16 Oct. 1984, no. 286 = CNG 51, 1999, no. 761 (3.85 gm) = NERCESSIAN 2003, a1-p3a.

2.6.\* 3.82 գ 12 ժ. Տ

Lanz 44, 16 May 1988, no. 254 = MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, p. 221, no. 113 = NERCESSIAN 2003, a1-p4a.

2.7.\* 3.79 գ 17 մմ 12 ժ. Տ

ՊՏՈՒԿՅԱՆ 1968, էջ 348, թիվ 23 (3.78 գ), Զ. Պտուկյանի ժող. = BEDOUKIAN 1978, no. 130 = NERCESSIAN 2003, a2-p7a (3.792 g, 17 mm, 12 h):

2.8.\* 3.77 գ 6 ժ. Տ

Egger, 28 Nov. 1904, Prowe Coll., no. 1521 (3.76 g) = BEDOUKIAN 1978, no. 130 (3.80 g) = Numismatic Collection N. K., 27 oct. 1992, no. 858 = NERCESSIAN 2003, a2-p6a (3.77 g) <sup>33</sup>:

2.9.\* 3.70 գ 17 մմ Տ

Hirsh 25, 29 Nov. 1909, no. 3119 (3.73 g, 17 mm) = BEDOUKIAN 1978, no. 130, Վիեննայի Մխիթարյանների թանգարան, լուսանկարը տրված է = NERCESSIAN 2003, a3-p8a (3.70 g):

2.10. 3.69 գ Տ

Այս դրամի մասին ՄՈՒՇԵՂՅԱՆ 1964, էջ 322, ծան. 24 նշված է. «Гос. Эрмитаж, отдел нумизматики, рукописный каталог античных монет ном. 19417», լուսանկարը տրված է: Հիշատակված է BEDOUKIAN 1978, no. 130-ի տակ, Պետական էրմիտաժ, Սանկտ-Պետերբուրգ:

2.11. 3.59 գ Տ

<sup>33</sup> SEYRIG 1955, p. 128, note 69, հիշատակված է մի դրամա Տ (ստիգմա) տառով, հղված՝ Catalogue Ars Classica, X, 1573 (anc. coll. Th. Prowe), որն, ըստ երևույթին, այս դրամն է (հմմ. NERCESSIAN 2003, a2-p6a):

Հիշատակված է BEDOUKIAN 1978, no. 130-ի տակ, Մյունցկա-  
բինտ, Բեռլինի Թանգարան, լուսանկարը տրված է:

2.12. 3.46 գ Տ

Հիշատակված է BEDOUKIAN 1978, no. 130-ի տակ, Մյունցկա-  
բինտ, Բեռլինի Թանգարան, լուսանկարը տրված է:

2.13.\* 3.78 գ 20 մմ Z (= 7)

CNG 36, 1995, Araratian Coll., no. 608, արծաթապատ դրամ,  
որի արծաթյա շերտը շատ տեղերում պոկված է = NERCESSIAN 2003,  
a5-p10a:

2.14.\* 3.63 գ 17 մմ Z

BMC Galatia, no. 101,1, Pl. XIV, 2 = BEDOUKIAN 1978, no. 131 =  
NERCESSIAN 2003, a4-p9a, տե՛ս նաև MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, p.  
221, no. 114, որտեղ կշիռը տրված է 3.66 գ, Բրիտանական Թանգա-  
րան:<sup>34</sup>

2.1 և 2.2-ի, ինչպես նաև 2.4 և 2.6-ի դիմերեսները  
Թողարկված են նույն կնիքներով:

2.4, 2.7 և 2.9-ի դարձերեսները միմյանց նման են հետևյալ  
մանրամասնություններով. կառապանի գլուխը և ΒΑΣΙΛΕΩΣ բա-  
ռը նույն հորիզոնականի վրա են, իսկ ΒΑΣΙΛΕΩΝ-ի N տառը  
«մխրճված» է կառքի անվի մեջ: Տեղի սղության պատճառով  
Նիկեն պատկերված է խիստ պայմանական և գրեթե անճանա-  
չելի է: Գրության մեջ սիգմա տառը ավելի շուտ ունի Γ քան Σ  
ձևը:

2.1 և 2.2, 2.6 և 2.8, ինչպես նաև 2.14-ի դարձերեսները  
միմյանց նման են նրանով, որ կառապանի գլուխը  
ΒΑΣΙΛΕΩΣ բառից ցած է գտնվում:

2.13-ը արքայի դիմապատկերի և դարձերեսի կատարման  
առանձնահատկություններով տարբերվում է մյուսներից:  
Գրության մեջ բառերի վերջին տառերը բացակայում են.  
ΒΑΣΙΛΕΩ Β[.]ΑΣΙΛΕ ΑΡ[Τ]ΑΥΑ:

<sup>34</sup> MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, p. 221, no. 114-ի տակ Հիշատակ-  
ված է ևս մի դրախմա, 2.85 գ կշռով, իբր Ե. Ներսեսյանի ժողովածու-  
ից: Այս տեղեկությունը ճիշտ է:

2.3 Դարձերեսին նոճու պատկերով պղնձե թողարկումները  
(ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ)

Աղյուսակ 3 - 4

Դիմ. Արտավազդի կիսանդրին աջ, Հասուն տղամարդու դիմագծերով: Թագը Հինգ սրածայր ելուստներով, կենտրոնում՝ աստղ երկու արծիվների միջև<sup>36</sup>: Երևում է միայն վզկալը, ապարոշի ժապավենները: Գլխի Հետևում՝ Α տառը:

Դարձ. Նոճի: Գուլթյունը ձախից՝ ΒΑΣΙΛΕΩΣ ↑, աջից՝ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ ↑<sup>36</sup>:

	կշիռը	տրամ.	առանցք.
3.1.*	8.17 գ	24 մմ	

ΒΑΣ[..... / ΒΑΣΙΛΕΩ[. ΑΡΤΑΥΑ[.....

CNG 36, 1995, no. 614 = NERCESSIAN & SARYAN 1996, no. 137, Araratian Collection<sup>37</sup>: Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ:

3.2.*	6.99 գ	22.0 մմ	11 ժ.
-------	--------	---------	-------

..]ΣΙΛΕΩ[. / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ

Ա. Այվադյանի ժողովածու:

<sup>35</sup> Տիգրանի II-ի նոճու պատկերով պղինձներում արքայի թագը կրում է Հետևյալ խորհրդանշանները. արքայի գլխի Հետևում Α տառը չունեցող թողարկումներում թագը զարդարված է կա՛մ գիսավորով, կա՛մ միայնակ ութաթև աստղով. գլխի Հետևում Α տառն ունեցող թողարկումներում թագը զարդարված է աստղ-երկու արծիվներով կամ Π-աձև կետավոր շրջանակի մեջ ամփոփված անորոշ մի խորհրդանշանով (ա՞ստղ):

<sup>36</sup> Ե. Ներսեսյանը «նոճի» տիպից (նաև՝ «նիզակի ծայր», «Հասկ» մեկնաբանություններով) հիշատակում է 12 դրամ, տե՛ս NERCESSIAN 1995, p. 77, no. 132:

<sup>37</sup> «Արարատյան» ժողովածու անվան տակ CNG 36-ում 1995 թ. վաճառքի էր ներկայացվել մի Հավաքորդի կողմից ավելի քան քառասուն տարիների ընթացքում Հավաքված ժողովածուն (390 դրամ), որի մեծ մասը կազմում են Արտաշեսյան և Ռուբենյան, ինչպես նաև Հայաստանի Հետ առնչվող երկրների դրամները:

3.3.\* 6.98 գ 22.8 մմ 11 ժ.

[...] / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΙ

Ա. Այվադյանի ժողովածու:

3.4.\* 6.97 գ

.....]ΩΣ / ΒΑΣΙΛΕΩ[. ΑΡΤΑΥΑΖΔ[..

*Münz zentrum, 11 September 1996, 102 = MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, p. 222, Pl. 7, 118.*

3.5.\* 6.87 գ 22 մմ

[.....] / ]ΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ

*CNG 36, 1995, no. 613 = NERCESSIAN & SARYAN 1996, no. 136, Araratian Coll. Վերաթողարկված Արադոսի դրամի վրա՝ Աստարտե-  
Եվրոպեի կիսանդրին աջ / սապատավոր ցուլ արչավելիս ձախ, մ.թ.ա.  
85/4 թ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 57, 45, undertype H; BMC  
Phoenicia, p. 40-41, no. 332):*

3.6.\* 6.81 գ

BA[...]ΕΩΣ / .]ΑΣ[..... .]ΡΤΑ[.....

*Spink 102, 1994, no. 191, դարձերեսի տիպը նկարագրված է  
որպես ցորենի հասկ: No. 192-ի տակ հիշատակված են ևս 7  
նույնատիպ դրամներ, որոնց կշռային տվյալները և լուսանկարները  
չեն տրված:*

3.7.\* 6.76 գ 19 մմ

.]ΑΣ[..... / .....]ΕΩΝ [.....]

*NERCESSIAN & SARYAN 1996, no. 135, Ե. Ներսեսյանի  
հավաքածու: Վերաթողարկված Արադոսի դրամի վրա՝ Տիխեի կիս-  
անդրին աջ / Պոսեյդոնը նավաքթին նստած ձախ, մ.թ.ա. 134-129 թթ.  
(NERCESSIAN & SARYAN 1996, p. 57, 45, undertype F; BMC Phoenicia, p.  
37, nno. 300-306).*

3.8.\* 6.46 գ 21 մմ

.]ΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ

*CNG 46, 1998, no. 691 (6.46 g, 21 mm). Վերաթողարկված  
անորոշ տիպի դրամի վրա:*

3.9.\* 5.79 գ 19 մմ

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑ[....

*CNG 36, 1995, no. 616 = NERCESSIAN & SARYAN 1996, no. 138*

(տե՛ս նաև MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, p. 222, no. 118.), Araratian Coll. 3 CNG 36, p. 58-ում այս դրամի դարձերեսի տիպը նկարագրված է որպես «Հասկ», NERCESSIAN & SARYAN 1996, p. 57-ում՝ որպես «նոնի»: Վերաթողարկում (?):

3.10.\* 5.56 գ 22 մմ

BAΣ[..... / [..... ..]

BEDOUKIAN 1978, no. 135 = NERCESSIAN & SARYAN 1996, no. 139,

Զ. Պատուկյանի ժողովածու: Վերաթողարկված անորոշ դրամի վրա:

3.11.\* 5.42 գ 22.6 մմ 12 ժ.

BA[.]ΛĒ[. / ΒΑΣΙΛΕ[. ΑΡΤΑΥΑΖ[...

ՀՊԹ, 19459/3, նվեր Թ. Պետյանից (Սիրիա), 1986 թ.: Վերաթողարկված անորոշ դրամի վրա (Հետքերը երևում են դարձերեսի ձախ դաշտում):

3.12.\* 5.40 գ 20 մմ

Գրուժյունն անընթեռնելի

NERCESSIAN & SARYAN 1996, no. 134, L. Սարյանի Հավաքածու: Վերաթողարկված Անտիոքի դրամի վրա՝ Ջևի գլուխը աջ / Ջևար նստած ձախ, մ.թ.ա. 92-87 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 57, 44, undertype A; BMC Galatia, Cappadocia, and Syria, p. 153, no. 12)3

3.13.\* 4.68 գ 18.6 մմ 12 ժ.

ΒΑΣΙΛΕ[. / ΒΑΣΙ[.... ΑΡΤΑ[.....

ՀՊԹ, 19517/2, նվեր Վ. Մոմջյանից (Սիրիա), 1983 թ.:

3.14.\* 4.66 գ

ΒΑΣΙ[.]ΕΩ[. / ...]ΛΕΩΝ [.....]

Peus 340, Sammlung Nicolas V. Jamgochian, 1994, no. 458 = MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, p. 222, no. 118, որտեղ կշիռը սխալմամբ տրված է 4.46 գ:

3.15.\* 4.34 գ 17 մմ

.]ΑΣΙΛΕ[. / ΒΑΣΙ[.... [.....]

CNG 46, 1998, no. 690 (4.34 g, 17 mm). Վերաթողարկում:

3.16.\* 4.31 գ 18 մմ

B[..... / ΒΑΣΙΛΕ[. [.....]

NERCESSIAN 1995 no. 132, Մ. Արզարյանցի Հավաքածու = NERCESSIAN, Y.T., Auction III, Armenian Coin Collection of Dr. M.

*Abgarians*, 2 June 1998, no. 34 (4.31 g, 18 mm): Վերաթողարկում:

3.17.\* 4.20 գ 18 մմ 12 ժ.

ΒΑΣ[..... / ΒΑΣΙΛΕ[... ]ΡΤΑ[.....

Ե. Ներսեսյանի ժողովածու (ԱՄՆ):

3.18.\* 3.70 գ 16 մմ

.....]ΕΩΣ / ...]ΙΛΕ[... ΑΡΤΑΥ[.....

Ա. Այվադյանի ժողովածու:

3.19.\* 3.45 գ 17 մմ 12 ժ.

Գրությունն անընթեռնելի

Ե. Ներսեսյանի ժողովածու (ԱՄՆ): Վերաթողարկում (?):

3.20.\* 2.92 գ 17 մմ

Գրությունն անընթեռնելի

*CNG 36*, 1995, no. 615 = *NERCESSIAN & SARYAN 1996*, no. 140, *Araratian Coll. 3*: *CNG 36*, p. 58-ում այս դրամի դարձերեսի տիպը նկարագրված է որպես «Հասկ», *NERCESSIAN & SARYAN 1996*, p. 57-ում՝ որպես «նոճի»: Վերաթողարկված, ըստ *CNG 36*-ի՝ Արադոսի թողարկման անորոշ տիպի դրամի վրա, ըստ *NERCESSIAN & SARYAN 1996*-ի՝ նախկին տիպն անորոշ է:

#### 2.4 Դարձերեսին Նիկեի պատկերով պղնձե թողարկումները (ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ)

##### Աղյուսակ 5 - 9

Դիմ. Արտավազդի կիսանդրին աջ: Թագը Հինգ սրածայր ելուստներով, կենտրոնում՝ աստղ երկու արծիվների միջև: Երևում է միայն վզկալը, ապարոշի ժապավենները, երբեմն՝ ականջօղը, մանյակը, կետավոր շրջանակը: Գլխի հետևում՝ Α տառը:

Դարձ. Նիկեն դեպի ձախ, երկար ղգեստով<sup>38</sup>, նեղ

<sup>38</sup> Նիկեն պատկերված է շարժման մեջ, թեթևակի ծածանվող քղանցքով կամ անշարժ դիրքում, առանց ծալքերի պատկերված

Թևերով<sup>39</sup>, աջ ձեռքն առաջ պարզած, հավանաբար պսակ բռնած<sup>40</sup>, ձախը իջեցված է կամ պատկերված չէ: Գրությունը աջից՝ ΒΑΣΙΛΕΩΣ ↓, ձախից՝ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ ↓<sup>41</sup>:

կշիռը տրամ. առանցք.  
4.1.\* 9.12 գ 22 մմ

ΒΑΣΙΛΕΩ[. / [..... ..]]

NERCESSIAN & SARYAN 1996, no. 122, դ. Մակդոնալդի հավաքածու: Վերաթողարկված Անտիոքի դրամի վրա՝ Ջևսի գլուխը աջ / Ջևար նստած ձախ, մ.թ.ա. 92-87 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 44, undertype A; BMC Galatia, Cappadocia, and Syria, p. 153, no. 12):

4.2.\* 8.98 գ 20 մմ

ΒΑΣΙΛΕΩΣ / .]ΑΣΙΑ[... [.....]]

Այս դրամը նկարագրված է՝ BABELON 1980, p. 215, Pl. XXIX, fig. 16 և Պտուկյան 1968, էջ 347-348, նկ. 24, ուր նշված է նաև, որ դրամի կշիռը 9 գրամ է և ծագում է Փարիզի ազգային գրադարանի հավաքածուից = MOUCHEGHIAN & DEPEYROT 1999, Pl. 7, 117/B: Հավանաբար այդ նույն դրամի մասին է հիշատակված BEDOUKIAN 1978 p. 70, no. 134-ի տակ, որը նույնպես ծագում է վերոհիշյալ հավաքածուից և կշռում է 8.98 գ, ուստի այստեղ ես տալիս եմ այս վերջին տվյալը: Վերաթողարկում (հետքերը երևում են դիմերեսի ձախ դաշտի եզրին) :

դգեստով:

<sup>39</sup> Նիկեի թևը մեծ մասամբ երկար է, հասնում է մինչև սրունքները և պատկերման ձևով տարբերվում է թե՛ Տիգրան Մեծի և թե՛ Հաջորդ արքաների դրամների Նիկեի թևերից: Կան քիչ թվով օրինակներ, որտեղ Նիկեի թևը կարճ է, գրեթե այնպիսին, ինչպիսին տեսնում ենք Տիգրան Մեծի որոշ դրամների վրա (BEDOUKIAN 1978, Pl. 6, 120):

<sup>40</sup> Պետք է նկատել, որ ինձ հայտնի ոչ մի օրինակի վրա, նույնիսկ լավ պահպանված, պսակը չի երևում: Պսակի գոյությունը ենթադրվում է ձեռքի առաջ պարզած դիրքից:

<sup>41</sup> Ընդունելով CNG 36, p. 58-ի ուղղումը, ըստ որի Արտավազդի թողարկումներում «արքան կանգնած դեպի ձախ» տիպը (BEDOUKIAN 1978, nos. 133, 134 և NERCESSIAN 1995, nos. 125, 126) գոյություն չունի և այն իրականում Նիկե տիպով վատ պահպանված օրինակներ են, ապա Ե.Ներսեսյանի կողմից հաշվառված Նիկեով դրամները 34-ն են (NERCESSIAN 1995, pp 76-77):

4.3.\* 8.78 գ.

]ΑΣΙΛΕΩ[. / ΒΑΣΙΛΕΩ[. ΑΡΤΑΥΑ[....  
CNG XXVII, 1993, no. 29 (8.78 g).

4.4.\* 8.28 գ 22 մմ

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩ[. ΑΡΤΑΥΑ[....  
NERCESSIAN & SARYAN 1996, no. 124, Ե. Ներսեսյանի Հավաքածու: Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ = ACB, *Bulletin 17* (1994), no. 54 (8.28 g, 22 mm):

4.5.\* 8.18 գ

[.....] / ΒΑΣ[.... [.....]

Ariadne Galleries, Ancient Coins, Mail Bid Auction, 15 September 1982, no. 123. Վերաթողարկված անորոշ տիպի դրամի վրա:

4.6.\* 8.16 գ 23 մմ

[.....] / ....]ΛΕΩΝ ....]ΥΑΖΔΟΥ

NERCESSIAN & SARYAN 1996, no. 118, Լ. Սարյանի Հավաքածու: Վերաթողարկված է Արադոսի դրամի վրա՝ Աստարտե-Եվրոպեի կիսանդրին աջ / սապատավոր ցուլ արչավելիս ձախ, մ.թ.ա. 87/6 թ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype H; BMC Phoenicia, p. 40, no. 329):

4.7.\* 7.72 գ 21.9 մմ 11 ժ.

ΒΑΣΙΛΕΩ[. / [..... ..]

ՀՊԹ, 19459/4, նվեր Թ. Պետյանից (Սիրիա), 1986 թ.: Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ (դարձերեսին կան Հադիվ նշմարելի հետքեր):

4.8.\* 7.71 գ 23 մմ

]ΑΣΙΛΕ[. / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔ[.

NERCESSIAN & SARYAN 1996, no. 120 = Spink 102, 1994, no. 188, Ե. Ներսեսյանի Հավաքածու: Վերաթողարկված Արադոսի դրամի վրա՝ Աստարտե-Եվրոպեի կիսանդրին աջ / անորոշ, մ.թ.ա. 94/3 (°) թ. թողարկված (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype H; BMC Phoenicia, p. 40, no. 325, Pl. V, 9): Spink 102, 1994, no. 188-ի տակ հիշատակված է 6 դրամ, բայց տրված է միայն մեկի լուսանկարը: Նույն տեղում no. 189-ի տակ հիշատակված է Արտավազդի ևս 6, իսկ no. 190-ի տակ՝ ևս 7 դրամ:

4.9.\* 7.55 գ 23 մմ

## .]ΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ

NERCESSIAN & SARYAN 1996, no. 123, վ. Ասատուրյանի  
Հավաքածու: Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ:

4.10.\* 6.92 գ 18 մմ

## ΒΑΣΙΛΕΩΣ / ..]ΣΙΛΕΩΝ [.....]

CNG 61, 2002, no. 896.

4.11.\* 6.86 գ 21 մմ

## .]ΑΣΙΛΕΩ[. / ....]ΛΕΩΝ ..]ΤΑΥΑΖΔΟ[.

NERCESSIAN & SARYAN 1996, no. 125 = NERCESSIAN 1995, no. 130,  
Մ. Աբգարյանցի Հավաքածու = NERCESSIAN, Y.T., Auction III,  
Armenian Coin Collection of Dr. M. Abgarians, 2 June 1998, no. 33 (6.86  
g, 23 mm): Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ:

4.12. 6.64 գ 20.5 մմ 12 ժ.

## ΒΑΣΙ[.... / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔ[..

eBay Auction, 2003.

4.13.\* 6.64 գ

## ΒΑΣΙΛΕ[.. / ΒΑΣΙ[.... ΑΡΤΑ[.]Ζ[...

Այս դրամի (Գ. Մաթոսյանի Հավաքածու) դարձերեսի  
պատկերատիպը BEDOUKIAN 1978, p. 70, no. 134-ը ներկայացնում է  
որպես «արքան կանգնած ձախ, առաջ պարզած աջ ձեռքում պսակ,  
խակ ձախ ձեռքը երկար նիզակի վրա հենած», սակայն լուսանկարում  
(BEDOUKIAN 1978, Pl. 6, 134) դրամի վրա ակնհայտ է, որ նիկեի  
պատկերն է: NERCESSIAN & SARYAN 1996, no. 131 և 133-ը նույնպես  
ներկայացված են որպես դարձերեսի «կանգնած արքա» տիպի դրամ-  
ներ, որոնց լուսանկարները տրված չեն, բայց հղված է BEDOUKIAN  
1978, no. 134-ը: NERCESSIAN 1995, no. 125-ի համար (լուսանկարում՝  
նիկե, բայց նկարագրված է որպես «արքան կանգնած») հղված է  
BEDOUKIAN 1978, no. 134-ը: Այս սխալի վրա ուշադրություն է  
դարձվել և ճշտում է մտցվել CNG 36, p. 58-ում:

4.14.\* 6.53 գ 19.3 մմ 12 ժ.

## .]ΑΣΙΛΕΩ[. / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖ[...

Ա. Այվադյանի ժողովածու:

4.15.\* 6.38 գ 21.2 մմ 1 ժ.

## [.....] / [.....] .....]ΑΖΔΟΥ

Ա. Այվադյանի ժողովածու: Դիմերեսին, արքայի գլխի հետեւում, հաղիվ նշմարվում է A տառը: Դարձերեսը գոգավոր է: Վերաթողարկված է Արադոսի դրամի վրա, դարձերեսին երևում է դեպի ձախ արչավող ցուլը և նախորդ տիպի մի քանի այլ հետքեր, մ.թ.ա. 94-76 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype H; BMC Phoenicia, p. 40, no. 325, Pl. V, 9):

4.16.\* 6.32 գ 21 մմ

ΒΑΣΙΛΕΩ[. / ΒΑΣΙΛΕΩ[. Α[.]ΑΥ[.....

NERCESSIAN & SARYAN 1996, no. 132 (6.3 g, 20 mm, JG coll.) = NERCESSIAN 1995, no. 125 (6.3 g, JG coll.), Ժ. Գերեկյանի հավաքածու, սխալմամբ վերագրված է դարձերեսի «կանգնած արքա» գոյություն չունեցող տիպին = CNG 36, 1995, no. 609, «Արարատյան» ժողովածու: Վերաթողարկված է Արադոսի դրամի վրա՝ Տիխեի կիսանդրին աջ / Պոսեյդոնը նավաքթին նստած ձախ, մ.թ.ա. 130/129 թ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 57, 45, undertype F; BMC Phoenicia, p. 37, no. 304):

4.17.\* 6.16 գ 21 մմ

[.....] / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ

CNG 60, 2002, no. 1014: Վերաթողարկված է Արադոսի դրամի վրա. [Աստարտե-Եվրոպեի կիսանդրին աջ] / սապատավոր ցուլ արչավելիս ձախ (հետքերը երևում են դիմերեսի ձախ դաշտում), մ.թ.ա. 94-76 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype H; BMC Phoenicia, p. 40, nno. 325-340, Pl. V, 9):

4.18.\* 6.14 գ 20 մմ

..]ΣΙ[.... / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑ[....

NERCESSIAN & SARYAN 1996, no. 114, Ե. Ներսեսյանի հավաքածու: Վերաթողարկված է Արադոսի դրամի վրա՝ Տիխեի կիսանդրին աջ / Պոսեյդոնը նավաքթին նստած ձախ, մ.թ.ա. շուրջ 132-112 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype F; BMC Phoenicia, p. 37, nno. 302-310, Pl. V, 3-4) = ACB, Bulletin 18 (1996), no. 52 (6.14 g, 20 mm) = ACB, Bulletin 19 (1998), no. 43 (6.14 g, 20 mm):

4.19.\* 6.12 գ 19 մմ

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ

CNG 46, 1998, no. 687 (6.12 g, 19 mm). Վերաթողարկում, թե՛ կրկնակի հարվածի հետք դիմերեսին:

4.20.\* 6.09 գ 22 մմ

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔ[..

CNG 36, 1995, no. 612 = NERCESSIAN & SARYAN 1996, no. 126, Araratian Coll.: Վերաթողարկում, նախկին դրամի տիպն անորոշ է:

4.21.\* 5.87 գ 20 մմ

....]ΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ .]ΡΤΑΥΑΖΔΟΥ

CNG 36, 1995, no. 611 = NERCESSIAN & SARYAN 1996, no. 128, Araratian Coll.: Վերաթողարկում, նախկին դրամի տիպն անորոշ է:

4.22. 5.84 գ 23.0 մմ 11 Ϫ.

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕ[.. ΑΡΤΑΥΑ[....

Ա. Այվաղյանի ժողովածու: Վերաթողարկված Արադոսի դրամի վրա (NERCESSIAN & SARYAN 1996, undertype F). դիմերեսին երևում է Տիխեի պարսպաթաղի վերին մասը. դարձերեսը գոգավոր է:

4.23.\* 5.83 գ 22 մմ

ΒΑΣΙΛΕΩ[. / ΒΑΣ[..... .]ΡΤΑΥΑΖΔΟΥ.

CNG 61, 2002, no. 895. Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ:

4.24.\* 5.81 գ 22 մմ

[.....] / ΒΑΣΙΛΕΩ[. ΑΡΤΑΥΑ[....

NERCESSIAN & SARYAN 1996, no. 113, Հ. Ներսեսյանի Հավաքածու: Վերաթողարկված է Արադոսի դրամի վրա՝ Տիխեի կիսանդրին աջ / Պոսեյդոնը նավաբթին նստած ձախ, մ.թ.ա. շուրջ 132-112 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype F; BMC Phoenicia, p. 37, no. 302-310, Pl. V, 3-4):

4.25.\* 5.80 գ 17 մմ

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑ[....

CNG 46, 1998, no. 689 (5.80 g, 17 mm).

4.26\*. 5.77 գ 20.2 մմ 1 Ϫ.

Գրությունն անընթեռնելի

Ա. Այվաղյանի ժողովածու:

4.27. 5.74 գ

Դրամը հիշատակված է BEDOUKIAN 1978, p. 70, no. 134-ի տակ (վերաթողարկված Արադոսի դրամի վրա), բայց լուսանկարը տրված չէ: Հնարավոր է, որ սա և NERCESSIAN & SARYAN 1996, no. 116-ը նույն դրամն է:

4.28.\* 5.73 գ 22 մմ

ΒΑΣΙΛΕΩΣ / [.....]

NERCESSIAN & SARYAN 1996, no. 116, Լ. Սարյանի հավաքածու: Վերաթողարկված է Արաղոսի դրամի վրա. Տիխեի կիսանդրին աջ / Պոսեյդոնը նավաքթին նստած ձախ, մ.թ.ա. շուրջ 132-112 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype F; BMC Phoenicia, p. 37, no. 302-310, Pl. V, 3-4):

4.29.\* 5.61 գ 21 մմ

ΒΑΣΙΛΕ[.. / ΒΑΣΙΛΕ[.. ΑΡΤΑ[.....

ՀՊԹ, 17620/8, Գալաճյանների ժողովածու, նվեր, 1960 թ. = ՄՈՒՇԵՂՅԱՆ 1983, էջ 57, աղ. 77 = MOUCHEGHIAN & DEPEYROT 1999, Pl. 7, 117/F: Վերաթողարկված է Արաղոսի դրամի վրա. Աստարտե-Եվրոպեի կիսանդրին աջ / սապատավոր ցուլ արչավելիս ձախ, մ.թ.ա. 94-76 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype H; BMC Phoenicia, p. 40, no. 325, Pl. V, 9):

4.30.\* 5.50 գ 21.5 մմ 11 ժ.

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤ[.....

Ա. Այվադյանի ժողովածու:

4.31.\* 5.49 գ 22 մմ

ΒΑΣΙΛΕΩΣ / [.....]

NERCESSIAN & SARYAN 1996, no. 115, Ե. Ներսեսյանի հավաքածու: Վերաթողարկված է Արաղոսի դրամի վրա. Տիխեի կիսանդրին աջ / Պոսեյդոնը նավաքթին նստած ձախ, մ.թ.ա. շուրջ 132-112 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype F; BMC Phoenicia, p. 37, no. 302-310, Pl. V, 3-4) = ACB, Bulletin 19 (1998), no. 44 (5.49 g):

4.32.\* 5.47 գ 19.8 մմ 11 ժ.

Գրությունն անընթեռնելի

Ա. Այվադյանի ժողովածու:

4.33.\* 5.46 գ 21.5 մմ 12 ժ.

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ .ΙΤΑΥΑΖΔΟΥ

ՀՊԹ, 19031/18, նվեր Զ. Պտուկյանից, 1980 թ.: Վերաթողարկված, նախկին դրամի տիպն անորոշ է (հետքերը նկատելի են դիմերեսի աջ դաշտում):

4.34.\* 5.46 գ 17 մմ

...]ΙΛΕΩΣ / ...]ΙΛΕΩΝ .....]ΔΟΥ

CNG 46, 1998, no. 688 (5.46 g, 17 mm).

4.35.\* 5.44 գ 19.5 մմ 11 ժ.

.]ΑΣΙΛΕ[. / ΒΑΣΙΛΕΩ[. ΑΡΤΑΥΑΖ[...

Ա. Այվաղյանի ժողովածու:

4.36.\* 5.43 գ 23.6 մմ 1 ժ.

ΒΑΣΙΛΕΩΣ / Β[...]ΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ

Ա. Այվաղյանի ժողովածու: Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ:

4.37.\* 5.35 գ 18 մմ 12 ժ.

.]ΑΣ[..... / .]ΑΣΙΛΕΩΝ ..]ΤΑΥΑΖΔ[.

Ե. Ներսեսյանի ժողովածու (ԱՄՆ):

4.38.\* 5.28 գ 22 մմ

Գրությունն անընթեռնելի

NERCESSIAN & SARYAN 1996, no. 119, Ե. Ներսեսյանի Հավաքածու: Վերաթողարկված Արադոսի դրամի վրա՝ Աստարտե-Եվրոպեի կիսանդրին աջ / սապատավոր ցուլ արշավելիս ձախ, մ.թ.ա. 94-76 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype H; BMC Phoenicia, p. 40, no. 325-340, Pl. V, 9) = ACB, Bulletin 17 (1994), no. 55 (5.28 g, 22 mm):

4.39.\* 5.2 գ

.]ΑΣ[..... / [.....] ...]ΑΥΑ[.....

Այս դրամը Զ. Պետուկյանի (BEDOUKIAN 1978, p. 70, no. 133) և Ե. Ներսեսյանի (NERCESSIAN 1995, p. 76, no. 126) մոտ նկարագրված է որպես «արքան կանգնած ձախ, առաջ պարզած աջ ձեռքում պսակ, իսկ ձախ ձեռքը երկար նիզակի վրա հենած»: Ճիշտ է, դրամը վատ է պահպանված և, ամենայն հավանականությամբ, կրկնախափված է կամ վերաթողարկված, ուստի և պատկերը հստակ չէ, իսկ լուսանկարը գլխիվայր է տեղադրված, սակայն CNG 36, p. 58-ում իրավացիորեն նշված է, որ իրականում այս դրամի դարձերեսին պատկերված է նիկեն:

4.40.\* 5.10 գ 19 մմ

Գրությունն անընթեռնելի

NERCESSIAN & SARYAN 1996, no. 127, Ե. Ներսեսյանի Հավաքածու: Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ =

ACB, Bulletin 18 (1996), no. 53 (5.10 g, 19 mm) = ACB, Bulletin 19 (1998), no. 45 (5.10 g, 19 mm):

4.41.\* 5.09 գ 22.1 մմ 12 ժ.

Գրությունն անընթեռնելի

Ա. Այվաղյանի ժողովածու: Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ:

4.42.\* 4.98 գ 19 մմ 12 ժ.

ΒΑΣΙΛΕ[... / [..... ..]]

Ե. Ներսեսյանի ժողովածու (ԱՄՆ):

4.43.\* 4.86 գ 22 մմ

Β[.]ΣΙΛΕΩ[. / ..]ΣΙΛΕΩΝ [.....]

NERCESSIAN & SARYAN 1996, no. 121 = BEDOUKIAN 1978, no. 132 = NERCESSIAN 1995, no. 131, Զ. Պտուկյանի Հավաքածու: Վերաթողարկված Արաղոսի դրամի վրա՝ Աստարտե-Եվրոպեի կիսանդրին աջ / անորոշ, մ.թ.ա. 94/3 թ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype H; BMC Phoenicia, p. 40, no. 325, Pl. V, 9):

4.44.\* 4.86 գ 20 մմ

[.....] / .]ΑΣΙΛΕΩΝ .]ΡΤΑ[.....

NERCESSIAN & SARYAN 1996, no. 129, Փարիզի ազգային գրադարանի Հավաքածու = MOUCHEGHIAN & DEPEYROT 1999, Pl. 7, 117/D: Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ:

4.45.\* 4.77 գ 17.6 մմ 12 ժ.

[.....] / .....Ω[. ΑΡΤΑΥΑΖ[...

Ա. Այվաղյանի ժողովածու:

4.46.\* 4.60 գ 21.5 մմ 12 ժ.

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕ[... [.....]

Զ. Մկրտչյանի ժողովածու: Վերաթողարկում, նախկին դրամի տիպը պարզ չէ:

4.47.\* 4.59 գ 16.4 մմ 12 ժ.

.]ΑΣΙΛΕΩΣ / ....]ΛΕΩΝ [.....]

ՀՊԹ, 19793/1, գտնվել է 1973 թ. Հին Արտաշատի 8-րդ բլրի պեղումներից, տե՛ս ԶԱՐԴԱՐՅԱՆ 1977, էջ 82-83:

4.48.\* 4.39 գ 22.5 մմ 1 ժ.

Գրությունն անընթեռնելի

Ա. Այվաղյանի ժողովածու: Վերաթողարկում, նախկին դրամի տիպը պարզ չէ:

4.49.\* 4.12 գ 16.9 մմ 1 ժ.

ΒΑΣΙΛΕ[.. / ΒΑΣΙΛΕΩ[. ]ΡΤΑΥ[.....

ՀՊԹ 19992/72, գտնվել է Արտաշատում, Գ. Մաթևոսյանից գնված 2002 թ.:

4.50.\* 4.03 գ 19 մմ

ΒΑΣΙΛΕ[.. / ΒΑΣΙΛΕΩ[. ]ΡΤΑΥ[.....

CNG 36, 1995, no. 610, «Արարատյան» ժողովածու = *NERCESSIAN & SARYAN 1996, no. 117, Ե. Ներսեսյանի ժողովածու: Վերաթողարկված է Արադոսի դրամի վրա՝ Տիխեի կիսանդրին աջ / Պոսեյդոնը նավաքթին նստած ձախ, մ.թ.ա. շուրջ 132-112 թթ. (NERCESSIAN & SARYAN 1996, pp. 56, 45, undertype F; BMC Phoenicia, p. 37, nos. 302-310, Pl. V, 3-4):*

4.51.\* 3.88 գ 19.5 մմ 12 ժ.

[.....] / ...]ΙΛΕΩ[. ΑΡΤΑΥΑΖ[...

Ա. Այվաղյանի ժողովածու:

4.52.\* 3.71 գ 17 մմ

...]ΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ .]ΡΤΑΥΑΖΔΟΥ

*NERCESSIAN & SARYAN 1996, no. 130 = NERCESSIAN 1995, no. 128, Ե. Ներսեսյանի Հավաքածու: Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ:*

4.53.\* 3.28 գ 18.3 մմ 11 ժ.

...]ΙΛΕΩΣ / ...]ΙΛΕΩΝ ...]ΑΥΑΖΔΟΥ

Ա. Այվաղյանի ժողովածու:

4.54.\* 3.24 գ 19.1 մմ 12 ժ.

Գրությունն անընթեռնելի:

ՀՊԹ, 19585/30, նվեր Ա. Այվաղյանից, 1987 թ.:

4.55.\* 3.12 գ 18.5 մմ 12 ժ.

Գրությունն անընթեռնելի:

Ա. Այվաղյանի ժողովածու:

4.56.\*

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ .]ΡΤΑΥΑΖΔΟΥ

*NERCESSIAN 1995, p. 76, Pl. 10, 127, Հղում է Kovacs, Frank L.*

*Mail Bid Sale V. San Mateo, CA: August 1984, no. 179՝ տալով լուսանկարը, առանց չափագիտական տվյալների:*

4.57.\*

ΒΑΣΙΛΕΩΣ / .]ΑΣΙΛΕΩΝ ..]ΤΑ[.....

*NERCESSIAN 1995, p. 76, Pl. 10, 129, Հղում է Spink Numismatic Circular, Vol. C (April 1992), no. 3, no. 1663՝ տալով լուսանկարը, առանց չափագիտական տվյալների:*

4.58.\*

21 մմ

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ

*Hirsch 165 (1990), no. 504 = MOUCHEGHIAN & DEPEYROT 1999, Pl. 7, 117/E.*

4.59.\*

22 մմ

.]ΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ .]ΡΤΑΥΑ[....

*Torkom Demirjian, Catalog VI, 1977, no. 250. Վերաթողարկված, նախկին դրամի տիպը պարզ չէ:*

**Դարձերեսի տիպն անորոշ <sup>42</sup>**

0.1.\* 6.92 գ 16.9 մմ

**Գրությունն անընթեռնելի:**

**ՀՊԹ 19648/19, նվեր Ա. Այվազյանից, 1989 թ.: Դարձերեսը գրեթե լրիվ մաշված է և հնարավոր չէ վստահորեն որոշել պատկերատիպը:**

---

<sup>42</sup> *CNG 46, 1998, no. 692, Հիշատակում է ևս 3 դրամ Նիկե և Հասկ (= նոճի) պատկերատիպով: Կշռային տվյալները և լուսանկարները տրված չեն:*

## 2.5 Տետրադրախմաները

(ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΣΔΕΩ ΘΕΙΟΥ)

## Աղյուսակ 10

## Արծաթ

**Դիմ.** Արտավազդի կիսանդրին աջ, երիտասարդ դիմագծերով: Թագը հինգ սրածայր ելուստներով, վզկալով և վեր բարձրացված ու թագի ճակատային մասում ամրացված ականջակալներով: Թագի կենտրոնական մասում, քառանկյան մեջ՝ աստղ ութ ճառագայթներով: Երևում են ապարոչի ժապավենները, ականջը և նրանից կախված օղը: Պարանոցին եռազալար մանյակ (<sup>~</sup>), արքայական ծիրանու վերին մասը աջ ուսին ճարմանդով (<sup>~</sup>) ամրացված: Դիմապատկերը երիզված է ուլունքաձև շրջանակով:

**Դարձ.** Քառաձի մարտակառք արչավելիս, դեպի ձախ: Կառապանը երկար զգեստով, ճառագայթավոր թագով, ձախ ձեռքով բռնել է ձիերի սանձը: Ձիերի դիմաց՝ ձախ դաշտում,  $\ddagger$  մենագիրը, իսկ նրա տակ IZ կամ IH տառերը: Գրությունը վերևում  $\rightarrow$  ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ  $\rightarrow$ , ներքևում ΑΡΤΑΥΑΣΔΕΩ ΘΕΙΟΥ  $\rightarrow$ : Պատկերը երիզված է ուլունքաձև շրջանակով:

5.1.\* 16.42 գ 29 մմ 12 ժ. IZ (17)

Sotheby's, 4 Dec. 1990, Hunt Collection, Part III, no. 64 (16.42 g, 29 mm, 12 h) = CNG 36, 1995, Araratian Collection, no. 607 (16.40 g) = NERCESSIAN 1995, Pl. 45, 4b, p. 195 = CNG, Triton II. 1998, no. 547 = NERCESSIAN 2003, A2-P2a (16.40 g), տե՛ս նաև MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, p. 221, no. 114:

5.2.\* 16.11 գ 33 մմ 1 ժ. IZ

Bank Leu, Auk. 30, no. 201 (16.16 g) = BEDOUKIAN 1983, pl. II = NFA XXII, 1989, no. 337 (16.16 g) = NERCESSIAN 1995, Pl. 45, 4a; p. 195, note 9 = NERCESSIAN & SARYAN 1996, p. 56, no. 112, որտեղ նշված է, որ դիմերեսին՝ դեմքի դիմաց և թագի հետևում, նկատելի են կրկնադրոշման հետքեր = NERCESSIAN 2003, A1-P1a (16.11 g). այստեղ նշված է, որ դրամը գնվել է 1989 թ. Թեոդոր Վիլբոր հիմնադրամի

կողմից:

5.3.\* 14.69 գ 28.2 մմ 1 ժ. IH (18)

ՀՊԹ, 17579: Դրամի Հայտնաբերման մասին առաջին՝ լրագրային հրատարակման մեջ (Հ. ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ, «Արտաշես I-ի հեթանոսական աշտարակ-մեհյանը», Երևան օրաթերթ, no. 97, 17 մայիս 1959, էջ 3) կարդում ենք. «Երևանից դեպի էջմիածին տանող խճուղու 10-րդ կիլոմետրից այն կողմ, Փարաքար գյուղից 1.5 կմ հյուսիս գտնվող բլրաշարքի արևմտյան ծայրում, շրջանաձև թափված հսկա տուֆ քարերի կենտրոնում, 1959 թ. ապրիլի 27-ին ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության Հողչինվարչության Հողաչինարար Ալ. Սարգսյանը պատահականորեն Հայտնաբերեց Հայոց թագավոր Արտավազդ II-ի պատկերը կրող արծաթե մի դրամ (տրամ. 28 մմ, քաշը 14.95 գ)...»: Այս աշխատությունը պատրաստելու կապակցությամբ, ես խնդրեցի Հ. Ղարագյոզյանին լրացուցիչ մանրամասնություններ հիշել դրամի Հայտնաբերման վերաբերյալ, որը նա արեց սիրով և որի համար Հայտնում եմ շնորհակալությունս: Ահա դրանք: Մինչև դրամի Հայտնաբերումը, Հնագետներից ոմանք ծանոթ են եղել Ալ. Սարգսյանին: Նկատի ունենալով նրա աշխատանքի բնույթը, նրանք խնդրել են Հողաչինարարին, որ իր շրջագայությունների ժամանակ ուշադրություն դարձնի նաև Հնագիտական մնացորդներին ու հետքերին և իրենց տեղեկացնի դրանց մասին: Այդ օրը Ալ. Սարգսյանի հետ եղել է նրա գործընկերներից մեկը: Նրանք բլրի գագաթին, վերոհիշյալ շինության մեջ (որը հետագայում Գ. Տիրացյանի կողմից պեղված աշտարակաձև դամբարանն է, տե՛ս ՏԻՐԱՅՅԱՆ 1970), պատրաստվել են տեղադրելու Հողաչափական սարքը, երբ Ալ. Սարգսյանը գետնի երեսին նկատել է դրամը: Պարզելու համար, թե ինչ մետաղից է այն (Հ. Ղարագյոզյանի խոսքերով, այն որոշ չափով սևացած, բայց լավ վիճակում է եղել և Հատուկ մաքրման կարիք չի ունեցել), Սարգսյանի գործընկերը դրամը քսել է մի տուֆ քարի, որի հետևանքով դրամի դիմերեսը վնասվել է, առաջացնելով բազմաթիվ խազեր: Հենց նույն օրը Ալ. Սարգսյանը դրամը ցույց է տվել Հ. Ղարագյոզյանին, որին հետևել է Հնագետների խմբի կողմից տեղանքի դնումը (այս մասին տե՛ս վերոհիշյալ Հողվածն ամբողջությամբ): Մի քանի ամիս անց, Ալ. Սարգսյանը դրամը տարել է Հայաստանի պատմության պետական թանգարան: Այն, մանրամասն վերլուծությամբ, առաջին անգամ հրատարակել է Խ. Մուշեղյանը (ՊԲՀ 2, 1964, էջ 317-323, կշիռը տրված է 14.85 գ): Դրամը հետագայում Հայտնվել է բազմաթիվ հրատարակություն-

ներում. Seyrig 1964, p. 139-140, Fig. 1 = ՊՏՈՒԿՅԱՆ 1968, էջ 347, թիվ 22 = BEDOUKIAN 1968, p. 55, 62-63, no. 22, Pl. X = ТИРАЦЯН 1973, с. 51, рис. 4, 1 = АРАКЕЛЯН 1976, тб. LXXVII = BEDOUKIAN 1978 1978, 69, no. 129, Pl. 6 = NERCESSIAN 1995 1995, p. 75, no. 123, Pl. 10 = MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, p. 221, no. 114 = NERCESSIAN 2003, A3-P3a (14.85 g).

Զ. Պտուկյանը կասկած է հայտնել Փարաքարում հայտնաբերված Արտավազդի տետրադրախմայի իսկության վերաբերյալ՝ գրելով. «It is not impossible that this particular coin is a contemporary imitation»:<sup>43</sup> Դրամի իսկության մասին զգուշավոր կարծիքը նա կրկնել է ավելի ուշ մեկ այլ աշխատության մեջ. «One might mention that the Erevan specimen in styling and appearance does not entirely eliminate the possibility that it was a contemporary forgery»:<sup>44</sup> Հաջորդ երկու տետրադրախմաների ի հայտ գալուց հետո, Զ. Պտուկյանն այլևս չի անդրադարձել այդ խնդրին:<sup>45</sup> Կարծում եմ, այդ կասկածները որոշ հիմնավորում ունեն: Երկմտանքի տեղիք են տալիս տետրադրախմաների գրություններում, պատկերագրության մեջ և ոճում առկա անկանոնությունները (դրանց մասին տե՛ս Համապատասխան բաժիններում): Եթե, այնուամենայնիվ, դրանք կեղծ դրամներ են, ապա՝ շատ վարպետորեն արված: Ուշադրություն հրավիրելով տետրադրախմաներում եղած «չեղումների» վրա, առայժմ հակված եմ դրանք դիտարկել որպես Արտավազդ II-ի իսկական թողարկումներ, մինչև կհայտնվեն նոր օրինակներ, որոնք գուցե որոշակիություն մտցնեն այդ հարցում:

\* \* \*

Այսպիսով, վերը ներկայացված ցուցակներն արտացոլում են Արտավազդի դրամաթողարկման վերաբերյալ ներկայումս հասանելի աղբյուրագիտական հիմքը: Այստեղ հաշվառված 98

<sup>43</sup> BEDOUKIAN 1978, p. 25.

<sup>44</sup> BEDOUKIAN 1983, p. 282.

<sup>45</sup> Տե՛ս NERCESSIAN 2003, p. 10. Ե. Ներսեսյանը Արտավազդ Բ-ի տետրադրախմաներն անտարակույս իսկական է համարում:

դրամներից 3-ը տեստրադրախմաներ են, 14-ը դրախմաներ<sup>46</sup>, 81-ը պղնձե դրամներ: Վերջիններիս մեջ Նիկեով դրամները կազմում են 59 դրամ, իսկ նոճիով դրամները՝ 1 + 20-ն են: Չբացառելով հետագայում այս երկու սերիաների վիճակագրական հարաբերակցության փոփոխման հնարավորությունը, այսօր կարելի է նկատել, որ Նիկե տիպի պղնձադրամներն իրենց քանակով գրեթե երեք անգամ գերազանցում են նոճի տիպի պղնձադրամներին:

---

<sup>46</sup> ՄՈՒՇԵՂՅԱՆ 1964, աղ. II, 4 պատկերում է ևս մի դրախմա, որի մասին էջ 322-ում ասված է, որ ՀՊԹ-ում «պահվում է Արտավազդ II-ի մի ուրիշ արծաթ դրամ՝ թողարկված Արտավազդի իշխանության ԼՏ = 16-րդ տարում»: ՀՊԹ 8904 համարի տակ գրանցված այս դրախմայի մետաղի ծակոտկենությունը, Արտավազդին ոչ բնորոշ դիմապատկերը և վերոհիշյալ տարեթիվը (°) ու նրա տարօրինակ տեղադրությունը (մենագրի տակ, մինչդեռ մյուս բոլոր դեպքերում դրախմայի վրա տարեթիվը նշված է Նիկեից ձախ) հուշում են, որ այն կեղծ է:

### 3. ԱՐՏԱՎԱԶԴԻ ԻԻ ԴՐԱՄՆԵՐԻ ԴԻՄԵՐԵՍԻ ՊԱՏԿԵՐԱՏԻՊԵՐԸ

Արտավազդի ԻԻ դրամական դիմապատկերներում կարելի է առանձնացնել երեք հիմնական տիպ, որոնք համապատասխանում են նրա դրամաթողարկման մեջ դրսևորվող երեք փուլերին: Դիմապատկերներում նկատվող տարբերություններն առավելապես վերաբերում են թազին:

#### 3.1 Վաղագույն դիմապատկերը

Ժամանակագրորեն առաջինը ցույց. 1.1 պղնձե դրամի դիմապատկերն է, ուր արքան պատկերված է նույնպիսի թազով, ինչպիսին տեսնում ենք նրա հոր՝ Տիգրան Մեծի, դրամների վրա. վզկալով և իջեցված ականջակալներով, թազի կենտրոնական մասը երկու արծիվների միջև գտնվող աստղով զարդարված: Այս վերջին պատկերագրական տարրն առայժմ հայտնի միակ, ոչ այնքան լավ պահպանված նմուշի վրա հստակ չէ, բայց տպավորությունն այնպիսին է, որ թազի վրա հենց այդ նշանախումբն է:

#### 3.2 Դիմապատկերը դրախմաների և պղինձների վրա

Դիմապատկերի երկրորդ տիպը ներկայանում է դրախմաների և պղնձե մյուս դրամների վրա, ուր թազի պատկերագրությունն մեջ առկա են երկու հիմնական առանձնահատկություններ, որոնցով Արտավազդի դիմապատկերը որոշակիորեն տարբերվում է իր նախորդի դիմապատկերից: Ամենաակնառու

տարբերութիւնը՝ բարձրացված և թագի ճակատային մասում շեղակի ամրացված ականջակալն է, որի շնորհիվ երևում է արքայի ականջը և նրանից կախված ականջօղը: Թագը կրելու այսպիսի եղանակը ևս մեկ անգամ հանդիպում է Տիգրան V-ին (մ.թ. 6 թ.) վերագրված դրամների վրա<sup>47</sup>: Առանց ականջակալի (այլ ոչ թե բարձրացված ականջակալով), միայն վղկալով է պատկերված Տիգրան անունը կրող մեկ այլ արքա, որն իր դրամների վրա ներկայացված է դեմքով դեպի ձախ<sup>48</sup>: Մնացած բոլոր Արտաշեսյան արքաները դրամների վրա ունեն վղկալով և իջեցված ականջակալներով թագ<sup>49</sup>:

\* \* \*

Ականջը և օղը ցուցադրելու ցանկութիւնը հաղիվ թե պայմանավորված լինի միայն Արտավազդի քմահաճույքով և հորից ինչ որ բանով տարբերվելու մղումով: Անշուշտ եղել է նաև խորհրդանշական իմաստ պարունակող մեկ այլ դրդապատճառ, որն առայժմ ամբողջովին բացահայտված ու հասկանալի չէ, բայց կարող ենք ենթադրել հնարավոր պատճառի մասին, շնորհիվ այն զուգահիսութեան, որ հանդիպում ենք նույն ժամանակների պարթև արքաների դրամական դիմապատկերներում:

Ականջը և նրանից կախված օղը ծածկող երկար մազերով արքայական դիմապատկերը պարթևական դրամների վրա

<sup>47</sup> BEDOUKIAN 1978, no. 167, NERCESSIAN 1995, no. 184, նաև Արտաշատի պեղումներից հայտնաբերված լավ պահպանված մի օրինակ, տե՛ս ՎԱՐԴԱՆՅԱՆ 1999, էջ 322, 324:

<sup>48</sup> BEDOUKIAN 1978, no. 3-6 (Տիգրան Ա, 123-96 թթ.), NERCESSIAN 1995 no. 20-26 (Տիգրան I), ՎԱՐԴԱՆՅԱՆ 1987, էջ 195-201 (անհայտ Տիգրան, մ.թ.ա. I դ. վերջ - մ. թ. I դ. սկիզբ), FOSS 1986, pp.48-50 (Տիգրան կրտսեր (?)), TEKIN 1992 (Տիգրան կրտսեր (?)), MOUSHEGHIAN-DEPEYROT 1999, no. 92-95 (Տիգրան II):

<sup>49</sup> Մ.թ.ա. 20-18 թթ., Հայաստանը նվաճելու առիթով, Օգոստոս կայսեր կողմից թողարկվել է դենարների մի սերիա, որի դրամներին տեսնում ենք հայկական թագ, ականջակալները բարձրացված և խաչաձևված այնպես, ինչպես Արտավազդի դրամների վրա, բայց պատկերված դիմացից (Աղ. 11, Ա, տե՛ս նաև MATTINGLY, CRE I, 1965, Pl. 16:15-17, p. 109, ՊՏՈՒԿՅԱՆ 1971, էջ 49-51, no. 11-14):

ձևավորվեց մ.թ.ա. 80-ական թթ. և շուտով դարձավ գերիշխող տիպը (SELLWOOD 1980, type 30, Աղ. 15.3,6-9): Դրանից բացի, մ.թ.ա. I դ. առաջին կեսին կար դրամական դիմապատկերի մեկ այլ տիպ, որտեղ արքան պատկերված է վղկալ և ականջները ծածկող ականջակալներ ունեցող խույրով (Աղ. 15.2,4,5): Տիգրան Մեծին ժամանակակից պարթև արքաների դիմապատկերների երկու ձևերում էլ ականջը քողարկված է կա՛մ ականջակալով, ինչպես Տիգրանի դիմապատկերներում, կա՛մ երկար մազերով: Արտավազդի ժամանակակիցը՝ Որոդ II-ը (մ.թ.ա. 57-38), նույնպես պատկերվում էր ականջը ծածկող երկար մազերով (SELLWOOD 1980, types 42-48, Աղ. 15.10,11), մինչդեռ նրա որդի և գահակից, Արտավազդ II-ի փեսա Պակորը դրամների վրա պատկերված է անմորուս, կարճ մազերով, երևում է ականջը և նրանից կախված օղը (SELLWOOD 1980, type 49, Աղ. 15.12): Պակորը զոհվեց մ.թ.ա. 38-ին, իսկ որոշ ժամանակ անց Որոդ II-ը պարթևական գահը հանձնեց իր մյուս որդուն՝ Հրահատ IV-ին (38-2 մ.թ.ա.), որին դրամների վրա տեսնում ենք ականջները ծածկող երկարամազ սանրվածքով (SELLWOOD 1980, types 50-55, Աղ. 15.13): Պակորից հետո այս ավանդույթը երկրորդ անգամ խախտում է Հրահատ IV-ի և իտալուհի Մուսայի որդին՝ Հրահատակը (մ.թ.ա. 2 - մ.թ. 4 թթ.), որը Պարթևաստանում հունական և հելլենիստական մշակույթի գլխավոր կենտրոն հանդիսացող Տիգրիսի Սելևկիա քաղաքում թողարկվող տետրադրախմանների վրա պատկերվում էր երկար մազերով, բայց այնպես, որ ընդգծված կերպով երևում էր ականջը և օղը: Մինչդեռ դրախմանների ու բրոնզե դրամների վրա, որոնք հատվում էին այն քաղաքներում, ուր գերակշռում էր իրանական մշակութային ազդեցությունը (Եկրատան, Ռազա, Միհրդատկերտ և այլն) արքան պատկերվում էր ավանդական տեսքով՝ ականջները ծածկող երկար մազերով: Նրանից հետո, Հռոմում դաստիարակություն ստացած և ակնհայտորեն հռոմեասեր Ռոմնը (մ. թ. 8-12 թթ.) թե՛ տետրադրախմանների, և թե՛ դրախմանների վրա պատկերվում էր բաց ականջով (SELLWOOD 1980, type 60, Աղ. 15.14): Գրեթե այս նույն ժամանակներում Տիգրան V-ի դրամների վրա

Հայաստանում ևս կրկին ի հայտ է գալիս ականջը և օղը ցուցադրող արքայական դիմապատկերը:

Ականջը և օղը պատկերելու միտումը որոշ ժամանակ պահպանվում է Ռնոնին հաջորդած Արտավան II-ի (մ. թ. 10-38 թթ.) տեսրադրախմանների վրա (SELLWOOD 1980, types 61, 62, դրախմանների վրա շարունակվում էր ավանդական ձևը, Աղ. 15.15): Հաջորդ արքաները՝ Վարդան I-ը (մ. թ. 40-45 թթ., SELLWOOD 1980, type 64, Աղ. 15.16), Գոտարզ II-ը (մ. թ. 40-51 թթ., SELLWOOD 1980, types 65, 66) և մյուսները, ովքեր պատկերվում էին առանց թագի, վերադառնում են դիմապատկերի ավանդական՝ ականջը ծածկող երկար մազերով, ձևին:

Այժմ փորձենք հասկանալ պատկերագրական այդ տարրի ի հայտ գալու և անհետանալու պատճառները: Կրկին անդրադառնալով Պակորին, հիշենք, որ նա գործակցում էր հռոմեացի զորավար Լարիենոսի հետ, որի եռանդուն մասնակցությամբ կազմակերպվեցին ու իրականացվեցին պարթևների սիրիափյունիկյան արշավանքները մ.թ.ա. 40-39 թթ., և որ սիրիական նվաճված քաղաքներում Պակորի հանդեպ «արտակարգ սեր էին տածում, ինչպես մի ժամանակ իրենց վրա իշխած լավագույն թագավորների հանդեպ, նրա արդարամտության և համեստության համար» (Dio XLIX. 20, 4): Այս տեղեկությունները, զուգորդելով նրա դիմապատկերային առանձնահատկությունների հետ, թույլ են տալիս ենթադրել Պակորի փոխադարձ համակրանքի մասին հունա-հռոմեական մշակութային առանձին դրսևորումների նկատմամբ: Ուստի կարելի է համաձայնվել Դ. Սելվուդի մեկնաբանության հետ, ըստ որի՝ Պակորի կարճ մազերով, անմորուս դիմապատկերի հայտնվելն այն ազդեցության հետևանքն է, որ ուներ նրա վրա իր «անվանական ենթական»՝ Հռոմին դավաճանած Լարիենոսը<sup>50</sup>: Կարճ սանրվածքը, սափրված դեմքը, ականջը և օղը երևալու հանգամանքներն ինքնին զուտ հռոմեական յուրահատկություններ չեն, բայց դիմապատկերի նման տիպի հայտնվելը

<sup>50</sup> SELLWOOD 1983, p 291.

Հենց այս պատմական իրավիճակում կարող է մեկնաբանվել միայն որպես Հունա-Հռոմեական դիմապատկերային կանոններից որոշ չափով մոտենալու, դեմքն ավելի բաց պատկերելու ձգտում՝ այնքանով, որքանով այն տեղավորվում էր պարթևական պատկերազրական կանոնների սահմաններում:

Այս միտումն ավելի ակնհայտ է դրսևորված Հրահատակի (SELLWOOD 1980, type 58) և, հատկապես, Ոնոնի թե՛ դիմապատկերներում, և թե՛ դրամական պատկերատիպերի մյուս տարրերում ընդհանրապես: Պարթև այս երկու արքաների Հռոմի Հետ առնչված լինելու մասին գրավոր և դրամագիտական տվյալների փոխհամաձայնությունն ավելի որոշակի է: Հրահատակը Հրահատ IV-ի և իտալուհի Մուսայի որդին էր: Վերջինիս դիրքն ու ազդեցությունն այնքան մեծ էր<sup>51</sup>, որ Հրահատակի դրամական թողարկումներից մեկի դարձերեսին (SELLWOOD 1980, type 58), պարթևական դրամաթողարկման ամբողջ ընթացքում միակ անգամ, պատկերվել է թագուհու դիմապատկերը՝ նրա անվամբ և աստվածային տիտղոսներով: Ուստի երկար մազերով, բայց ականջը բաց թողնող սանրվածքի ի հայտ գալը մ.թ.ա. I դ. վերջին և մ. թ. I դ. առաջին երկու տասնամյակներում, այս կոնտեքստում նույնպես կարող է դիտարկվել որպես Հռոմեական ազդեցության դրսևորում, քանի որ և՛ դրանից առաջ (բացառությամբ Պակորի), և՛ դրանից հետո պարթևական արքաների դիմապատկերներում ականջը քողարկվում էր երկար մազերով<sup>52</sup>:

<sup>51</sup> «... Երբ նա՝ արդեն դարձավ այնպիսին, որ նրա ամեն ասածը թագավորի (Հրահատ IV-ի) հավանությունն էր արժանանում, շտապեց իր որդուն դարձնել պարթևների առաջնորդ...», «... այսպիսով նրանք (Հրահատ IV-ի մյուս որդիները), քանի որ Փրատեսի համար Հեշտ չէր հակաճառել Թեսմուսայի թելադրանքներին, ուղարկվեցին Հռոմ» և այլն, տե՛ս Josephus Antiquitates Jud. XVIII, 39-44:

<sup>52</sup> Պարթև թագավորների երկար մազեր պահելու սովորույթի մասին կարող են տարբեր կարծիքներ լինել: Մ.թ.ա. 80-ական թթ. իշխած անհայտ արքայի (SELLWOOD 1980 30) տեսրադրախմաները ներկայացնում են նախկինում պարթև արքաներին բնորոշ կարճ սանրվածքը

Ինչ վերաբերում է Ոնոն I-ին, Հրահատ IV-ի մյուս որդուն, նա, ինչպես ասվեց վերևում, դաստիարակվել էր Հռոմում<sup>53</sup>, ձեռք բերելով պարթևներին խորթ աշխարհայացք և վարքագիծ ու այդ պատճառով ատելի էր դարձել նրանց<sup>54</sup>:

Այսպիսով, Հայկական (Արտավազդ II, Տիգրան V) և պարթևական (Պակոր I, Հրահատակ, Որոդ III (մ. թ. 6 թ., SELLWOOD 1980, type 59), Ոնոն I, Արտավան II) դրամներում նկատվող այս դուզադիպուժյունը դժվար է պատահական համարել: Այն, մ.թ.ա. 40-30-ական թվականներին և ապա I դ. վերջին և մ.թ. I դ. սկզբի տարիներին պարթևական և Հայկական դրամական պատկերագրություն վրա Հռոմեական ազդեցության արձագանքներից մեկն էր:

\* \* \*

Արտավազդ II-ի թագի կենտրոնական մասում տեղադրված խորհրդանշանների խումբը՝ աստղը երկու արծիվների միջև, ձախ և աջ կողմերից ուղղաձիգ բաժանարար գծիկներով առանձնացված է այնպես, որ կարծես գտնվում է քառանկյունի շրջանակի մեջ, որի հետևանքով թագի ձախ և աջ կողմերում առաջացել են երկու նեղ շերտեր: Թագի խորհրդանշանները եզրագծող այդպիսի ներքին շրջանակ Տիգրանի թագին բնորոշ չէ, բայց նաև բոլորովին անծանոթ չէ: Նրա տեսրադրախմաների վրա նման դեպք Հայտնի չէ, սակայն Սառնակունքի գանձի դրախմաներից մեկի վրա (ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973, թիվ 125) տեսնում ենք նույն պատկերը, որը նկարագրվեց վերևում: Արդյոք սա Տիգրանի դրախմաների այն թողարկումներից չէ՞, թագի պատկերման անցումային մի նմուշ, որից պիտի ձևավորվի Արտավազդի թագը: Այս իմաստով շատ ավելի հետաքրքիր են Տիգրանի պղնձե դրամների մի քանի սերիաներ՝ դարձերեսին Նիկեի պատկերով, և մի սերիա՝

երկարամազ սանրվածքի վերափոխվելու փուլերը (տե՛ս, օր., WALTON DOBBINS 1975, Pl. 2, 2-6), որից հետո երկար մազերը ձեռք են բերում ավանդական սանրվածքի բնույթ:

<sup>53</sup> Josephus Antiquitates Jud. XVIII, 52.

<sup>54</sup> Josephus Antiquitates Jud. XVIII, 46-47.

դարձերեսին նոճու պատկերով, որոնց դիմերեսին արքայի թագը կենտրոնում կրում է ութաթև աստղ՝ կա՛մ ձախ և աջ կողմերից կետավոր ուղղաձիգ բաժանարար գծիկներով առանձնացված, կա՛մ Ու-աձև կետավոր շրջանակով եզրագծված, որը ներքևում թագի վրայով կապված ապարոչի հետ միանալով թողնում է ուղղանկյուն շրջանակի տպավորութուն: Թագի այս տեսակն, անդին, Արտավազդի թագի հարազատ նախատիպն է, մասնավորապես նրա տետրադրախմաների թագի, եթե նկատի ունենանք նաև խորհրդանշանը՝ միայնակ աստղը (տե՛ս քիչ ներքևում):

Թագ, որի կենտրոնական խորհրդանշանը վերցված է Ու-աձև շրջանակի մեջ, վերոհիշյալ դեպքերից բացի հանդիպում ենք նաև Արտավազդ II-ին ժամանակակից, Մարաստանի Ասիննալես (Աղ. 12, A-C) և Արտավազդ (Աղ. 12, 7, D և E) արքաներին վերագրվող դրամների, ինչպես նաև, երեք ու կես տասնամյակ անց՝ Տիգրան V-ի դրամի վրա:

\* \* \*

Պղնձե դրամները գերազանցապես ներկայացնում են Արտավազդի կիսանդրին՝ մինչև ուսերը և կրծքավանդակի վերին մասը պատկերված, այնպես ինչպես տեսնում ենք նրա արծաթների վրա: Լավ պահպանված օրինակները թույլ են տալիս տեսնել արքայական մանյակը և պատմուճանի ծալքերը: Կան, սակայն, օրինակներ, որոնցում պատկերված է միայն Արտավազդի գլուխը և պարանոցը:

### 3.3 Դիմապատկերը տետրադրախմաների վրա

Արտավազդ II-ի դիմապատկերի երրորդ տիպը ներկայացնում են նրա տետրադրախմաները: Ընդհանուր առմամբ նման լինելով դրախմայի դիմապատկերի տիպին, այն տարբերվում է մի էական հատկանիշով՝ թագը կենտրոնում զարդարված է մեծ, ութ ճառագայթներով արև-աստղի խոր-

հրդանշանով, եղերված II-աձև կետավոր շրջանակով, որից ձախ և աջ գտնվող երկու շերտերը լցված են ոլորագիծ բուսական դարդանախաշով<sup>55</sup>: Թագի ճիշտ նույն տեսակն ենք տեսնում արդեն մի քանի անգամ հիշատակված Օգոստոս կայսեր և Տիգրան V-ի դրամի վրա, մի տարբերությամբ, սակայն, որ այս վերջինիս գլխի հետևում ծածանվող ապարոչի ժապավենները պատկերված են ալիքավոր գծերով (Աղ. 10.Բ): Առհասարակ, Արտավազդ II-ի տետրադրախմանների նմանությունը Տիգրան V-ի հենց այս դիմապատկերի հետ այնքան մեծ է (դա վերաբերում է թե՛ դիմապատկերի ընդհանուր հորինվածքին, և թե՛ պատկերագրական մանրամասնություններին), որ կարելի է հեշտությամբ շփոթել այս երկու արքաների դիմապատկերները: Դժվարանում եմ գտնել այդ զարմանալի նմանությունների վերաբերյալ որևէ հուսալի բացատրություն: Հռոմեական ազդեցության մասին վերն արված դիտարկումները լուսաբանում են միայն հարցի ընդհանուր կողմը, բայց ոչ՝ Արտավազդ II-ի և Տիգրան V-ի թագերի այդքան սերտ նմանության հանգամանքը:

\* \* \*

Արտավազդ II-ի դրախմանների և տետրադրախմանների դիմապատկերները համեմատելիս ուշադրություն է գրավում ևս մի պատկերագրական մանրամասնություն: Դրախմանների վրա արքայի պարանոցին պարզ երևում է եռագալար կամ եռաշարք մանյակ (Աղ. 2, 2.1-2 և այլն): Պղնձե լավ պահպանված օրինակների վրա ևս երևում է եռագալար մանյակը (Տե՛ս, օր., Աղ. 6, 4.16, 9, 4.56)<sup>56</sup>: Տետրադրախմանների վրա,

<sup>55</sup> Այս կապակցությամբ կարելի է հիշել Տիգրան Մեծի թագի «բուսական թելերից հյուսված ուղղանկյուն շրջանակը», նրա գահակալման վերջին տարիներին թողարկված տետրադրախմայի վրա, տե՛ս ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973 էջ 80, թիվ 128, նաև մեծացված լուսանկարը:

<sup>56</sup> Երկու, առավել հաճախ՝ երեք-չորս և ավելի գծերով, երբեմն կենդանակերպ կամ գնդիկաձև վերջույթով պարուրաձև մանյակը մ.թ.ա. II դ. վերջին քառորդից սկսած պարթևական արքաների դիմապատկերներում մանյակի ամենահաճախ հանդիպող տեսակն է:

սակայն, արքայական այս դարդարանքի առկայությունն այքան էլ հստակ չէ (Աղ. 10, 5.1-3): Արքայի պարանոցին աղոտ կերպով նշմարվում են երկու ուռուցիկ շերտեր, որոնք կարելի է ընդունել որպես երկգալար մանյակ<sup>57</sup>, բայց նաև որպես մկանային ծալքեր, ինչն, իմ կարծիքով, ավելի հավանական է<sup>58</sup>: Նկատի ունենալով այդ դրամների շատ լավ պահպանվածությունը, որտեղ յուրաքանչյուր կետ, գիծ և ծավալունի իր գրեթե սկզբնական վիճակը, մանյակն այդպես աղոտ ու անորոշ պատկերներ մտածել է տալիս այն մասին, որ Արտավազդի դիմապատկերը կերտողն այնքան էլ լավ չի իմացել, թե ինչ պիտի պատկերի այդ մասում, հակառակ դեպքում արքայական իշխանության կարևոր խորհրդանշաններից մեկը եղող այդ տարրը նա կպատկերեր նույնքան որոշակիորեն, ինչպես մյուսները, ինչպես դա արված է Արտավազդի դրախմանների կամ էլ պարթևական արքաների դրամների դիմապատկերների վրա:

•  
•

Եռագալար մանյակի այն ձևը, որը կա Արտավազդ II-ի դրախմանների վրա՝ երեք զուգահեռ գծերով, առանց վերջույթի, առաջին անգամ տեսնում ենք նրա ժամանակակցի՝ Որոդ II-ի իշխանության առաջին տարիներին թողարկված դրախմանների վրա (SELLWOOD 1980, type 42, 43): Տիգրան Մեծը դրամների վրա մանյակով չի պատկերվել. Համենայն դեպս, որևէ դրամ ինձ Հայտնի չէ, որտեղ այն անվիճելիորեն առկա լինի:

<sup>57</sup> Այդպես է նկարագրված՝ ՄՈՒՇԵՂՅԱՆ 1964, էջ 317, 319:

<sup>58</sup> Ինչպես, օրինակ, դա լավ երևում է ՄՈՒՇԵՂՅԱՆ 1983, էջ 88-ից Հետո Տիգրան II-ի դրախմայի մեծացված լուսանկարում, կամ Բիթինիայի արքաներ Պրուսիաս II-ի, WROTH, BMC 1889, Pl. XXXVIII, 2, Նիկոմեդես II-ի, նույն տեղում, Pl. XXXVIII, 10, Pl. XXXIX, 1, 2 տետրադրախմանների վրա, Եգիպտոսի Թագուհի Կլեոպատրա VII-ի Ասկալոնում թողարկված տետրադրախմայի վրա, օր. CARSON 1966, Pl. 9, no. 139.

### 3.4 Թագի խորհրդանշանները

Տիգրան Մեծի դրամների վրա հայտնի են թագի հետևյալ խորհրդանշանները: Աստղ (ութաթև, վեցաթև) երկու արծիվների միջև – սա նշանների ամենահաճախ հանդիպող խումբն է: Այն տեսնում ենք տետրադրախմանների, դրախմանների և պղնձե դրամների վրա: Աստղ և արծիվ – միայն Դամասկոսում թողարկված տետրադրախմանների և պղնձե դրամների վրա<sup>59</sup>: Գիսաստղ – տետրադրախմանների<sup>60</sup>, դրախմանների<sup>61</sup>, և դարձերեսին Նիկեի, նոճու, արմավենու ճյուղի և եռոտանու պատկերով պղնձե դրամների մեծ մասի վրա: Միայնակ աստղ – դարձերեսին Նիկեի, նոճու, եռոտանու և, ավելի հազվադեպ, Տիխեի, ամաթեղջյուրի պատկերներով պղնձե դրամների վրա:

Արտավազդ II-ի դրամների վրա հանդիպում են վերոհիշյալ չորս տարբերակներից միայն երկուսը. աստղ երկու արծիվների միջև՝ դրախմանների և պղնձե<sup>62</sup> դրամների վրա, և միայնակ խոշոր աստղ՝ տետրադրախմանների վրա:

Արտավազդ II-ից հետո մնում է խորհրդանշաններից միայն մեկը՝ միայնակ աստղը, որը տեսնում ենք Արտաշես II-ի<sup>63</sup> և նրան հաջորդած մյուս արքաների դրամների վրա, որոնց թագերի նկարագրության մեջ «աստղ երկու արծիվների միջև» խորհրդանշանների խմբի հիշատակման մի քանի դեպքերն

<sup>59</sup> NEWELL 1939, pp. 95–97, no. 147–152; BEDOUKIAN 1978, pp. 48, 49, Pl. 1, 12–15, pp. 65–66, Pl. 5, 109–113, NERCESSIAN 2000, Pl. 7, A2–P1,2.

<sup>60</sup> BEDOUKIAN 1978, p. 48, Pl. 1, 10–11, NERCESSIAN 2000, Pl. 7–8, A1–P2 etc..

<sup>61</sup> CNG 36, 1995, p. 55, no. 565; BEDOUKIAN 1978, p. 55, Pl. 4, 49; NERCESSIAN 1995, p. 60, Pl. 4, 39, NERCESSIAN 2000, Pl. 7–8, a1, a2.

<sup>62</sup> Կնիքների ոչ միշտ խնամքով փորագրման կամ դրանց մաշվածության, դրամների վատ պահպանված կամ մաշված լինելու, նաև կրկնադրոշման հետևանքով Արտավազդ II-ի պղնձե դրամների պատկերագրական մանրամասնությունները շատ հաճախ անճանաչելի են:

<sup>63</sup> ՋԱՐԴԱՐՅԱՆ 2000, նկ. 1 a, VARDANYAN 2001, fig. 1:

ավելի լավ պահպանված դրամների տվյալներով լրացուցիչ ստուգման կարիքն ունեն:

Տարակուսանք է առաջացնում Մարկոս Անտոնիոսի կողմից մ.թ.ա. շուրջ 36 թ. թողարկած արծաթե դենարը, որի դարձերեսին պատկերված հայկական թագը՝ վղկալով և իջեցված ականջակալով, զարդարված է իրար կողք շարված երեք ութաթև աստղերով (Աղ. 11, 1)<sup>64</sup>: Իմանալով Արտավազդ II-ի թագի իրական տեսքը իր իսկ դրամների շնորհիվ, պետք է ենթադրել, որ սա դրամի պատկերները կերտող հռոմեական քանդակագործ-փորագրչի կողմից հայկական թագի ազատ մեկնարանութունն է, որտեղ թագի վերին ելուստները յոթն են, այն դեպքում երբ հայկական թողարկման դրամների վրա կանոնավոր կերպով պատկերվում էին հինգը, հազվադեպ՝ չորսը կամ երեքը (Տիգրան II-ի պղինձների վրա), իսկ Արտավազդի թագի միայնակ աստղը հռոմեական դրամների վրա եռապատկված է: Փորագրիչը պատկերել է հայ արքայական թագ, բայց նույնությամբ չի ընդօրինակել ո՛չ Տիգրանի, և ո՛չ էլ Արտավազդի դրամներից հայտնի թագի ձևը<sup>65</sup>: Գուցե ձևաքիտակ ունենալով թե՛ մեկի և թե՛ մյուսի դրամները, դրանց վրա պատկերված թագերի համադրմամբ փորագրիչը ստեղծել է հայկական թագի մի ընդհանրական, խորհրդանշական պատկեր կամ, պարզապես, ունեցել է ոչ դրամական ծագման մեկ այլ մոդել: Այնուամենայնիվ, ոչ հայկական (հռոմեական,

<sup>64</sup> CROWFORD 1974, II, Pl. LXIV, 539/1; ՊՏՈՒԿՅԱՆ 1971, էջ 31-32, no. 5.

<sup>65</sup> Նեմրութ-դաղի բարձրաքանդակներից մեկի վրա պատկերված կոմմագենեի արքա Անտիոքոս I-ի նախնիներից մեկի խույրը զարդարված է երեք շարք (վերևի և ներքևի շարքերում՝ երեքական, մեջտեղի շարքում՝ չորս) ութաթև աստղիկներով (տե՛ս ШАЛОМБЕРЖЕ 1985, с. 45, рис. 33), իսկ մեկ այլ, աստղագուշական բնույթի բարձրաքանդակի վրա պատկերված առյուծի իրանից վեր (որի մարմնի վրա, հավանաբար որոշակի դասավորությամբ, սփռված են ութաթև աստղեր) պատկերված են տասնվեց ճառագայթներով երեք աստղ-վարդյակներ (նույն տեղում, с. 45, рис. 31): Պատահակա՞ն են, արդյոք, այս զուգադիպութունները, կամ թե ինչպե՞ս են դրանք առնչվում հռոմեական դրամի վրա պատկերված հայկական թագի երեք աստղերին, դժվար է որոշակի պատասխան տալ:

կոմմագենյան, մարական) դրամների վրա պատկերված Հայկական թագերի շարքում սա առաջինը և միակն է, որ պատկերված է մանրամասնորեն: Մնացած դեպքերում դրանք շատ ավելի պայմանական են ու սխեմատիկ<sup>66</sup>:

Ուշագրավ է նաև աստղերի տակ երևացող և ինչ-որ զարդեր պարունակող եզրագոտին: Նման, բայց ավելի նեղ գոտի՝ զարդարված իրար կից, յուրաքանչյուրում մի-մի կետ ունեցող շեղանկյունիների շարքով, կարելի է տեսնել Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսով դրախմանների և տետրադրախմանների լավ պահպանված օրինակների (Աղ. 10.Ա), ինչպես նաև Արտավազդի դրախմանների վրա (Աղ. 2.2 մեծացված լուսանկարը)<sup>67</sup>: Ինչ է իրենից ներկայացնում այդ գոտին. այն թագի ներքևի եզրագոտի՞ն է (ինչպիսին տեսնում ենք, ասենք, կոմմագենեի արքա Անտիոքոս I-ի իրանյան նախնիներից մեկի գլխին պատկերված խույրի<sup>68</sup> կամ կոմմագենյան աստվածուծյունների արձանների և բարձրաքանդակներից մեկի վրա պատկերված Միհր-Ապոլոնի խույրի վրա)<sup>69</sup>, թե՞ արքայական ապարոչը: Տիգրան Մեծի՝ սրանցից տարբերվող դրամների վրա այդ նույն տեղում պատկերված է ապարոչը, բայց առանց զարդարանքի: Առավել հավանական

<sup>66</sup> Հայկական թագը կա մ.թ.ա. 18 թ. Օգոստոս Օկտավիանոսի անունից թողարկված արծաթե դենարների դարձերեսին (Աղ. 11. Բ, ՊՏՈՒԿՑԱՆ 1971, էջ 49-52, no. 11-14), մ. թ. շուրջ 72 թ. կոմմագենեում թողարկված պղնձե դրամների դարձերեսին (NERCESSIAN 1995, p. 98-99, no. 229-231, p. 100, no. 236), անորոշ ծագման պղնձե դրամների դիմերեսին (CNG 36, p. 62, no. 660-662; NERCESSIAN 1995, p. 101, no. 244):

<sup>67</sup> Տե՛ս Սառնակունքի գանձից Տիգրան Մեծի (ՄՈՒՇԵՂՑԱՆ 1973, no. 123 և 128) և նույն գանձից Արտավազդի դրախմանների մեծացված լուսանկարները՝ Աղ. 2.2, ինչպես նաև АРАКЕЛЯН 1996, тб. LXXVI (= ՄՈՒՇԵՂՑԱՆ 1973, no. 129) և ՄՈՒՇԵՂՑԱՆ 1997, էջ 50, նկ. 19 (= ՄՈՒՇԵՂՑԱՆ 1973, no. 130):

<sup>68</sup> Տե՛ս ШАКОМБЕРЖЕ 1985, с. 45, рис. 33. Այստեղ այդ գոտին զարդարված է շեղանկյունների և օղակների իրար հաջորդող շարքով:

<sup>69</sup> Տե՛ս, օր., АРАКЕЛЯН 1996, тб. XXIV-XXVII. Չարդանախչերը Հստակ չեն երևում, բայց դրանք, կարծես, ուրիշ են:

է թվում, որ քանդակագործ-փորագրիչն ապարոշը և թագի ներքևի եզրագոտին միավորել է նույն պատկերագրական տարրի մեջ:

### 3.5 Դիմապատկերը դիմարվեստի տեսանկյունից

Այս խնդիրը քննության է առնվել Գ. Տիրացյանի, Բ. Առաքելյանի, Ս. Մուշեղյանի կողմից<sup>70</sup>:

Գ. Տիրացյանը մատնանշում է «...հայկական դրամների ու հռոմեական հանրապետական դիմաքանդակի ոճի խորապես հակադիր բնույթը», եզրակացնելով, որ «Տիգրանի ու Արտավազդի դրամների ավելի ընդհանրացնող ու պլաստիկ ոճը անհարիր է հանրապետության ժամանակաշրջանի հռոմեական քանդակների ռեալիստականությանը: Հայ թագավորների դիմաքանդակների ոճաբանական վերլուծությունը ցույց է տալիս նրանց տեղը հելլենիստական դիմարվեստի շրջանակում, որտեղ իդեալականացնող գծերը հաջող կերպով միաձուլվում են ռեալիստականի հետ»<sup>71</sup>: Հեղինակն ուշադրություն է դարձնում Արտավազդի դրամական դիմապատկերներում երկու տարբեր ոճերի առակայության վրա. «Изображение Артавазда на одной монете (Փարաֆարի տետրադրախման, ցույց. 5.3 - Ռ.Վ.) пластичное. с крупными объемами, передающего волевого человека. Изображение на другой монете (Սառնակունքի դրախմաններից մեկը, ցույց. 2.2 - Ռ.Վ.) отличается более тонкой моделировкой лица, с бликами света, подчеркивающими его характерные черты (на бровях, скулах и

<sup>70</sup> Արտավազդի դիմապատկերը հունա-հռոմեական դիմարվեստի կոնտեքստում ուշադրության է արժանացել նաև այլ հեղինակների կողմից, բայց այդ աշխատություններն ինձ անհասանելի են, և ես ծանոթ չեմ նրանցում ներկայացված տեսակետներին:

<sup>71</sup> ТИРАЦИЯН 1973, с. 60.

погбородке), выдающие более нервную натуру. Некоторое патетическое настроение, исходящее от исполненного в слегка экспрессионистической манере изображения...»<sup>72</sup>:  
 Կարևոր են համարում մեջբերել Գ. Տիրացյանի և մի եզրահանգում, որը վերաբերում է Տիգրանի և Արտավազդի դիմապատկերներին միաժամանակ. «С одной стороны, они тесно связаны с каноническими приемами, имеющими целью представить данную личность облагороженной, приукрашенной, идеализированной, с другой - отдают некоторую дань специфическим, индивидуальным чертам, дающим данному изображению право на портретность»<sup>73</sup>:

Բ. Առաքելյանը նշելով, որ գեղարվեստական ձևավորմանը և դեմքի մտաուլիզ արտահայտությամբ Արտավազդի դիմապատկերը մոտ է Տիգրան II-ի՝ նրա տեղական թողարկման դրամների վրա եղած, պատկերին, ավելացնում է. «Изображение Тиграна II и Артавазда II на выпущенных ими монетах свободны от чрезмерной идеализации и не только весьма реалистично передают этнический облик царей, но и в известной мере отражают черты их характера и настроение», եզրակացնելով, որ Տիգրան II-ից սկսած հայ արքաների դրամները «... гармонически и искусно сочетают местные черты (форма короны, этнический облик царя) с эллинистическими (безбородое лицо, эллинистическая манера передачи портрета...)»<sup>74</sup>:

Ս. Մուշեղյանը, գտնում է, որ Տիգրան Մեծի օրոք Հայաստանի և Հռոմի միջև սկսված ուղղակի ռազմա-

<sup>72</sup> ТИРАЦЯН 1973, с. 54.

<sup>73</sup> ТИРАЦЯН 1973, с. 52.

<sup>74</sup> АРАКЕЛЯН 1976, с. 65-66.

քաղաքական հարաբերությունները չէին կարող նոր հնարավորություններ չբացել հռոմեական մշակույթի և հռոմեական դիմարվեստի սկզբունքների ներթափանցման համար հայ արիստոկրատական վերնախավի ու, հետևաբար, նաև տեղական նկարիչների շրջանում, բայց նույնը չի կարելի ասել Արտավազդ II-ի դիմապատկերների մասին «который на большинстве своих монет (грахм) представлен с правильными и нежными чертами лица. Если представить его без короны и других царских украшений (серьга в ухе, ожерелья на шее), то перед зрителем вырисовывается прекрасный облик молодого человека, похожего на божественного Аполлона-Арега у армян. Такая идеализация царского портрета наблюдается на монетах, помеченных шестым и седьмым годами правления Артавазда II. В дальнейшем, в конце его царствования монеты отражают более реальные черты этого монарха - толстую шею, твердо очерченные скулы и подбородок. Портрет на монете, выпущенной на 18 году царствования Артавазда II, т. е. в 38-37 гг. до н. э., отражает преимущество реалистического стиля изображения и заметное отступление от традиционных норм идеализации»<sup>75</sup>: Ս. Մուշեղյանն անփոփոց է հետևյալ եզրակացությունը. «С самого начала до 30-х гг. I в. до н. э. господствовала тенденция идеализации царских лиц с отражением реальных черт каждого индивидуума. Начиная с 30-х гг. I в. до н. э. в портретах армянских царей проявлялось стремление передать их реальные черты. Это реалистическое направление в портретном искусстве

<sup>75</sup> Мушегян 1978, с. 5-6.

усиливается во времена римского господства, когда Армения находилась в непосредственной зависимости от Римской империи»<sup>76</sup>:

Ինչպես տեսնում ենք, և՛ Գ. Տիրացյանը, և՛ Ս. Մուշեղյանը իրավամբ տարբերակում են Արտավազդի դրախմանների և տետրադրախմանների դիմապատկերները, դրանց մեջ նկատելով էական տարբերություններ: Դրախմանների դիմապատկերը բնութագրելիս Գ. Տիրացյանը մատնանշում է դեմքի նուրբ մոդելավորումը, դեմքին անհատականություն հաղորդող գծերի (հոնքերի, այտոսկրի և դնչի) ընդգծվածությունը, որոնք ներկայացնում են ավելի նյարդային բնավորության տեր անձնավորության՝ որոշ չափով հուղախառն տրամադրության վիճակում: Ս. Մուշեղյանը արքային նկարագրում է որպես կանոնավոր ու նուրբ դիմագծերով գեղեցիկ երիտասարդի, նրա իդեալականացված դիմապատկերում տեսնելով աստվածային Ապոլոն-Արեգի կերպարը: Տետրադրախմայի դիմապատկերը բնութագրելիս Գ. Տիրացյանը ընդգծում է խոշոր և պլաստիկ ծավալների առկայությունը՝ նրանում որսալով կամային մարդու հատկանիշներ: Ս. Մուշեղյանը գտնում է, որ այս դիմապատկերն արտացոլում է արքայի իրական դիմագծերը՝ հաստ պարանոցը, ցայտուն գծագրված այտոսկրը և դունչը, որով դիմապատկերը զգալիորեն նահանջ է արձանագրում իդեալականացման ավանդական նորմերից և որում գերակշռում է ռեալիստական միտումը: Երկու հեղինակների տված բնութագրությունները, միմյանց լրացնելով, ամբողջացնում են դիմապատկերների գեղագիտական ընկալման մեկնաբանությունը:

Ակներև է, որ դրախմանների դիմապատկերներում ավելի է զգացվում արքայի կերպարի իդեալականացման, իսկ տետրադրախմանների դիմապատկերներում՝ նրա անհատական կերպարը ներկայացնելու ձգտումը:<sup>77</sup> Դրախմանների վրա

<sup>76</sup> МУШЕГЯН 1978, с. 9.

<sup>77</sup> Ե. Ներսեսյանը տալիս է ճիշտ հակառակ մեկնաբանությունը. «Օր

կարող ենք տեսնել և՛ բավական բարձր ոճի, և՛ միջակ կատարման դիմապատկերներ (Աղ. 2): Այժմ մեզ հայտնի երեք տետրադրախմաները, թողարկված լինելով դիմերեսի և դարձերեսի տարրեր զույգ կնիքներով<sup>78</sup>, նույնպես ներկայացնում են Արտավազդի բավական տարրեր դիմապատկերներ: Բայց այստեղ տարրերությունը ոչ թե կատարման որակի մեջ է (դիմաքանդակի պլաստիկ հնարավորությունները կիրառված են հմտորեն); այլ արքայի դեմքի պատկերման բազմազանության: Տետրադրախմաներից երկուսը, թողարկված համապատասխանաբար մ.թ.ա. 38 և 37 թթ., արքային պատկերում են թեև արդեն ոչ հասուն պատանեկան (ինչպես դրախմաների վրա), բայց դեռևս երիտասարդ, չափավոր նուրբ ու կանոնավոր, միևնույն ժամանակ՝ իրարից զգալիորեն՝ տարրեր դիմագծերով (Աղ. 10, 5.1, 5.3), իսկ մ.թ.ա. 38 թ. թողարկված մյուս տետրադրախմայի վրա արքան միջին տարիքի, ընդգծված այտուկրով, ծանր զանգվածեղ ծնոտով տղամարդ է (Աղ. 10, 5.2): Այս վերջինս թերևս ամենահեռուն է դիմարվեստում իդեալականացնող ուղղության կանոններին հետևելու տեսանկյունից, բայց և նշանակում է, արդյոք, որ այն ամենամոտն է Արտավազդի հավաստի դիմապատկերին:

Արտավազդի դրամական դիմապատկերների ոճն, անշուշտ, չի տեղավորվում հռոմեական-հանրապետական դիմապատկերի շրջանակներում, եթե նկատի ունենանք վերջինիս ծայրահեղ դրսևորումը՝ «անդիջում վերիդմը»: Սակայն, եթե մի կողմ թողնենք հելլենիստական և հռոմեական դիմարվեստի ծայրագույն միտումները, ապա Արտավազդի դիմապատկերներն, ընդհանուր առմամբ, ներկայացնում են այն միջին ուղղությունը, որը կարելի է տեսնել թե՛ հելլենիստական, և թե՛ հռոմեական դիմապատկերներում: Դրախմաներում,

---

tetradrachms he has an idealized portrait without emotions; on the drachms his features seem to be more humane and down to earth man», NERCESSIAN 2003, p. 8.

<sup>78</sup> Փաստ, որը ենթադրել է տալիս տետրադրախմաների թողարկման մեծ քանակ:

իրոք, գերակշռում է իդեալականացնող ոճը ու, թերևս, Ս. Մուշեղյանը ճիշտ է, երբ նրանցում նկատում է աստվածային կերպար ներկայացնելու միտում (տե՛ս, մասնավորապես, Աղ. 2.1-2): Մինչդեռ տետրադրախմաներում ավելի շատ ի հայտ է գալիս ունայիստական պատկերման միտումը: Այս վերջինս, սակայն, ոչ միայն օտար չէր հելլենիստական դիմապատկերին, այլև նրանում հայտնի են այդ ոճի դրսևորման փայլուն նմուշներ<sup>79</sup>: Արտավազդի դիմապատկերներն, իհարկե, տեղադրվում են հելլենիստական դրամական դիմարվեստի շրջանակներում, սակայն ինչպես Տիգրան Մեծի իշխանության ուշ շրջանում թողարկված «արքայից արքա» տիտղոսով դրամների դիմապատկերներում, Արտավազդի դրամների, մասնավորապես՝ տետրադրախմաների դիմարվեստում անկասկած զգացվում է Հռոմից եկող մի նոր շունչ, որը որոշ ոճական թարմություն է հաղորդում հայկական դրամական դիմարվեստին՝ ի տարբերություն Տիգրան Մեծի վաղ թողարկման դրամների, որտեղ առկա է Սելևկյան դիմարվեստի ոգով կերտված «անդեմ» իդեալականացնող ոճը:

<sup>79</sup> Տե՛ս, օրինակ, դրանցից մի քանիսը՝ NEWELL 1937.

#### 4. ԱՐՏԱՎԱԶԴ Ի-Ի ԴՐԱՄՆԵՐԻ ԴԱՐՁԵՐԵՍԻ ՊԱՏԿԵՐԱՏԻՊԵՐԸ

Իր արձաթե թողարկումներում Արտավազը ներմուծեց դարձերեսի նոր պատկերատիպ՝ գլխին ճառագայթող պսակունեցող կառապանի կողմից ղեկավարվող քառաձի կառք (կվադրիգա): Պղնձե թողարկումներում նա պահպանեց Տիգրանի պղնձե դրամների մեկ տասնյակից ավելի պատկերատիպերից միայն երկուսը՝ Նիկեն և նոճին:

##### 4.1 Կվադրիգան հունա-հռոմեական դրամներում

Կվադրիգան՝ չորս ձիերով լծված, դրահով պատված երկանիվ կառքը, մ.թ.ա. VII դարից սկսած հին հույներն օգտագործում էին միայն մրցարշավներում: Միաժամանակ, այն սկսում էր ձեռք բերել նաև հաղթակառքի խորհրդանշական իմաստ: Կվադրիգայի վրա պատկերվում էին աստվածները, ինչպես օրինակ Պարթենոնի ճակատնի անկյուններում՝ Հելիոսը և Սելենեն:

Կվադրիգայի պատկերով հնագույն դրամները թողարկվել են Սիցիլիայում 520-490 թթ.: Որպես հաղթակառք դրամական պատկերագրություն մեջ կվադրիգան առաջին անգամ հայտնվում է Սիցիլիայի Գելա քաղաքի բռնակալ Գելոն I-ի դրամների դարձերեսին, 488 թ. օլիմպիական խաղերի ձիարշավային մրցավազքում նրա տարած հաղթանակի առիթով: Այդ տետրադրախմաները թողարկվել են նախ Գելայում, ապա, 485 թ. նրա կողմից Սիրակուսան նվաճելուց հետո՝ նաև այստեղ: Ձիերից վեր պատկերված է ճախրող Նիկեն, որը Գելայում թողարկված դրամների վրա պսակը պահել է ձիերի գլխավերևում, իսկ սիրակուսյան թողարկումներում նա պատկերված

է դեպի կառապանը ճախրելիս և նրա գլխին պսակ դնելիս, որն ինքը՝ Գելոնն է (MIRONE 1927, nos 8-10):

Այնուհետև կվաղրիզան պատկերվել է 479 թ. Սիրակուսայում թողարկված դեկադրախմանների և տետրադրախմանների վրա, որոնցում ձիերի ուղղությամբ ճախրող Նիկեն պսակը պահում է նրանց գլխավերևում: Այս դրամների թողարկման առիթն այլևս ազոնիստական չէր, այլ Համիլկարի և կարթագենացիների դեմ Գելոնի և սիրակուսացիների տարած հաղթանակն էր Հիմերում, 480 թվականին: Նույն այս առիթով, Սիցիլիայի Լեոնտինի քաղաքում հատվում են տետրադրախմաններ դարձերեսի նույնպիսի պատկերատիպով (MIRONE 1927, no. 15), ինչպես նաև կառապանին պսակող ճախրող Նիկեի պատկերով (MIRONE 1927, no. 16): Այս դրամները թողարկողը Լեոնտինին իրեն ենթարկած Գելայի բռնակալ Հիպոկրատեսն էր, որը կարթագենացիների դեմ պատերազմում Սիրակուսայի դաշնակիցն էր:

Պատերազմական հաղթակառքի դերում կվաղրիզան կրկին հայտնվում է Գելայի և Սիրակուսայի տետրադրախմանների վրա 474 թ., Կիմեում էտրուսկյան ծովահենների դեմ Սիրակուսայի բռնակալ Հիերոն I-ի տարած հաղթանակի առիթով: Այս դրամների վրա Նիկեն պատկերված է ձիերի գլխավերևում պսակ բռնած:

Հիսուն տարի անց, սիրակուսացիները և Սիցիլիայի Ակրագանտ, Հիմերա, Մեսսինա քաղաքների բնակիչները մի նոր առիթ են ստանում իրենց դրամների վրա հաղթական կվաղրիզա պատկերելու համար (MIRONE 1927, nos 40-43, 46): Այս անգամ թողարկված տետրադրախմանների վրա Նիկեն պսակում է կառապանին, խորհրդանշելով 425 թվականին Մեսսինայի նեղուցում աթենացիների դեմ սիրակուսացիների տարած հաղթանակը:

413 թ. Սիրակուսան պաշարած աթենացիների դեմ քաղաքի նավահանգստում տարած վերջնական հաղթանակից հետո, սիրակուսացիներն այն կրկին նշանավորեցին հաղթակառքի պատկերով տետրադրախմանների և դեկադրախմանների

Թողարկմամբ, որոնց վրա դեպի կառապանը ճախրող Նիկեն պսակ է դնում նրա գլխին՝ մյուս ձեռքում ունենալով ծովամարտի հաղթանակի խորհրդանշանը՝ ապյուստրը (MIRONE 1927, nos 50, 52):

Այսպիսով, մ.թ.ա. V դարում սիցիլիական քաղաքներում Թողարկվող դրամների դարձերեսի ամենասիրված պատկերատիպը՝ կվադրիգան և նրա վերևում ճախրող Նիկեն, խորհրդանշում էր հաղթանակը. մի դեպքում՝ մրցամարտային (Գելոն I), մյուս բոլոր դեպքերում՝ ռազմական: Պատկերագրական այս հորինվածքի զանազան տարբերակներով դրամների Թողարկումն իր ծաղկումն ապրեց V-IV դարերում, իսկ Սիրակուսայում այն հասավ մինչև մ.թ.ա. 212 թվական, երբ հռոմեացի Մարկելոսի կողմից գրավված քաղաքում փակվեց երեք հարյուր տարի ակտիվորեն գործած դրամահատարանը<sup>80</sup>:

\* \* \*

Մինչ այդ, հռոմեացիներն արդեն հասցրել էին ընդօրինակել չորս ձիերով լծված կառքի մոտիվը իրենց դրամաթողարկումներում: Կվադրիգայի վրա կանգնած աստվածուծուծյան պատկերով դարձերեսի տիպը հռոմի դրամների վրա հայտնվեց մ.թ.ա. 225 թ.<sup>81</sup>: Ըստ Մ. Քրաուֆորդի, այս տիպը հռոմեացիների կողմից ընտրվել էր որպես պատասխան գալլիական սպառնալիքի: «Կվադրիգատ» կոչված դիդրախմաների Թողարկման առաջին փուլը տևում է մինչև 212 թ.: Դարձերեսի այս տարբերակը ներկայացնում էր Վիկտորիայի կողմից կառավարվող կվադրիգայի վրա կանգնած Յուպիտերին<sup>82</sup>: Մ.թ.ա. 216-211 թվականներին հռոմից անկախացած

<sup>80</sup> ROBINSON 1971, p. 117.

<sup>81</sup> CRAWFORD 1974, p. 715. այլ հեղինակների մոտ կարելի է հանդիպել 235 թ., որպես կվադրիգատների Թողարկման սկիզբ:

<sup>82</sup> Յուպիտերն այն աստվածուծուծուն էր, որի պատվին կատարվում էր հռոմեական հաղթահանողները: Յուպիտերի արձանը կվադրիգայի վրա կանգնեցված էր Կապիտոլյան տաճարի կատարին: Հռոմեացիները հավատում էին, որ հռոմի հզորութունը կախված է այդ արձանի ապահովութունից: Հռոմում կար նաև Յուպիտեր

Կապուա քաղաքում ևս թողարկվում են էլեկտրոնե դրամներ, որոնց դարձերեսին պատկերված էր Նիկեի կողմից ղեկավարվող դեպի աջ արշավող կվադրիգա և Ջևսը՝ նրանում կանգնած<sup>83</sup>:

Հոռմում «կվադրիգատ» դենարների թողարկումը երկար ընդմիջումից հետո վերսկսվում է մ.թ.ա. 142 թ. և գրեթե ամեն տարի անընդմեջ շարունակվում մինչև մ.թ.ա. 82 թ.: Այս փուլում, Յուպիտերից բացի, կվադրիգայի վրա պատկերվում էին հռոմեական պանթեոնի նաև այլ աստվածություններ: Հիմնական տիպը կվադրիգայի վրա կանգնած աստվածությունն էր, բայց կա տարբերակ, որտեղ կվադրիգայի վրա կանգնած Յունոնայի հետևում պատկերված Վիկտորիան նրա գլխին պսակ է դնում (CRAWFORD 1974, nos 223, 240): 125 թ. առաջին անգամ ի հայտ է գալիս մեզ հետաքրքրող տարբերակը, որտեղ պատկերված է կվադրիգայի վրա կանգնած աստվածություն (տվյալ դեպքում՝ Լիրերտասը) և ձիերի վրայով նրան ընդառաջ ճախրող Վիկտորիան՝ դեպի աստվածությունը պարզած պսակը ձեռքին (CRAWFORD 1974, no. 270.1): Ձիերից վեր, պսակը ձեռքին ճախրող Վիկտորիան կրկին հայտնվում է 90 և 87 թթ. թողարկումներում (CRAWFORD 1974, no. 342.5a, Միներվա, CRAWFORD 1974, no. 348.1-3 առանց կառապանի) և այս շարքում ամենահետաքրքիրը 82 թ. Սուլլայի օրոք թողարկված աուրեուսները և դենարներն են, որոնց դարձերեսին պատկերված է կվադրիգայի վրա կանգնած տրիումֆատորը՝ Սուլլան<sup>84</sup>, և նրան ընդառաջ ճախրող Վիկտորիան, պսակը ձեռքին, ինչն ակնարկում է Սուլլայի տրիումֆը (հաղթահանդեսը) Հոռմում:

Սուլլայից հետո կվադրիգատների թողարկումը դառնում է ոչ կանոնավոր (CRAWFORD 1974, nos 391, 402, 420, 422, 465):

Վիկտորի տաճար, CRAWFORD 1974, p. 715:

<sup>83</sup> *St'au, op., Credit Suisse, Auction 4, 3 December 1985, no. 4.*

<sup>84</sup> Մ. Քրաուֆորդը կվադրիգայի վրա կանգնած անձնավորությունն անվանում է տրիումֆատոր (CRAWFORD 1974, p. 386, 732), իսկ Ջ. Բելլոնին՝ պարզապես Սուլլա (BELLONI 1960, p. 159):

Հանրապետական կվադրիդատների այս վերջին շարքում ամենանշանակալիցը Պոմպեոսի աուրեուսներն են, որոնց դարձերեսին կվադրիդայի վրա պատկերված է ինքը՝ Պոմպեոս Մեծը, իսկ ճախրող Վիկտորիան պսակը պահել է ձեռքի գլխավերևում: Հետազոտողները սա համարում են հաղթահանդեսի առիթով կատարված թողարկում: Մ. Քրաուֆորդը թվագրման երկու հնարավորություններից՝ 71 և 61 թթ., երբ տեղի են ունեցել նրա հաղթահանդեսները, ավելի հակված է առաջինի կողմը, թեև նրա փաստարկները բավականաչափ ծանրակշիռ չեն<sup>85</sup>: Հ. Գրյուբերը, է. Սիդենհամը և Ի. Բելլոնին այն թվագրում են 61 թվականով և վերագրում են արևելյան պատերազմների առիթով կաղնակերպված նրա նշանավոր հաղթահանդեսին<sup>86</sup>: Հ. Մաթինգլին այս թողարկումը թվագրում է 49 թ. հետո, որն, ըստ Քրաուֆորդի, անհնար է՝ կշռային ստանդարտի չափազանց բարձր լինելու պատճառով<sup>87</sup>:

Պոմպեոսի այս տրիումֆային թողարկումից հետո ևս երեք անգամ թողարկվել են կվադրիդայի պատկերով դենարներ՝ 60 և 58 թթ. (Յուպիտերը կվադրիդայի վրա դեպի ձախ, CRAWFORD 1974, nos 420, 422) և 46 թ. (Վիկտորիան կվադրիդայի վրա դեպի աջ), որոնցում, սակայն, բացակայում է պսակը ձեռքին ճախրող Վիկտորիան:

Այսպիսով, Հանրապետական Հռոմի կվադրիդայի պատկերով թողարկումների շարքում առանձնանում են հետևյալ չորս հիմնական պատկերազրական տիպերը.

ա) Յուպիտերը կվադրիդայի վրա կանգնած, Վիկտորիան կառապանի դերում:

<sup>85</sup> CRAWFORD 1974, pp. 83, 413.

<sup>86</sup> BELLONI 1960, p. 195, ուր նա հղում էm E.A. Sydenham, *The Coinage of the Roman Republic*, 1952; H.A. Grueber, *Coins of the Roman Republic in the British Museum*, 1910. Բելլոնին կարծում է, որ դրամը կարող է թողարկված լինել Արևելքում, բայց նշում է, որ դրամահատարանը հայտնի չէ:

<sup>87</sup> CRAWFORD 1974, p. 83.

Պատկերը, թողարկումների մեծ մասում, ուղղված է դեպի աջ (CRAWFORD 1974, nos 28.3, 29.3, 30.3, 31.1, 32.1, 33.1, 34.1, 42.1), բայց կան նաև դեպի ձախ ուղղված պատկերով թողարկումներ (CRAWFORD 1974, nos 28.4, 29.4, 30.4): Այս պատկերատիպն ամենավաղն է և թվագրվում է մ.թ.ա. 225-212 թթ.:

բ) Յունոնյան կվադրիգայի վրա կանգնած, Վիկտորիան հետևից նրա գլխին պսակ է դնում: Պատկերն ուղղված է դեպի աջ (CRAWFORD 1974, nos 223.1, 240.1a,b): Այս դրամները թողարկվել են մ.թ.ա. 142 և 135 թթ.:

գ) Աստվածուծյունը (Յուպիտերը՝ CRAWFORD 1974, nos 227, 238.1, 241.1a,b, 248.1, 256.1, 257.1, 271.1, 273.1, 276, 279.1, 285.1-2, 310, 325.1a,b, 350A, 420, 422, Մարսը՝ CRAWFORD 1974, nos 232.1, 244.1, 252.1, Ապոլլոնը՝ CRAWFORD 1974, no. 236, Վիկտորիան՝ CRAWFORD 1974, nos 246.1, 249.1, 253.1, 275.1, 280.1, 352.1, 364, 366, 465.3-5, Սոլը՝ CRAWFORD 1974, no. 250.1, Հերկուլեսը՝ CRAWFORD 1974, no. 255.1, Լիրերտասը՝ CRAWFORD 1974, no. 266.1, Սատուրնը՝ CRAWFORD 1974, no. 317.2-3, Միներվան՝ CRAWFORD 1974, nos 341.4b, 5b, 6, 354.1), ինչպես նաև՝ տրիումֆատորը (CRAWFORD 1974, nos 326.1 (Մարիուսը), 358) կվադրիգայի վրա կանգնած:

Պատկերը գերազանցապես ուղղված է դեպի աջ, բացառությամբ CRAWFORD 1974, nos 342.5a (90 թ.), 358 (83 թ.), 420 (60 թ.), 422 (58 թ.) և 465 (46 թ.) թողարկումների, որտեղ այն դեպի ձախ է: 140-ից մինչև 81 թ. այս պատկերատիպով դրամները թողարկվել են կանոնավոր կերպով: Ինչպես կարելի է նկատել, դեպի ձախ ուղղված պատկերով դրամների թողարկումներն ընկնում են 90 թվականից հետո:

դ) Աստվածուծյունը (Լիրերտասը՝ CRAWFORD 1974, no. 270, Միներվան՝ CRAWFORD 1974, no. 342.4a, 5a) կամ տրիումֆատորը (Սուլլա՝ CRAWFORD 1974, no. 270 (82 թ.), Պոմպեոս՝ CRAWFORD 1974, no. 402 (61 թ.)) կվադրիգայի վրա կանգնած, վերևում ճախրող Վիկտորիան պսակ է մատուցում կա՛մ անձնավորությանը (CRAWFORD 1974, nos 270, 342.4a, 5a, 367), կա՛մ այն պահել է ձիերի գլխավերևում (CRAWFORD 1974, no. 402): Կա այս պատկերատիպի մի տարբերակ, որտեղ պատկերված է միայն հաղ-

Թական կվադրիգա, առանց կառապանի, բայց կառքի կողը զարդարված է կայծակի հարվածի (CRAWFORD 1974, no. 348.1) կամ արծվի ու կայծակի հարվածի (CRAWFORD 1974, no. 348.2)՝ Յուպիտերի ատրիբուտների, պատկերներով: Վերևում ճախրող Նիկեն է՝ պսակը ձեռքին:

Բոլոր թողարկումներում կվադրիգան պատկերված է դեպի աջ, բացառությամբ CRAWFORD 1974, no. 342.4a-ի, որտեղ այն ուղղված է դեպի ձախ: Այս պատկերատիպը հայտնվել է 125 թ. (CRAWFORD 1974, no. 270), իսկ մնացածները թողարկվել են մ.թ.ա. I դ. առաջին կեսի ընթացքում՝ CRAWFORD 1974, nos 342 (90 թ.), 367 (82 թ.), 402 (61 թ.):

Հռոմեական դրամների կվադրիգայով (ինչպես նաև՝ բիզայով) պատկերատիպերը նույնպես խորհրդանշում էին հաղթանակի գաղափարը:

\* \* \*

Սելևկյան դրամական պատկերագրությանն ավելի բնորոշ էր, այն էլ վաղ փուլում՝ միայն Սելևկոս I-ի դրամների վրա, Աթենասի կողմից կառավարվող չորս փղերով լծված կառքը, որի վերևում, սովորաբար, պատկերվում էր Սելևկոսի խորհրդանշանը՝ խարիսխը<sup>88</sup>: Դրամական այս տիպի ի հայտ գալը որոշակիորեն կապվում է հնդիկների դեմ մղած պատերազմից հետո Սելևկոսի և հնդիկների թագավոր Չանդրագուպտայի միջև կնքված հաշտության պայմանագրի հետ, ըստ որի Սելևկոսը զիջելով գրավյալ տարածքների մի մասը, դրա դիմաց ստացավ 500 մարտական փղեր, որոնք նա օգտագործում էր արևմուտքի իր հակառակորդների դեմ: Այս դրամների թողարկմամբ Սելևկոսը փառաբանում էր իր ռազմական հզորությունը և հաղթանակները:

Սելևկյան դրամական պատկերագրության մեջ ձիերով լծված կվադրիգայի տիպը հանդիպում է միայն մեկ անգամ՝ բռնատեր Տիմարքոսի (մ.թ.ա. 162-160 թթ.) հաղվազյուտ ոսկե ստատերի վրա: Անտիոքոս IV-ի կողմից նշանակվելով

<sup>88</sup> BABELON 1890, Pl. III, 1-6.

Բաբելոնի սատրապ, Տիմարքոսը շուտով ապստամբում է նրա հաջորդի՝ Անտոխոքոս V-ի դեմ և իրեն արքա է հռչակում Բաբելոնում: Դեմետրիոս I-ը գահ բարձրանալով, Տիմարքոսին մահապատժի է ենթարկում, որի համար Բաբելոնի բնակիչները նրան շնորհում են Սոտեր (փրկիչ) տիտղոսը: Տիմարքոսի ստատերի դարձերեսին պատկերված է դեպի աջ սլացող ձիերով լծված կվադրիգա, վերևում ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ, ներքևում ΤΙΜΑΡΧΟΥ գրություն<sup>89</sup>:

Վաղհելլենիստական ժամանակաշրջանում արչավող ձիերով կվադրիգա դեպի աջ պատկերվել է Տիրեննի ոսկե մի ստատերի (մ.թ.ա. շուրջ 322 թ.)<sup>90</sup>, ինչպես նաև մ.թ.ա. մոտավորապես III դարի կեսին վերաբերող վաղպարթևական ոսկե ստատերների վրա: Դրանցից մեկը կրում է գրական աղբյուրներում հիշատակված Պարթևքի կառավարիչ Անդրագորասի անունը հունարեն գրությամբ: Դրամի դարձերեսին պատկերված կվադրիգան կառավարվում է նիկեի կողմից, որի հետևում կառքի վրա կանգնած անձնավորությունը, հավանաբար, Անդրագորասն է<sup>91</sup>: Մյուսը կրկնակի ստատեր է, արամեերեն գրությամբ: Դարձերեսին այն նույնպես ունի դեպի աջ սլացող ձիերով լծված կվադրիգա, որի կառապանը, դատելով գլխարկից, նույն ինքը կառավարիչն է, որի դիմապատկերը ղևտեղված է դրամի դիմերեսին<sup>92</sup>:

Ձիերով լծված աքեմենյան կառքերի և մարտակառքերի պատկերագրական ավանդույթը, գալով ասորեստանյան ակունքներից, այնուհետև ձևափոխվելով ու հարստանալով

<sup>89</sup> BABELON 1890, p. CXV, fig. 25.

<sup>90</sup> Տե՛ս, օր., CNG XXVII, Classical Coins, 29 September 1993, no. 816.

<sup>91</sup> ЗЕЙМАЛЬ 1979, с. 81, ном. 0448-0450.

<sup>92</sup> ЗЕЙМАЛЬ 1979, с. 81-82, ном. 0454. Տիրակալի անվան ընթերցման հարցում միասնական կարծիք չկա: Երկար ժամանակ այն ընթերցվում էր որպես Վախշուվար, հետագայում Ի. Դյակոնովը և Ե. Ջեյմալն առաջարկեցին ընթերցել Անդրագոր (ДЬЯКОНОВ, ЗЕЙМАЛЬ 1988, с. 4-19), իսկ Հ. Կոխը՝ Պրիապատ (КОХ 1993, pp. 165-173):

արևելամիջերկրական և հոնիական տարրերով<sup>93</sup>, ուներ ուրույն արևելյան բնույթ: Դրանք հանգիստ քայլող երկու ձիերով լծված կառքեր են, ինչպես, օրինակ, Պերսեպոլսի ապագանայի բարձրաքանդակում, որտեղ կառապանը արքան է<sup>94</sup>: Ամուղարյան գանձի կաղմում, չորս ձիերով լծված երկանիվ կառքի ոսկեձույլ ամբողջական մանրակերտի ձիերը պատկերված են անշարժ դիրքում: Մարական զգեստով մի իշխանավոր (արքա)՝ ապարոշով ու մանյակով, նստած է նստարանին, իսկ նրա կողքին կանգնած է կառապանը՝ նույնպես մարական զգեստով, բայց առանց իշխանական տարրերանշանների<sup>95</sup>: Պատկերագրական այս մոդելը տեսնում ենք փյունիկյան Սիդոն քաղաք-պետության դրամների դարձերեսին, որտեղ պատկերված է երեք քայլող ձիերով լծված երկանիվ կառք, որի կառապանը Բաալ աստվածությունն է, իսկ նրա հետևում պատկերված է Սիդոնի թագավորը եգիպտական զգեստով<sup>96</sup>:

#### 4.2 Կվադրիգան Արտաշեսյանների դրամներում

Այսպիսով, կվադրիգան դրամների վրա հայտնի է մ.թ.ա. VI դարի վերջից: Այն երեք դար շարունակ պատկերվել է Սիցիլիայի դրամների վրա, ապա ժառանգվել է Հռոմի կողմից: Հելլենիստական Արևելքում կվադրիգայի պատկերով թողարկումները եղել են հազվագեղ: Ունի՞, արդյոք, Արտավազդի դրամների կվադրիգան պատկերագրական նախատիպ: Եթե այո, ապա այն կապվում է հունա-հելլենիստակա՞ն, թե՞

<sup>93</sup> ЗЕЙМАЛЬ 1979, с. 38, որտեղ այս մասին հղում է՝ O.M. Dalton, *The Treasure of the Oxus with Other Examples of Early Oriental Metalwork*, 3rd edition, London, 1964, pp. XXXVII-XLIII.

<sup>94</sup> КОСН 1992, Abb. 84.

<sup>95</sup> ЗЕЙМАЛЬ 1979, кат. 7, с. 37-38.

<sup>96</sup> Կամ Իրանի արքայից արքան և նրա սպասավորը՝ եգիպտական զգեստով, տե՛ս CNG 51, 15 September 1999, no. 576-586.

Հռոմեական ավանդույթի հետ: Վերը բերված դուգահեռները ցույց են տալիս, որ կվադրիգայում կանգնած աստվածուծայան գաղափարը չէ, պարզապես, որ հիմք է ծառայել Արտավազդի այդ պատկերատիպի ստեղծման համար, այլ արդեն գոյություն ունեցած և դարերի ընթացքում ձևավորված ու կիրառված պատկերազրական ավանդույթը: Այդ ավանդույթներից ո՞րն է անմիջական ազդեցություն գործել տիպն ընտրելու և այն իրականացնելու գործում: Սիրակուսյան վերջին թողարկումներից Արտավազդ II-ին բաժանում է ավելի քան 150 տարի, բայց չի բացառվում, որ արքային կամ դրամատիպի ընտրության հարցով դրազվող պաշտոնյային կարող էր ծանոթ լինել կվադրիգայի պատկերով սիցիլիական առատ թողարկումներից առնվազն որևէ մեկը: Ժամանակով հեռու և սահմանափակ թողարկումներ լինելու հանգամանքը անհավանական է դարձնում կվադրիգայի պատկերով վաղապարթևական օրինակների թեկնածությունը: Որպես ամենահավանական նախատիպ կարող էին հանդես գալ Հռոմեական կվադրիգատները, մասնավորապես մ.թ.ա. I դարի թողարկումները, քանի որ հորինվածքային առումով հենց այդ դրամներն են, որ առավել մոտ են Արտավազդի դրամներին: Հռոմեական, ինչպես նաև վերոհիշյալ մյուս դրամական թողարկումներից շատերի վրա, մասնավորապես մ.թ.ա. II դարում, կառքի անվի և սայլակում կանգնած աստվածուծայան կամ կառապանի միջև որոշակի տարածություն կա. անիվը պատկերվում էր ավելի հետ ընկած: Մ.թ.ա. 86 թվից սկսած, Հռոմի թողարկումներում կառապանը ավելի հաճախ ներկայացվում էր անվի ուղիղ վերևում (CRAWFORD 1974, nos 350 A.1-2, 352.1, 364, 366, 367, 391.1, 402, 420, 422): Բացի այդ, նախկինում բավական ընդգծված ձևով պատկերվում էր սայլակի բազրիքը, մինչդեռ ուշ թողարկումներում այն հազիվ է նկատվում: Ահա այս երկու առանձնահատկությունները, որոնք բնորոշ են նաև Արտավազդի կվադրիգաներին, **թույլ են տալիս ենթադրելու, որ նրա կվադրիգայի համար որպես պատկերազրական մոդել կարող էին ծառայած**

լինել մ.թ.ա. I դարում թողարկված հռոմեական կվադրիգատները:<sup>97</sup> Նկատենք նաև, որ եթե վաղ շրջանի կվադրիգատներում գերակշռում էր պատկերի դեպի աջ ուղղվածությունը, ապա Հռոմի հանրապետության վերջին տասնամյակների թողարկումներում կվադրիգաները պատկերվում էին դեպի ձախ ուղղվածությամբ, ինչը տեսնում ենք նաև Արտավազդի դրամների վրա:

Դիոդորոսի հաղորդած մի շատ հետաքրքիր տեղեկություն կարծես թե լրացուցիչ լույս է սփռում այս հարցի մեկնաբանման վրա: Խոսքը վերաբերում է վերը հիշատակված սելևկյան սատրապ, ապա՝ ինքնակոչ արքա Տիմարքոսին: Դիոդորոսը գրում է. «Երբ հայտնի դարձավ, թե հռոմայեցիները թշնամարար են տրամադրված Դեմետրիոսի (Ա Սոտեր, 162-150 թթ., Ռ.Վ.) հանդեպ, ապա ոչ միայն մյուս թագավորները նրան արհամարհեցին, այլև նույնիսկ նրան կնխակա սատրապներից ոմանք, որոնցից ամենահայտնին Տիմարքոսն էր: Սա ծագումով միլետացի էր և նախկինում թագավորած Անտիոքոսի (IV Եպիփանես, 175-164 թթ., Ռ.Վ.) ընկերը, որը բազմիցս Հռոմ էր ուղարկվել իրրև դեսպան և շատ չարիք էր պատճառել սենատին: Քանզի նա մեծ քանակությամբ դրամ տանելով իր հետ, կաշառում էր սենատորներին, իր ընծաներով առանձնապես ձգտելով գայթակղեցնել նրանց, ովքեր թույլ կարողություն տեր էին: Ահա այս եղանակով նա շատերին գրավելով իր կողմը և նրանց տալով հռոմեական կարգերին անհարիր առաջադրանքներ, փչացնում էր սենատը, նրան գործակցում էր եղբայրը՝ Հերակլեսյոսը, որն այսպիսի ծառայության համար օժտված էր ավելի քան որևէ մեկը: Նույն եղանակով վարվեց նաև տվյալ դեպքում, երբ Հռոմ էր եկել արդեն լինելով Մեդիայի սատրապ, նա շատ մեղա-

<sup>97</sup> Արտավազդի դրամների վրա կվադրիգայի հայտնվելը Ջ. Պտուկյանը նույնպես հակված է բացատրել հռոմեական ազդեցությամբ. «The quadriga design was popular on Roman Republican coins and its adoption might indicate a pro-Roman leaning on the part of Artavasdes», BEDOUKIAN 1978, p. 26:

դրանքներ հարուցելով Դեմետրիոսի դեմ, համոզեց սենատին նրա դեմ ընդունել այսպիսի որոշում. «Քանի որ Տիմարքոսը... (այստեղ ձեռագիրը թերի է), ապա նա թող լինի նրանց թագավորը»: Տիմարքոսը ոգևորված այս որոշումից, Մեդիայում կաղամակերպեց նշանակալից բանակ, միաժամանակ Դեմետրիոսի դեմ դաշինք հաստատեց Հայաստանի թագավոր Արտաքսիասի հետ: Այնուհետև ահաբեկելով սահմանակից ժողովուրդներին իր դորքերի հղորությամբ և նրանցից շատերին հնադանդեցնելով իրեն, արշավեց Ջևզմայի վրա և, վերջապես, դարձավ թագավորության մեջ հզոր» (Diod. XXXI, 27a):

Մինչ այդ՝ 165 թվականին, Անտիոքոս Եպիփանեսը պատերազմել էր Հայաստանի Արտաշես թագավորի դեմ, ապա 164 թվականին հնադանդեցնելով Մարաստանը, այնտեղ կառավարիչ էր նշանակել Տիմարքոսին, որը, նույն թվականին Անտիոքոսի մահից հետո, ստանձնեց նրա որդու՝ մանկահասակ Անտիոքոս V-ի խնամակալությունը: 162-ին օրինական թագավորը մահանում է, գուցե ոչ առանց նրա խնամակալի «օգնության», և Տիմարքոսը Մարաստանում և Բաբելոնում իրեն արքա է հռչակում: Դիողորոսի վերոհիշյալ հատվածից իմանում ենք, որ Տիմարքոսը հաճախ է եղել Հռոմում, հատուկ հարաբերություններ է ունեցել սենատորներից շատերի հետ, և որ իրեն թագավոր է հայտարարել նախապես ունենալով սենատի՝ իր համար բարենպաստ որոշումը: Այս կապերն է նկատի ունենալով, արդյոք պատահակա՞ն է սիրիական դրամաթողարկման մեջ միակ անգամ հենց Տիմարքոսի դրամների վրա կվադրիզայի հայտնվելը: Ճիշտ է, այդ ժամանակ (մ.թ.ա. 212-142 թթ.) Հռոմում ընդհատված էր կվադրիզատների թողարկումը, բայց բազմիցս Հռոմում եղած Տիմարքոսը չէր կարող ծանոթ չլինել կվադրիզայի պատկերով հռոմեական և սիցիլիական դրամներին: Այս տվյալները մտածել են տալիս, որ ստատերների դարձերեսի համար կվադրիզայով պատկերատիպի ընտրությունը կարող էր Տիմարքոսի նկատմամբ Հռոմի որոշակի վերաբերմունքի փոխադարձ արտահայտությունը լինել: Շատ կարևոր են թվում Դիողորոսի հետևյալ խոսքերը. «Դեմետրիոսի դեմ դաշինք հաստատեց Հայաստանի

Թագավոր Արտաքսիասի հետ»<sup>98</sup>: Արտաշեսը, ավելի վաղ քան Տիմարքոսը, ստացել էր և, հավանաբար, շարունակում էր ստանալ Հռոմի աջակցութիւնը: Միևնույն ժամանակ, թե՛ Արտաշեսը, և թե՛ Տիմարքոսը Սելևկյանների հակառակորդներն էին: Ուստի նրանց միավորում էր միևնույն թշնամին և միևնույն հովանավոր-դաշնակիցն ունենալու հանգամանքը: Դժվար է ասել, թե ի՞նչ մեխանիզմով, բայց մեկ դար անց, Հայաստանի և Մարաստանի միմյանց ժամանակակից արքաների դրամների վրա կվաղրիգայի հայտնվելը միգուցե Հռոմ-Տիմարքոս-Արտաշես երբեմնի դաշինքի հեռավոր արձագանքներից մեկը լինի, որն ինչ-որ պատճառով այդ ժամանակ նոր հնչեղութիւն էր ստացել և ստիպել էր նրանց հիշել հեռավոր անցյալի հատկապես այդ դրվագը: Կարծում եմ, որ մ.թ.ա. 40-30-ական թվականներին այս հարցում կարևոր դեր են խաղացել մի կողմից Հռոմի գործոնը, մյուս կողմից՝ հայ-մարական վաղեմի դինաստիական կապերն ու նաև որոշակի մրցակցութիւնը նրանց միջև:

Այս ամենով հանդերձ, չենք կարող բացառել Արտավազդի կվաղրիգայի պատկերագրական ծագման ևս մեկ հնարավորութիւն: Արտաշատում էր գտնվում Արեգ-Միհր-Ապոլլոնի տաճարը, որում կամ որի մոտ կարող էր կանգնեցված լինել քառաձի կառքի վրա պատկերված աստվածութեան արձանը, որը և վերարտադրվել է Արտավազդի դրամների վրա այնպես, ինչպես Տիգրան Մեծի դրամների վրա վերապատկերվում էին Անտիոքի և Դամասկոսի Տիխենների արձանները: Այս կարծիքը կարող է, սակայն, հավերժ մնալ ենթադրութեան սահմաններում, քանի որ հազիվ թե երբևէ գտնվեն այն հաստատելու փաստեր:

\* \* \*

Արտաշեսյանների դրամաթողարկման մեջ Արտավազդի II-ի կվաղրիգայով դրամներից բացի կա ևս մեկը, որը վերագրվում է Տիգրան Մեծին: Այդ պղնձե դրամը դիմերեսին

<sup>98</sup> Այս մասին տե՛ս նաև ՀԺՊ 1, էջ 548:

ունի կոպիտ ոճի դիմապատկեր՝ գծային եղանակով պատկերված թագով: Դարձերեսին տեսնում ենք դեպի ձախ արշավող կվադրիգա, որի կառապանը այս դրամի նկարագրություններում որակվում է որպես արքա (6.65 գ, Աղ. 16, 2)<sup>99</sup>: Ոչ պակաս տարօրինակ է դրամի գրությունը՝ ΒΑΣΙΛΕΩΣ → վերևում, ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ → ներքևում, որը ընտրության հնարավորութուն չթողնելով դրամի որոշման հարցում, միևնույն ժամանակ ունի Տիգրան Մեծի մյուս թողարկումներին ոչ բնորոշ տառաձևեր: Ք. Ֆոսը հրատարակել է մեկ այլ տարօրինակ պղնձե դրամ, որի դարձերեսին նույնպիսի գրություն է, նույն դասավորությամբ ([ΒΑΣΙΛΕΩΣ] → վերևում, ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ →), իսկ պատկերատիպը նրա կողմից նկարագրված է որպես բիգա՝ երկու ձիերով լծված կառք (2.26 գ, Աղ. 16, 7)<sup>100</sup>: Ֆոսը, միևնույն ժամանակ, նշում է այս դրամի և արծաթե անկանոն տիպի մեկ այլ դրամի (BEDOUKIAN 1978, no. 89, Աղ. 16, Ա) դիմապատկերների նմանության մասին<sup>101</sup>: Ավելացնենք, որ Մ. Ալրամն իր հերթին նկատել է, որ BEDOUKIAN 1978, no. 89 (2.95 գ) և no. 90-ի (1.4 գ, Աղ. 16, Գ) դիմերեսները նույնական են և երկուսն էլ, ըստ նրա, ժամանակակից կեղծ դրամներ են (moderne Fälschungen)<sup>102</sup>: Ալրամը գրում է նաև, որ BEDOUKIAN 1978, no. 159 պղնձե դրամը, որը Չ. Պտուկյանը տեղադրել է Տիգրան IV-ի դրամների շարքում, ունի ճիշտ նույն դիմերեսը (3.51 գ, Աղ. 16, Բ): Հետևաբար Ալրամը սա նույնպես համարում է կեղծ (modernes Falsum (Guß ?))<sup>103</sup>: Այսպիսով, BEDOUKIAN 1978, nos 89, 90 (արծաթ) և 159 (պղինձ) դիմերեսները նույնական են (նույն կնիքով հատված) և երեքն էլ կեղծ են (no. 159-ը Ալրամը ենթադրում է ձուլված) (Աղ. 16,

<sup>99</sup> St'ou Spink, Coin Auction 102, 2 March 1994, no. 174 = NERCESSIAN 1995, no. 044 = MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, no. 129.

<sup>100</sup> FOSS 1986, p. 39-40, type j, Ashmolean Museum, 2.26 gr., 16 mm = MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, no. 130:

<sup>101</sup> Ibid., p. 39, note 65.

<sup>102</sup> ALRAM 1986, p. 69, Fn. 305 և p.74.

<sup>103</sup> Ibid., p. 77.

**Ա-Գ):** Մեր դիտարկումները ցույց տվեցին, որ Ֆոսի հրատարակած դրամի (Աղ. 16, Դ) և վերոհիշյալ երեք դրամների դիմապատկերները ոչ թե պարզապես նման են, այլ նույնական են: Ուստի չորս դրամներ՝ երկուսը արծաթե (BEDOUKIAN 1978, nos 89, 90) և երկուսը պղնձե (BEDOUKIAN 1978, no. 159 և FOSS 1986, type j) հատված են դիմերեսի նույն կնիքով, բայց ունեն դարձերեսի երեք տարբեր տիպեր՝ Տիխե (89), բիզա (90), Ջևս (159) և բիզա- (FOSS 1986, type j): Եթե ընդունում ենք Ալրամի, ըստ իս, միանգամայն վստահելի կարծիքը, որ BEDOUKIAN 1978, nos 89, 90, 159 ոչ միայն «թողարկված» են դիմերեսի նույն կնիքով, այլև կեղծ են, ապա այդպիսին կարող է համարվել նաև FOSS 1986, type j-ն: Յուրաքանչյուր տիպից առայժմ հայտնի է մեկական օրինակ: Դարձերեսի լավագույն «պահպանվածություն» ունեն BEDOUKIAN 1978, nos. 89-ը և 159-ը: Իմ կարծիքով ևս, Տիզրան Մեծին վերագրվող վերոհիշյալ դրամների այս ամբողջ շարքի իսկությունը պետք է վերարևրվել որոշ վերապահություն<sup>104</sup>: Գուցե այս շարքում կան և՛ իսկական, և՛ կեղծ դրամներ, բայց դրանք տարբերելու հարցը կարող է լուծվել միայն բուն դրամներն ուսումնասիրելու միջոցով:

\* \* \*

Արտավազդից հետո հայկական դրամաթողարկման մեջ այլևս կվադրիզա չի հանդիպում, բայց կան Տիզրան III-ին վերագրվող պղնձե դրամներ դեպի ձախ արչավող բիզայի պատկերով<sup>105</sup>: Մ.թ.ա. շուրջ 40-30-ական թթ. վերարևրող Ասիննալ անունով ատրպատականյան արքայի պղնձե դրամ-

<sup>104</sup> NERCESSIAN 2003a, p. 62, որտեղ ներկայացված է ևս մեկ արծաթե դրամ (no. 3, 2.10 գ, 14 մմ, 12 ժ.), որի դարձերեսին տեսնում ենք բիզայի վրա դեպի ձախ արչավող մի անձնավորության և վերևում [ΒΑΣΙΛΕΩΣ] (?), ներքևում [ΒΑ]ΣΙΛΕΩΝ [ΤΙ]ΓΡΑΝΟΥ գրությունը (Աղ. 16, Ե): Դիմերեսին արքայի դիմապատկերը և թագը արված են Տիզրան II-ի դիմապատկերներին ոչ բնորոշ սխեմատիկությամբ ու չորությամբ: Այս դրամը, ինչպես և վերը նկարագրվածները, թողնում է մեր ժամանակներում արված ընդօրինակության տպավորություն:

<sup>105</sup> BEDOUKIAN 1978, no. 141 = NERCESSIAN 1995, no. 136 = MOUSIEGHIAN & DEPEYROT 1999, no. 131.

ների դարձերեսին ևս տեսնում ենք Նիկեի կողմից կառավարվող, դեպի աջ սլացող բիզա (Աղ. 12, A-C)<sup>106</sup>:

#### 4.3 Արտավազդ II-ի դրախմանների և տետրադրախմանների դարձերեսների պատկերագրական տարբերությունները

Արտավազդ II-ի դրախմանների և տետրադրախմանների դարձերեսի տիպերը որոշ չափով տարբերվում են: Հորինվածքային բնույթի հիմնական տարբերությունները հետևյալներն են: Դրախմանների վրա կառապանը ձախ ձեռքով բռնել է ձիերի սանձը, իսկ աջ՝ առաջ պարզած ձեռքում դեպի իրեն ընթացող և իր գլխին պսակ դնող Նիկեն է: Վերջինիցս անմիջապես ձախ, նրա հետևում, տեղադրված են հ կամ Z տառերը: Տետրադրախմանների վրա Նիկեն բացակայում է, իսկ տառերը տեղադրված են դրամի ձախ դաշտում՝ մենագրի տակ, ձիերի ոտքերից ձախ: Դրախմանների վրա կառապանի գլուխը պսակում են երեք սրածայր ելուստ-ճառագայթներ: Տետրադրախմանների վրա երկու դեպքերում պարզ չէ (ցուց. 5. 2 և 5. 3), իսկ մի դրամի վրա երևում են չորս (կամ հիմա) ճառագայթներ (ցուց. 5. 1): Տետրադրախմանների վրա կառապանի պատկերում կան նաև մասնավոր տարբերություններ. մի դեպքում ձիերի սանձը գտնվում է նրա ձախ ձեռքում, իսկ առաջ պարզած աջ ձեռքում բռնած ունի ինչ որ իր, գուցե՝ մտրակ (ցուց. 5. 2), մյուս երկու դեպքերում մտրակը բացակայում է: Դրախմանների B. / B. A. գրություն փոխարեն տետրադրախմանները կրում են B. B. / A. Θ. գրությունը: Դրախմանները պատկերը եղբրող շրջանակ չունեն, տետրադրախմաններինը ներառնված է ուլունքաձև շրջանակի մեջ: Ե՛վ դրախմանների, և՛ տետրադրախմանների ձախ դաշտում, ձիերի դիմաց տեղադրված է նույն մենագիրը՝ ⸥:

<sup>106</sup> LE RIDER 1959/60, no. 34; ALRAM 1986, p. 81, no. 238. այս մասին տե՛ս ստորև:

Բնականաբար մեզ հետաքրքրում է, թե ո՞վ է մարտակառքի վրա կանգնած, սրբնթաց ձիերը կառավարող անձնավորությունը: Պատկերագրական մանրամասնություններից կարող ենք նշել այն, որ նա մեզ երևում է մինչև ծնկները, գոտեկապ (այս տարրը երևում է տետրադրախմաների վրա), ծալքավոր զգեստով: Գլուխը և մարմինը պատկերված են սխեմատիկ գծիկներով: Տպավորությունն այնպիսին է, որ պատկերվածը տղամարդ է: Այս եզրակացությունը կարող է հետևել մենաբանության երկու տարբերակ. կառապանի դերում արքան է կամ աստվածություն: Գլխավոր իմաստակիր տարրն այն է, ինչը պատկերված է անձնավորության գլխին, որը թեև ունի հայկական թագի ատամները հիշեցնող ելուստներ, բայց չկա գլանաձև թմբուկը, որի գագաթից դրանք դուրս են գալիս: Այն ավելի շուտ նման է ճառագայթավոր պսակի, որն արևի աստվածության պատկերագրության բնորոշ տարրն էր, ինչպես և քառաձի կառքը՝ նրա ատրիբուտը<sup>107</sup>: Ուստի, սա կարող է ընկալվել որպես մի տեսարան, ուր մեծարվում է ինքն իրեն փառք և հաղթություն պարգևող (Նիկեն աստվածության ձեռքին՝ դրախմաների վրա) արեգակի աստվածությունը և որը, հավանաբար, արքայատոհմի հովանավոր աստվածությունն էր (արքայի թագի վրա արևը խորհրդանշող աստղանշանը): Կարելի էր սահմանափակվել այս մեկնաբանությամբ և մենք, գուցե, սխալված չէինք լինի: Սակայն, մի զգացում, որ կառապանի կերպարը կարող էր իրականում ավելին նշանակել, որ այն իր մեջ

<sup>107</sup> "...армавирская надпись, в которой говорится о приношении в дар колесницы с четырьмя конями, что скорее всего могло иметь отношение к культу бога Солнца, почитавшегося в образе греческого Аполлона. Сходное содержание имеет одна из надписей Селевка I, по которой царь посвящает Аполлону колесницу, называемую Аполлоновой. Таким образом, в III в. до н. э., во всяком случае к его концу, боги Солнца и Луны могли выступать под тройственными именами Арег-Михр-Аполлон и Лусин-Анахит-Артемидеа...", ТИРАЦЯН 1985, с. 59.

պարունակում է «արև-արքայի» սինկրետիկ զաղափար, այդուհանդերձ, մնում է <sup>108</sup>:

#### 4.4 Նիկե և նոճի

Արտավազդի պղինձների դարձերեսի երկու պատկերատիպերից մեկը Նիկեն է, ձախից պատկերված, քայլելիս, ձախ ձեռքն իջեցրած, աջը՝ առաջ պարզած, այնպես, որ այն կտրում անցնում է ΒΑΣΙΛΕΩΝ բառը Σ և Λ տառերի միջև, երբեմն ձուլվելով I տառին, բայց պարզ չէ, թե կա՞րողյոք ինչ-որ բան նրա ձեռքում: Հորինվածքի առումով, Նիկեի պատկերը կրկնում է Տիգրանի նույն տիպը: Վերջինիս դրամների վրա Նիկեի ձեռքում երբեմն պարզ երևում է պսակը, որը նա, կարծես, շնորհում է Տիգրանին, այն մեկնած լինելով դեպի նրա անվան գրությունը: Այլ դեպքերում, սակայն, պսակը որոշակիորեն նշմարելի չէ, նրա գոյությունը ենթադրվում է: Այսպես է և Արտավազդի դրամների վրա:

Պատկերի կատարման տեսանկյունից Արտավազդի Նիկեները տարբերվում են Տիգրանի Նիկենների մեծ մասից մասնավորապես թևի պատկերման ձևով: Բայց կա Տիգրանի դրամների մի խումբ, որի մասին արդեն հիշատակել ենք թագի մասին խոսելիս (միայնակ աստղով՝ Π-աձև շրջանակի մեջ), որոնց Նիկեն, նաև թևի պատկերմամբ, բավական մոտ է Արտավազդի Նիկեններին<sup>109</sup>: Այսպիսով, սա երկրորդ հատկա-

<sup>108</sup> Ս. Սարգսյանը ադրյուրագիտական այլ հիմքի վրա ևս գտնում է, որ «թագավորական նախնիների պաշտամունքը... Տիգրան II-ի ժամանակ լրացվել էր նաև իշխող թագավորի անձի աստվածացմամբ և պաշտամունքով, ըստ որում Տիգրանը նույնացված պիտի լիներ Վահագն-Հերակլես աստծո հետ: Արտավազդը թերևս այդ յուրատեսակ «քաղաքական կրոնում» նույնացվել է Միհր աստծո հետ», ՀժՊ 1, էջ 616, նաև՝ ՍԱՐԳՍՅԱՆ 1966, էջ 57:

<sup>109</sup> Տե՛ս, օր., NERCESSIAN 1995, Pl. 7, 86, 87, 89; FOSS 1986, Pl. 7, 88; BEDOUKIAN 1978, Pl. 6, 120; CNG 36, 1995, no. 591.

նիշն է, որով Արտավազդի դրամները սերտորեն կապվում են Տիգրանի դրամների վերոհիշյալ խմբի հետ: Սրանց կարելի է ավելացնել ևս երկուսը՝ A տառի առկայությունը արքայի գլխի հետևում, երիտասարդ դիմագծերը և դեմքի պատկերման ոճական նմանությունը (հմմ., օր., NERCESSIAN 1995, Pl. 7, no. 89; Pl. 10, no. 125): Այս նմանությունները կարող են բացատրվել Տիգրանի և Արտավազդի այդ դրամները միևնույն դրամահատարանում թողարկված լինելու հավանականությամբ:

\* \* \*

Արտավազդի պղինձների դարձերեսի մյուս պատկերատիպի մեկնաբանության հարցում կան դժվարություններ: Հետազոտողներն այն անվանում են տարբեր կերպ - նոճի, հասկ, նիզակի ծայր: Իրենից ներկայացնում է ընկնող կաթիլի ձև ունեցող վերնամասով (սաղարթ), ցողունով (բուն) և ներքևում փոքրիկ հորիզոնական գծիկով ավարտվող առարկա (գետի՞ն), որը նույնպիսի պատկերմամբ տեսնում ենք Տիգրանի անվամբ թողարկված, դիմերեսին արքայի գլխի հետևում A տառն ունեցող սերիաներից մեկի վրա, որը, մեր կարծիքով ևս, կարող է անվանվել «նոճի»<sup>110</sup>: Այդուհանդերձ, երկու դրամների նկարագրություններում՝ CNG 36, nos. 615 և 616, այն անվանված է «հասկ» («grain ear»), իսկ առաջինի մասին նույնիսկ նշված է, որ հասկի սերմնահատիկները լավ երևում են, թեև դրամի պահպանվածությունն այնքան էլ լավը չէ, հատկապես դարձերեսի պատկերը հստակ չէ և, ըստ լուսանկարի, դժվար է անվերապահորեն համաձայնվել այս դիտողության հետ: Ք. Ֆոսն այս տիպը նկարագրում է որպես «արմավենու ուղիղ ճյուղ» («straight palm branch»), ի տարբերություն «կորացող ծայրով արմավենու ճյուղի» («palm branch curving upward»)<sup>111</sup>:

Գրություններն այս սերիայում կարդացվում են ոչ թե վերից վար, այլ՝ վարից վեր և ΒΑΣΙΛΕΩΣ բառը հայտնվում է

<sup>110</sup> CNG 36, 1995, no. 594, 595; NERCESSIAN 1995, no. 105, 106.

<sup>111</sup> FOSS 1986, p. 40.

ձախ, ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ-ն աջ կողմում: Հետաքրքիր է, որ Տիգրանի բոլոր սերիաներում գրությունն ընթերցվում է վերից վար, և միայն դարձերեսին նոճու պատկերով, իսկ դիմերեսին գլխի հետևում A տառով թողարկումներում է, որ կարելի է տեսնել և՛ վերից վար, և՛ վարից վեր ուղղված գրություններ:

Այսպիսով, Արտավազդի դրամական այս սերիան ևս սերտորեն կապվում է Տիգրանի անվամբ թողարկումների հետ ո՛չ միայն դարձերեսի տիպով և արքայի գլխի հետևում A տառի առկայությամբ, այլև գրության դիրքի նույնպիսի շեղումով, և կրկին, ինչպես նիկեով դրամների դեպքում, մտածել է տալիս նույն դրամահատարանում թողարկված լինելու մասին:

## 5. ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտավազդ II-ի դրամական գրությունների փոփոխություններում պարզից դեպի բարդը սկզբունքով առաջնորդվելու դեպքում կունենանք հետևյալ հաջորդականությունը:

ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΤΑΥΑ[ΖΔΟΥ] - բրոնզ՝ դարձ . նոճի

ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ - դրախմա և բրոնզ՝ դարձ. նոճի և Նիկե

ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΣΔΕΩ ΘΕΙΟΥ - տետրադրախմա:

Արտավազդը միայն «արքա» տիտղոսով դրամ կարող էր թողարկել այն ժամանակ, երբ փոխարինեց հորը՝ ստանալով Հայաստանի արքայական գահը, կամ հոր թագավորության վերջին տարիներին որպես նրա կրտսեր գահակիցը, ինչը օրինական և երկրի համար առանց ցնցումների իշխանափոխության ձև էր հելլենիստական պետութայուններում: Գահակից արքայի կողմից դրամ թողարկելու իրավունքի առնչությամբ կարելի է հիշատակել Տիգրան Մեծին և Արտավազդին ժամանակակից պարթևական պրակտիկան: Դրախմաների որոշ թողարկումների տարեթվերը ցույց են տալիս, որ Հրահատ III-ը մ.թ.ա. 71 թ. Պարթևաստանում գահ բարձրանալով, հենց նույն տարում իր որդիներից մեկին՝ Միրհրդատին (Գ), գահակից է ընտրում ու թողարկվում են դրամներ թե՛ իր, և թե՛ որդու դիմապատկերներով՝ ի դեպ, երկուսն էլ կրում են «արքայից արքա» տիտղոսը, թեև Հրահատն է եղել ավագ գահակիցը: Քիչ ավելի ուշ, Որոդ II-ը որպես գահակից է ընտրում իր Պակոր որդուն, որը ևս որպես գահակից արքա իր պատկերով դրախմաներ է թողարկել, նույնպես «արքայից արքա» տիտղոսով: Եթե գրավոր աղբյուրներից մենք չիմանայինք, որ Պակորը մահացել է ավելի վաղ քան իր հայրը, ապա

կարող էինք մտածել, թե նա դրամները թողարկել է այն ժամանակ, երբ հաջորդել է հորը, մինչդեռ, ինչպես տեսանք, այդպես չի եղել:

Տիգրան Մեծի թագավորման վերջին տարիների և իշխանափոխման հանգամանքների մասին գրավոր աղբյուրները ոչինչ չեն հաղորդում, իսկ առայժմ այս միակ դրամի երկու կարևոր առանձնահատկությունները՝ իջեցված ականջակալով թագը և միայն «արքա» տիտղոսի առկայությունը, անվիճելի են դարձնում այն որպես Արտավազդ II-ի վաղազույն դրամական թողարկում լինելու փաստը: Եթե «արքայից արքա» տիտղոսը, որը Տիգրանը սկսեց հիշատակել իր դրամների վրա ոչ ավելի վաղ քան մ.թ.ա. 60-ականների երկրորդ կեսից սկսած, ժառանգաբար փոխանցվեք, ապա Արտավազդը իր ինքնուրույն թագավորման հենց սկզբից պետք է հանդես գար այդ տիտղոսով: Մինչև վերոհիշյալ դրամի ի հայտ գալը կարող էինք այդպես կարծել: Նրա առկայությունը, սակայն, հարկադրում է մտածել, որ այդ դրամն Արտավազդը թողարկել է կա՛մ Տիգրանի կենդանության օրոք՝ լինելով գահակից արքայի կարգավիճակում, կա՛մ, հորը փոխարինելիս, նա մեխանիկորեն չի ժառանգել նաև «արքայից արքա» կայսերական տիտղոսը, այլ սկզբում կարգվել է որպես «արքա»: Այս երկրորդ վարկածը ավելի հավանական է թվում և հաստատվում է անուղղակի փաստերով<sup>112</sup>:

\* \* \*

Արտավազդի անվան յոթերորդ տառը դրախմանների և բրոնզների վրա Z է՝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ, մինչդեռ տեսրադրախմանների վրա արքայի անունը գրված է Σ-ով՝ ΑΡΤΑΥΑΣΔΕΩ: Գրությունն առաջին ձևը հարազատ է հայերենին: Այն ճշտությունը պատճենավորվել է նրա դրախմանների և բրոնզե թողարկումների հունարեն գրություններում: Այդ անունը նույնպիսի գրությունը տեսնում ենք Արտավազդ IV-ի արծաթե

<sup>112</sup> Տե՛ս Варагян, Р., Титул "царь царей" в I в. до н. э. (հանձնված է հրատարակման Археология Кавказа հանդեսում):

դրամի վրա<sup>113</sup>: Արտավազդ III-ի, ինչպես նաև Ատրպատականի Արտավազդ արքայի ինձ հայտնի դրամների վրա անվան այդ հատվածը հստակ չի երևում:

Հույն հեղինակների մոտ Արտավազդ անունը հանդիպում է գրության երկու հիմնական ձևերով: Ստրաբոնը Արտավազդ II-ին հիշատակում է *Ἀρταουάσδης* ձևով (XI.13.3)<sup>114</sup>: Դիոն Կասսիոսը Մարաստանի արքային անվանում է *Ἀρταουάσδης* (XLIX.25,1), իսկ Հայաստանի Արտավազդ III-ին՝ *Ἀρταβάζης* (LV.25,1)<sup>115</sup>: Պլուտարքոսը Արտավազդ II-ին անվանում է *Ἀρταουάσδης* (XXXVII.3, XXXIX.1, L.2), բայց մի դեպքում՝ նաև *Ἀρταβάζης* (V.2)<sup>116</sup>: Հովսեպոս Ֆլավիոսի մոտ Տիգրանի որդի Արտավազդը հիշատակված է միայն *Ἀρταβάζης* (XV.104) ձևով:

Ինչ վերաբերում է լատինական աղբյուրներին, ապա Կիկերոնն օգտագործում է միայն *Artavasdes* ձևը<sup>117</sup>: Օգոստոս Օկտավիանոսի «Անկիրական հիշատակարան» անվամբ հայտնի կտակի լատիներեն տեքստում Մարաստանի (Ատրպատականի) արքան հիշատակված է *Artabazes*, իսկ Արտավազդ II-ը՝ *Artavasdes* ձևով<sup>118</sup>: Տակիտոսը և Պատերկուլոսը վերջինիս նույնպես անվանում են *Artavasdes*<sup>119</sup>:

Առեղծվածային են մնում Արտավազդ II-ի տեսրադրախ-

<sup>113</sup> ՍԱՐԳՍՅԱՆ 1975, էջ 185, նկ. 3: Այստեղ Արտավազդի անվան մեջ Z-ի փոխարեն գրված է Ξ, որը, հավանաբար, վրիպակ է, քանի որ Z տառը պարզ ընթերցվում է դրամի վրա:

<sup>114</sup> Strabon, *Géographie, texte établie et traduit par François Lasserre, Paris, 1975* տալիս է նաև ձեռագրերում հանդիպող տարբերակները՝ *Ἀρταβάσδου, Ἀρταβάζου* (p. 124, XI.14,6), *Ἀρταουάσβδης, Ἀρταουάστης* (p. 126, XI.14.8).

<sup>115</sup> Հստ *Dio's Roman History, Loeb Classical Library, vol. V, London, 1961.*

<sup>116</sup> Հստ *Plutarch's Lives, Loeb Classical Library, vol. IX, London, 1968.*

<sup>117</sup> Cicero, *Letters to Atticus, 5.20,2, 5.21.2:*

<sup>118</sup> Caesar Augustus, *Res Gestae Divi Augusti, 27:*

<sup>119</sup> Tacitus, *Annales, II.3, II.4, Paternulus, 7.14:*

մաների գրության ΑΡΤΑΥΑΣΔΕΩ և ΘΕΙΟΥ բառերի վերջավորությունները ΑΡΤΑΥΑΖΔΟΥ և ΘΕΟΥ կանոնավոր վերջավորությունների փոխարեն: Հին Հունարենի ատտիկյան բարբառի արական և իգական սեռի երկրորդ Հոլովի քիչ թվով գոյականներին բնորոշ ΕΩ վերջավորության կիրառությունը հիմնականում հասնում է մինչև մ.թ.ա. IV դարի վերջը: Արտավազդ II-ի օրոք, Հունարենով գրող որևէ հեղինակի մոտ կամ որևէ երկրի դրամական թողարկման մեջ սեռական Հոլովի արխայիկ ΕΩ վերջավորությունը չի հանդիպում<sup>120</sup>: Նույնքան տարօրինակ է ΘΕΙΟΥ. ածականային ձևի օգտագործումը, որը դրամների վրա բոլոր այլ դեպքերում հանդես է գալիս գոյականական ձևով՝ ΘΕΟΥ:

Ինչո՞վ կարելի է բացատրել կանոնավոր գրություններով դրամներ թողարկելուց հետո տետրադրախմանների գրություններում այսպիսի շեղումներ թույլ տալը: Դրամական գրություններում երբեմն հանդիպում են դրամաթողարկման կնիքի փորագրչի կողմից կատարված սխալներ կամ վրիպումներ, բայց տվյալ դեպքում՝ դարձերևսի երեք տարբեր կնիքներով թողարկված երեք դրամների վրա, գործ ունենք կանխամտածված շեղումների հետ, որոնք քերականորեն սխալ չեն, բայց ժամանակավրեպ են (ΕΩ վերջավորությունը), եզակի են (ΙΟΥ վերջավորությունը) կամ չպատճառաբանված (Ζ-ը Σ-ով փոխարինելը): Հազիվ թե դրամի տիպը ստեղծող քանդակագործ-փորագրչին թույլ տրվեր նման ինքնագործունեություն: Արտավազդը Հունարեն լեզվով գրել է պատմական երկեր ու ողբերգություններ և, ուրեմն, քաջատեղյակ է եղել այդ լեզվի նրբություններին: Հետևաբար դա պետք է կատարվեր արքայի զիտություններ և հավանություններ, եթե ոչ՝ նրա թելադրանքով: Բայց ինչո՞ւ: Այս հարցն է, որ անպատասխան է մնում, դառնալով միաժամանակ տետրադրախմանների իսկության շուրջ կասկածների պատճառներից մեկը:

<sup>120</sup> ՄՈՒՇԵՂՅԱՆ 1964, էջ 317-323, ՎԱՐԴԱՆՅԱՆ 1999, էջ 323, ծան. 6:

### 5.1 Հնագրական դիտարկումներ

Արտավազդի դրամների գրություններում օգտագործված տառերն, ընդհանուր առմամբ, կանոնավոր և ավանդական ձևեր ունեն, բայց ժամանակի Հնագրական առանձնահատկություններին համապատասխանող որոշ ձևափոխումներ նկատելի են: Արծաթե առանձին դրամների (ցուց. 2.6, 2.9, 2.13, 5.3) և ավելի հաճախ բրոնզե դրամների գրություններում Տ-ն գրված է պարզեցված ձևով՝ Γ (օր. ցուց. 4.2, 4.4, 4.10, 4.12 և այլն), երբեմն նաև՝ C (ցուց. 4.16, 4.29), իսկ A տառի հորիզոնական գծիկը կա՛մ բացակայում է, կա՛մ այնքան թույլ է, որ A-ն չի տարբերվում Λ-ից: Եվ, առհասարակ, Արտավազդի բրոնզների գրությունները բավական անփուլթ են արված, ի տարբերություն իր նախորդի՝ Տիգրան Մեծի և հաջորդի՝ Արտաշես II-ի բրոնզե դրամների գրությունների: Մյուս հետաքրքրական առանձնահատկությունը տեսրադրախմանների մեջ քառակուսի թետալի՝ Θ և օմիկրոնի՝ □ առկայությունն է: Գրության այս ոճը հարևան Պարթևաստանում ևս սկսեց տարածվել մ.թ.ա. I դարի կեսից, հատկապես՝ 30-ական թվականներից<sup>121</sup>:

### 5.2 Մենագրերը

Ի տարբերություն Տիգրան Մեծի դրամների վրա հանդիպող դարձերեսի մենագրերի առատությունն ու բազմազանությունը, Արտավազդ II-ի դրամները՝ և՛ դրախմանները, և՛ տեսրադրախմանները, ներկայացնում են միայն մի տեսակի մենագիր՝ ⸘, իսկ բրոնզե դրամների վրա մենագրեր չկան:

Ս. Մուշեղյանի կողմից ⸘ մենագիրը վերծանվել է որպես ΡΤΞ տառերի միացություն, որոնք համապատասխանում են

<sup>121</sup> ВАРДАНЫН 1987, с. 198-199.

Արտաշատի հունարեն ΑΡΤΑΣΑΤΑ անվան բաղաձայն հնչյուններին, որտեղ Α ձայնավորը ենթադրվում է յուրաքանչյուր վանկի մեջ<sup>122</sup>: Հեղինակը միևնույն ժամանակ նշել է, որ «այս ընթերցումը կարող է ընդունելի դառնալ միայն Արտավազդի մեղ հասած բոլոր մենագրերի և դրամներին վերաբերող տոպոգրաֆիկ տվյալների հատուկ քննության հիման վրա»: Դիտողությունը ճիշտ է, ցավոք՝ դրամների հայտնաբերման վայրի և հնագիտական կոնտեքստի վերաբերյալ տվյալները այսօր էլ չափազանց անբավարար են:

Ձ. Պտուկյանն առարկել է այս տեսակետին, պատճառաբանելով, որ անվան մեջ երեք անգամ կրկնվող Α տառը բոլորովին չի արտացոլված մենագրում, և որ Արտաշեսյանների դրամների վրա մեղ առհասարակ հայտնի չէ քաղաքի անունը ներկայացնող որևէ հստակ մենագիր<sup>123</sup>:

\* \* \*

Տարբեր մեկնաբանություններ է հարուցում նաև բրոնզե դրամների դիմերեսին արքայի գլխի հետևում Α տառի գոյությունը: Այդ տառը կա Արտավազդ II-ի բոլոր բրոնզե դրամների վրա<sup>124</sup>, այն կա նաև Տիգրան Մեծի բրոնզե դրամների մի

<sup>122</sup> ՄՈՒՇԵՂՅԱՆ 1964, էջ 321-322: Այնուամենայնիվ, քաղաքի առաջին տառի բացակայությունն այս մենագրում տարօրինակ է, քանի որ այն շատ էլ չէր բարդանա ու խճողվի, եթե նրա վրա ավելացված լիներ նաև Α տառը (օրինակ այսպես՝  $\text{ΑΡΤΑΣΑΤΑ}$ ). Հունա-հելլենիստական դրամների վրա հանդիպում են նույնիսկ ավելի խրթին տեսք ունեցող մենագրեր:

<sup>123</sup> BEDOUKIAN 1978, p. 26.

<sup>124</sup> NERCESSIAN 1995, no. 126-ի դիմերեսի նկարագրության մեջ նշված է, որ գլխի հետևում Α տառը չկա: Նույն դրամի վերաբերյալ՝ BEDOUKIAN 1978, no. 133-ի նկարագրության մեջ ոչինչ չի ասված գլխի հետևում Α տառի գոյության մասին, սակայն այն երևում է լուսանկարի վրա: NERCESSIAN 1995, no. 131-ի դիմերեսի վերաբերյալ նույնպես նշված է, հիմք ընդունելով BEDOUKIAN 1978, no. 132-ի դիմերեսի նկարագրությունը, որ Α տառը բացակայում է: Բայց դրամի վիճակը, ըստ լուսանկարից ստացած տպավորության, թույլ չի

մասի վրա: Վերջիններս մի քանի թողարկումներ են, որոնք դարձերեսին ունեն Նիկեի և նոճու պատկերներ և ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ գրությունը: Ելնելով այն փաստից, որ Տիգրան Մեծի մի դրամ Նիկեի պատկերով և գլխի հետևում A տառով հայտնաբերվել է Արտաշատի պեղումներից, իսկ նույնպիսի մի այլ դրամ՝ Հացավանի պեղումներից, այսինքն Արտաշատից ոչ հեռու, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ պղնձե դրամներն իրենց թողարկման վայրից շատ հեռու չէին տարածվում, Մ. Ջարդարյանը եզրակացրել է, որ դրանք Արտաշատի դրամահատարանի արտադրանքն են, իսկ A-ն քաղաքի անվան սկզբնատառն է, որը ղետևել է դրամի վրա՝ Արտաշատի արտադրանքը մյուս դրամահատարանների արտադրանքից զատելու համար: A տառով դրամների թողարկումը Արտավազդ II-ի օրոք, նույն հեղինակը բացատրում է նրանով, որ հայկական թագավորութայունը թեև կորցրել էր Անտիոքն ու Դամասկոսը, սակայն դրամներ հատվում էին նաև Տիգրանակերտում և, ուրեմն, անհրաժեշտութայուն կար դատելու մի դրամահատարանի արտադրանքը մյուսից<sup>125</sup>: Հողվածի հրատարակմանը հաջորդած տարիներին մի քանի անգամ բաղմապատկվել է թե՛ Տիգրան Մեծի, և թե՛ Արտավազդի II-ի A տառով պղնձե դրամների հրատարակված ու ղետևս անտիպ օրինակների քանակը: Դրանք ծագում են Սիրիայի, Լիբանանի և նրանց հարակից Թուրքիայի այն շրջաններից, որոնք կաղմում էին տիգրանյան Հայաստանի հարավ-արևմտյան՝ երկրի ամենազարգացած հատվածը, որի մի մասի վրա շարունակում էր իշխել նաև Արտավազդ II-ը: Վերջին ժամանակներս ավելացել է նաև Արարատյան դաշտավայրում հայտնաբերված Տիգրան Մեծի պղնձադրամների քանակը, որոնցից շատերի վրա առկա է A տառը: Ուստի A տառով թողարկումները Արտաշատի դրամահատարանին վերագրելու ենթադրու-

---

տալիս վճռականորեն բացառել A տառի գոյութայունը արքայի գլխի հետևում:

<sup>125</sup> ՋԱՐԴԱՐՅԱՆ 1977, էջ 83-84:

Թյունն ուժի մեջ է մնում, թեև հնարավոր են դրա մեկնա-  
բանման նաև այլ տարբերակներ:

Ա տառը կա Տիգրան Մեծի միայն Նիկե և նոճի տիպերով  
պղնձե դրամների վրա և Արտավազդ II-ի առայժմ հայտնի  
բոլոր դրամների վրա (նույնպես Նիկե և նոճի տիպերով), ինչը  
հերքում է դրամահատարանները զատելու խնդրի գոյությունը,  
բայց չի բացառում այն որպես քաղաքանվան սկզբնատառ  
լինելու հնարավորությունը:

Ի՞նչ է նշանակում, այնուամենայնիվ, Ա տառը: Ք. Ֆոսը  
գրավիչ համարելով Ա տառը որպես արժեչափի նշան դիտար-  
կելը, ինչպես դա արվում էր սելևկյան բրոնզների վրա նույն  
տեղում, և որը նշանակում էր «մեկ» (այսինքն՝ խալկոս),  
գտնում է, սակայն, և քանի որ այլ տառերով դրամներ չկան,  
ապա հնարավոր չէ հիմնավորել այս վարկածը կամ Ա տառի  
նշանակության վերաբերյալ որևէ այլ վարկած<sup>126</sup>: Այդուհան-  
դերձ, նա հակված է ուժի մեջ թողնելու Տիգրան Մեծի Նիկեով  
դրամների մեջ երկու տարբեր արժեչափերի գոյության հնարա-  
վորությունը:

Ա տառի վերաբերյալ կարելի է առաջ քաշել ևս մեկ  
վարկած, այն մեկնաբանելով որպես Նիսիրին-Մծրին դրամա-  
հատարանի նշանը՝ հյուսիսային Միջագետքի խոշորագույն քա-  
ղաքի, որն այդ ժամանակ դեռևս կարող էր քաղաքի բնակ-  
չության մի մեծ զանգվածի կողմից Անտիոք կոչվել<sup>127</sup>: Այս և

<sup>126</sup> FOSS 1986, pp. 57-58.

<sup>127</sup> Տիգրանի դեմ Լուկուլլոսի ռազմական գործողութայինները  
նկարագրելիս Պլուտարքոսն ասում է. «Հետդարձի ճանապարհին նա  
(Լուկուլլոսը) Տավրոսն անցավ ուրիշ լեռնանցքներով և իջավ  
Միգդոնիա կոչված արգավանդ ու տաք երկիրը: Այստեղ կա մեծ ու  
մարդաշատ մի քաղաք, որը բարբարոսները կոչում են Նիսիրին, իսկ  
հույները՝ Միգդոնիայի Անտիոք» (Plut. Lucull. XXXII.3,  
«πόλιν..., ἣν οἱ μὲν βαρβαροὶ Νίσιβιν, οἱ δὲ Ἕλληνες Ἀντιόχειαν Μυγδονικ  
ἣν προσηγόρευσα»): PWK Real-Encyclopädie-ում Յ. Շտուրմը  
եզրակացնում է (էջ 729), որ Ἀντιόχεια անվանումը Սելևկյանների  
հետ անհետանում է և վերստին վերականգնվում է քաղաքի հին

այլ ենթադրություններից որևէ մեկի ճշմարտացիությունը հնարավոր չէ ապացուցել, քանի դեռ չունենք դրամագյուտների մասին քիչ թե շատ ճշգրիտ տվյալներ: Տարակուսանք է հարուցում նաև Ատրպատականի Ասիննալ թագավորի պղնձե դրամի վրա գլխի հետևում A տառի գոյությունը (Աղ. 12. A, B, C): Սա, անկասկած, Արտավազդ II-ին ժամանակակից կամ նրան ժամանակով շատ մոտ, Հայաստանի (Թագը, A տառը, դարձերեսին՝ կվադրիզան) և Պարթևաստանի (քառակողմ կամ եռակողմ գրությունը)՝ ազդեցության ոլորտում գտնվող արքայի դրամ է: Եթե այն իրոք Ատրպատականի արքայի թողարկում է<sup>128</sup>, ապա դժվարանում է A-ն որպես Անտիոք (-Նիսիբին) քաղաքի սկզբնատառ ընդունելու հնարավորությունը կամ, այդ դեպքում, պետք է գտնել դրա պատմական հիմնավորումը՝ հասկանալու համար, թե ինչո՞ւ և ի՞նչ պայմաններում Ատրպատականի արքան կարող էր Մծբինում կամ Արտաշատում դրամ թողարկել:

Եվ, վերջապես, A տառը կա, ըստ երևույթին, նաև Արտավազդի վերոհիշյալ վաղագույն թողարկման պղնձադրամի դարձերեսի տողատակում (Աղ. 1): Ինչպես նաև՝ Սոհեմ արքային վերագրվող պղնձե դրամի դարձերեսին՝ Մասիս սարի պատկերի ներքևում, որտեղ այն ամենայն հավանականությամբ կարելի է մեկնաբանել որպես Արտաշատ քաղաքի սկզբնատառ<sup>129</sup>: Այս երկու դեպքերում, ի տարբերություն

Նիսիբիս անվանումը, որը նախկինում էլ զուգահեռաբար պահպանվում էր: Պլուտարքոսի վերոհիշյալ տեղեկությունը վկայում է Տիգրանի ու, հավանաբար, նաև Արտավազդի օրոք քաղաքի երկու անունների զուգահեռաբար օգտագործման մասին: Քաղաքի հելլենիստական անվանումը դարձանալի դիմացկունությունը կիրառվել է նաև հետագա հարյուրամյակների ընթացքում (PWK Real-Encyclopädie, 729):

<sup>128</sup> LE RIDER 1959/60, p. 27, no. 34, ALRAM 1986 1986, p. 81, no. 238. Երկու հեղինակներն էլ դրամը համարում են Մեդիա Ատրոպատենի անհայտ արքայի թողարկում, տալով ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ

[...?]ΙΜΝΑΛΟΥ ընթերցումը:

<sup>129</sup> ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ռ., Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, ՊԲՀ 2 (2004):

մյուսների, տառը տեղադրված է ոչ թե դիմերեսին, արքայի գլխի հետևում, այլ դարձերեսին, որտեղ և սովորաբար տեղադրվում էր դրամահատարանի տարբերանշանը: Այս տեղում, սակայն, կարող էր տեղադրվել նաև թողարկման տարեթիվը: Բայց, քանի որ չունենք այլ տառերով նշված թողարկումներ, ապա դրանք որպես թագավորման առաջին տարի մեկնաբանելու ենթադրությունը մնում է սոսկ այդպիսին:

Կարծում եմ, որ Տիգրան II-ի, Արտավազդ II-ի և մար Արտավազդի դրամների դիմերեսի A տառի մեկնաբանման հարցն առայժմ մնում է առկախ, համենայն դեպս՝ եղած վարկածների հիմնավորումները դեռևս բավարար չեն:

### 5.3 Դրամաթողարկման տարեթիվերը և ժամանակագրությունը

Արտավազդի թողարկումների շարքում ցույց 1.1 պղնձե դրամն առաջինը դնելու հարցում որոշիչ է եղել դիմերեսի պատկերազրական առանձնահատկությունը (իջեցված ականջակալով թագը) և պարզ՝ ΒΑΣΙΛΕΩ[Σ] ΑΡΤΑΥΑ[ΖΔΟΥ] գրությունը:

ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ գրությամբ դրախմաները և նույն գրությամբ բրոնզները Արտավազդի դրամաթողարկման ժամանակագրության մեջ միջանկյալ տեղ են գրավում և, հավանաբար, ժամանակով միմյանց մոտ են: Արտավազդի բրոնզե դրամները թողարկման տարեթիվ չեն կրում, մինչդեռ դրախմաների դիմերեսի կենտրոնական դաշտում, Նիկեից ձախ, կան Σ (ստիգմա) կամ Ζ (ձետա) տառերը: Այս տառերը կարող են ընթերցվել միայն որպես թվականներ՝ 6 և 7: Սրանց մեկնաբանման հարցում միանում եմ այն հեղինակների կարծիքին, որոնք համարում են դրանք թողարկման տա-

րեթիվ՝ արքայի թագադրման տարուց հաշված<sup>130</sup>: Ուրեմն, Արտավազդ II-ի դրախմաները թողարկվել են մ.թ.ա. 50/49 և 49/8 թթ.: Մոտավորապես նույն տարիներով կարող են թվագրել նաև Արտավազդի բրոնզները:

Արտավազդի տետրադրախմաները՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΣΔΕΩ ΤΕΙΟΥ կրում են ΙΖ (17) և ΙΗ (18) թվականները, որոնք տեղադրված են դարձերեսի ձախ դաշտում, մենագրի տակ, և հաշվարկման նույն սկզբունքով թվագրվում են մ.թ.ա. 39/8 և 38/7 թվականներով:

Այսպիսով, Արտավազդի դրամաթողարկումը բաժանվում է երեք փուլի: Սկզբում նա թողարկել է պղնձե մանր դրամներ, հետո դրախմաներ և ըստ երևույթին միաժամանակ՝ նաև բրոնզներ, իսկ վերջում՝ միայն տետրադրախմաներ:

<sup>130</sup> ՄՈՒՇԵՂՅԱՆ 1964, էջ 322, ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973, էջ 81, ՄՈՒՇԵՂՅԱՆ 1983, էջ 56, SEYRIG 1964, p. 140: Այս տեսակետը չի ընդունվել Ջ. Պատուկյանի կողմից. եթե դրանք թողարկման տարեթվեր են, ապա ո՞ւր են մյուս տարիներին հատված դրամները: Նա ենթադրել է, որ այդ տառերը կարող են լինել դրամահատարանի վարպետի նշաններ (a mint master's mark), BEDOUKIAN 1978, p. 26: Պաշտպանելով վերոհիշյալ տեսակետը, Ե. Ներսեսյանը առաջարկում է նաև այդ տառերը որպես դրամական թողարկումների հաշվառմանն առնչվող մենագրեր դիտարկելու հնարավորությունը (the monograms may be an accounting system for issues), NERCESSIAN 2003, p. 9: Առարկելով այս մոտեցումներին, կարելի է նկատել, որ բոլորովին պարտադիր չէ, որ թագավորման բոլոր տարիներին Արտավազդն ուեցած լինի ամենամյա դրամական թողարկումներ: Իսկ եթե շուրջ 22 տարիների ընթացքում արքան անընդմեջ դրամ է թողարկել, ապա թողարկումների հաշվառման նշաններն այդ դեպքում ևս պետք է ավելի բազմազան լինեին:

## 6. ՎԵՐԱԹՈՂԱՐԿՈՒՄՆԵՐ

Արտաշեսյան վերաթողարկված դրամների մասին մի հատուկ ուսումնասիրություն հրատարակել են Ե. Ներսեսյանը և Լ. Սարյանը<sup>131</sup>: Հեղինակները հաշվառել և քննարկել են 143 վերաթողարկված դրամներ (6 արծաթե և 137 պղնձե), որոնցից 28 բրոնզե դրամները Արտավազդ II-ինն են: Դրանցից 16 օրինակների վրա նախկին տիպերը ճանաչելի են և պատկանում են՝ 6-ը (37.5 %) Արաղոսի 'Աստարտե-Եվրոպա / ցուլ' տիպին (type H)<sup>132</sup>, 8-ը (50 %) Արաղոսի 'Տիխե / Պոսեյդոն' տիպին (type F)<sup>133</sup>, իսկ 2-ը (12.5 %) Անտիոքի 'Ջևաի գլուխը / Ջևար նստած' տիպին (type A): Վերաթողարկման համար Արտավազդն օգտագործել է նույն դրամահատարանների և նույն տիպի դրամներ, ինչ որ իր հայրը՝ Տիգրանը և, ինչպես վերջինիս մոտ է, դրանցում գերակշռողը Արաղոսի դրամներն են՝ 28-ից 14-ը (50 %):

Ըստ մեր ցուցակի, որն ավելի ընդլայնված է, բրոնզե դրամների համար պատկերը հետևյալն է.

Դարձ. նոճի - 20 դրամներ, որոնցից 12-ը (60 %) վերաթողարկումներ են՝ դրանցից 3-ը հատված են Արաղոսի (պատկերատիպ F՝ ցուց. 3.7, H՝ ցուց. 3.5, անորոշ տիպ՝ ցուց. 3.20), 1-ը՝ Անտիոքի (պատկերատիպ A՝ ցուց. 3.12) դրամների վրա, իսկ 8-ի ծագումը հնարավոր չէ որոշել:

Դարձ. Նիկե - 59 դրամներ, որոնցից առնվազն 35-ը (59

<sup>131</sup> NERCESSIAN & SARYAN 1996.

<sup>132</sup> Այստեղ տիպերը նշվում են ըստ NERCESSIAN & SARYAN 1996 աշխատության մեջ առաջարկված դասակարգման:

<sup>133</sup> NERCESSIAN & SARYAN 1996, p. 34, «Aradus Zeus / galley prow» վրիպակ է, պետք է լինի «Aradus Tyche / Poseidon», ինչպես նաև «Antioch / Zeus seated» կարդալ «Antioch Head of Zeus / Zeus seated».

%) վերաթողարկումներ են: Դրանցից 15-ը Արադոսի (պատկերատիպ F՝ ցուց. 4.16, 18, 22, 24, 28, 31, 50, H՝ ցուց. 4.6, 8, 15, 17, 29, 38, 43 և 1-ն անորոշ տիպի՝ ցուց. 4.27), 1-ը Անտիոքի (պատկերատիպ A՝ ցուց. 4.1) դրամների վրա, իսկ 19-ի ծագումը հնարավոր չէ որոշել:

Այսպիսով, մեր կողմից հաշվառված 80 բրոնզե դրամներից առնվազն 47-ը (59 %) վերաթողարկված են: Դրանցում Արադոսի դրամները կազմում են վերաթողարկման համար որպես հատաձույլ ծառայած դրամների մոտ 38 %-ը՝ 47-ից 18-ը: 2 դրամ վերահատված են Անտիոքի դրամների վրա, իսկ 27 դրամների ծագումը հնարավոր չէ որոշել:

Եթե դժվար չէ բացատրել Տիգրան Մեծի վերաթողարկած բրոնզներում փյունիկյան և սիրիական քաղաքների, հատկապես Արադոսի ու Անտիոքի դրամների առատ օգտագործումը, ապա նույնքան պարզ չէ Արտավազդի դեպքում, որն այլևս Սիրիայի և Փյունիկիայի վրա գերիշխանություն չունեն:

Ք. Ֆոսը Տիգրանի վերաթողարկումների գոյությունը բացատրում է բանակի համար շտապ կերպով դրամ թողարկելու անհրաժեշտությունը, որի համար օգտագործել է այն, ինչը նվաճյալ տարածքներում ձեռքի տակ է եղել: Վերաթողարկումը կարող էր կատարվել ռազմական շրջիկ փողերանոցում կամ տարածաշրջանում հաստատված որևէ հայկական ռազմակայանում, ինչպիսին էր Ամանոս լեռան առևտրական բնակավայրը կամ Կոյլե-Սիրիայի «Տիգրանի գյուղերը»: Ոճական առանձնահատկությունները խոսում են հօգուտ շրջիկ փողերանոցի, քանի որ վերաթողարկումները շատ մոտ են Տիխետով մյուս տիպերին: Այսինքն, կենտրոնական դրամահատարանը կարող էր զորքի հետ վարպետներ ուղարկած լինել, որոնք և իրենց գործում շարունակում էին պահպանել մայրաքաղաքային շրջանին բնորոշ ոճական հատկանիշները<sup>134</sup>: Ըստ նրա, շրջիկ դրամահատարանին պետք է վերազրել այն սերիաները, որոնք դաշտում լրացուցիչ տառեր չունեն:

<sup>134</sup> FOSS 1986, p. 62.

Բռնագրավված դրամի քանակն այնքան մեծ է եղել, որ նրա մի զգալի մասն առաքվել է կենտրոնական դրամահատարան, քանի որ որոշ դրամներ վերաթողարկված են Դ A մենագրեր ունեցող կնիքներով, որի փողերանոցը հաստատապես Սիրիայում կամ Փյունիկիայում չի եղել, իսկ մյուս մասը վերաթողարկվել է Արտավազդի կողմից, որն այս տարածքներն այլևս չէր վերահսկում<sup>135</sup>:

Ե. Ներսեսյանը և Լ. Սարյանը ևս առաջարկում են բացատրություն երկու հնարավոր տարբերակ<sup>136</sup>: 1) Տիգրանի օրոք Փյունիկիայում և Սիրիայում հավաքված ամբողջ պղնձե դրամները կամ դրանց մի մասը տեղափոխվել է Արտաշատ վերաթողարկման նպատակով: Դրանց մի մասը դեռևս գանձատանն էր պահվում, երբ Արտավազդը գահ բարձրացավ ու սկսեց վերաթողարկել դրանք: 2) Մ.թ.ա. 40-39 թթ. Արտավազդը, պարթևների հետ դաշնակցած, կարճ ժամանակով նվաճեց Ասորիքը, Փյունիկիան և Պաղեստինը: Հնարավոր է, որ Արտավազդի վերաթողարկումները վերաբերեն այս ժամանակահատվածին: Հեղինակները հավանական չեն համարում, որ փյունիկյան ու սելևկյան պղնձե դրամները Արտաշատ հասած լինեն միջազգային առևտրական ճանապարհներով: Դրամների ձևաբերման մասին վերոհիշյալ վարկածներից գերադասելի է առաջինը՝ հետևյալ պատճառաբանությամբ: Տիգրանը իր պղնձե վերաթողարկումների համար օգտագործել է փյունիկյան և սիրիական ինը քաղաքների՝ Արադոս (տիպ E, 137-127 թթ., տիպ F, 135-112 թթ., տիպ G և H, 94-21 թթ.), Մարաթոս (տիպ R, 113/2 թ.), Կյուրոս (տիպ V, 113/2, տիպ W, 99/8), Սելևկիա Պիերիա (տիպ S, 109/8 թ.), Բերիտոս (տիպ J, մ.թ.ա. II դ.), Տրիպոլիս (տիպ T և U, մ.թ.ա. II դարի վերջ),

<sup>135</sup> Ք. Ֆոսը խոսում է մեկ այլ հնարավոր բացատրություն մասին, ըստ որի փյունիկյան բրոնզե դրամներն այնքան լայն տարածում ունեին, որ, անգամ Սիրիայից նահանջելուց հետո էլ, հայերին ենթակա տարածքներում դրանք լայնորեն շրջանառում էին: Այս վարկածը նա քիչ հավանական է համարում, FOSS 1986, p. 62-63.

<sup>136</sup> NERCESSIAN and SARYAN 1996, p. 38.

Անտիոք (տիպ A, 92/1 թ., տիպ B, 88/7 թ.), Լարիսա (տիպ Q, 86/5 թ.), Ապամեյա (տիպ D, 76/5 և 70/69 թթ.) և չորս սելևկյան թագավորների դրամներ՝ Դեմետրիոս II (146-138), Անտիոքոս VIII և Կլեոպատրա (125-121), Դեմետրիոս III (95-88), Անտիոքոս XII (89-84)<sup>137</sup>: Այս բոլորի մեջ ամենամեծաքանակը Արադոսի դրամներն են. Ե. Ներսեսյանի և Լ. Սարյանի կողմից հաշվառված Տիգրանի 84 բրոնզե վերաթողարկումներից 50-ը (60 %)<sup>138</sup>:

Արտավազդի վերաթողարկումներում ճանաչելի են երկու քաղաքների դրամներ՝ Արադոսի և Անտիոքի, առաջինի մեծ գերակշռությամբ (ամբողջի շուրջ 40 %-ը): Տիգրանի և Արտավազդի վերաթողարկումներում Արադոս քաղաքի դրամների թվային գերակշռությունը, կարծում եմ, խոսում է այն մասին, որ դրանք ձևով են բերվել միևնույն կարճատև ժամանակահատվածում, այսինքն Տիգրան Մեծի օրոք՝ մինչև մ.թ.ա. 70/69 թվականը, և տեղափոխվել են Հայաստան: Դրանց մի զգալի մասը վերաթողարկվել է Տիգրանի օրոք, հավանաբար 66-61 թթ. ընթացքում, երբ Պոմպեոսին և Հռոմեական բանակին մեծ ռազմատուգանք մուծելուց հետո, Տիգրանը պետք է, որ դրամաթողարկման համար անհրաժեշտ մետաղի (արծաթի և պղնձի) մեծ կարիք զգար ու ստիպված էր այդ տարիներին, գուցե իրոք առաջին հերթին բանակի պահանջները հոգալու համար, հապճեպ կերպով դրամ թողարկել՝ օգտագործելով Փյունիկիայից և Սիրիայից բերված ու գանձատներում կուտակված բրոնզե դրամների պաշարը: Այնուհետև, 61 թ. սկսած մինչև իր գահակալման ավարտը նա թողարկում էր արդեն բարձրորակ արծաթե դրախմաներ, տետրադրախմաներ ու նաև բրոնզե դրամներ:

Գանձարաններում պահվող փյունիկյան և սիրիական դրամների մնացած զանգվածն ավելի ուշ վերաթողարկվել է Արտավազդի կողմից:

<sup>137</sup> NERCESSIAN & SARYAN 1996, p. 33.

<sup>138</sup> Ibid.

Եվ վերջապես, վերաթողարկված է նաև Արտավազդի  
երեք տետրադրախմաններից մեկը (5.2): Ցավոք, դիմերեսի  
ձախ և աջ դաշտերում երևացող հետքերը թույլ չեն տալիս  
գուշակել նախկին պատկերատիպը, որը գուցե ինչ որ բան  
պարզևր Արտավազդի տետրադրախմանների առեղծվածում:

## 7. ՋԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԴՐԱՄԱԹՈՂԱՐԿՄԱՆ ԿՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

### 7.1 Կշիռ, չափ և կնիքների առանցքային հարաբերությունը

Արտավազդ II-ի դրախմաները կշռում են մոտավորապես 3.5-ից 4 գ՝ ավելի հակված լինելով դեպի երկրորդ թիվը: Հիստագրի վրա երևում է, որ 14 հաշվառված օրինակներից 9-ը կենտրոնացած են 3.6 - 3.8 գրամի սահմաններում՝ 3.78 գ միջին կշռով:

Տեսրադրախմաներն առայժմ քանակով չատ քիչ են, որպեսզի հնարավոր լիներ որևէ օրինաչափություն նկատել նրանց կշռային տվյալներում: Միակ դիտողությունը, որ կարելի է այսօր անել, այն է, որ, թեև երեքն էլ հիանալի պահպանվածության դրամներ են, բայց IX (17) տարեթվով դրամներն ավելի ծանր են (16.42 գ և 16.16 գ), քան III (18) տարեթվովը (14.69 գ):

Բրոնզե դրամներն ավելի առատ են և նրանց չափազիտական տվյալների մասին մեր տեղեկություններն ավելի ամբողջական են, ուստի հնարավոր եղավ կազմել կշռային և տրամագծային չափերի հիստագիր յուրաքանչյուր խմբի համար (նոճի և Նիկե)՝ միացնելով նաև դրանց տվյալները մի ընդհանուր հիստագրի մեջ:

Նոճի տիպի 20 դրամների կշռային ընդգրկույթը (դիապազոնը) շուրջ 8.5-ից մինչև 3 գ է: Այստեղ, տվյալների պակասության պատճառով, հիստագիրը նոսր է ու ցրված, բայց նույնիսկ այս վիճակում կարելի է նկատել տվյալների կուտակում 7-ից 4.5 գ կշռային գոտում (20-ից 16-ը, այսինքն՝ 80 %-ը): Այս տիպի դրամների միջին կշիռը կազմում է 5.52 գ:

Նիկե տիպի 56 դրամների կշռային տվյալներով նրանցից

ամենաժանրը շուրջ 9 գ է, իսկ ամենաթեթևը շուրջ 3.5 գ: Հիստագրից երևում է, որ դրամների մեծ մասը խմբվել է 7-ից 5 գ կշռային գոտում (56-ից 39-ը, այսինքն՝ մոտ 70 %-ը): Նիկե տիպի դրամների միջին կշիռը կազմում է 5.81 գ:

Նոճի և Նիկե տիպերի կշռային տվյալները միասին դիտված տալիս են գրեթե նույն պատկերը, ինչ նրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին. 76 դրամներից 58-ը, այսինքն՝ 76 %-ը բաշխվում են շուրջ 7-ից 4.5 գրամի գոտում: Բոլոր պղինձների (նոճի + Նիկե) միջին կշիռն է 5.73 գ:

Նկատի ունենալով Արտավազդի բրոնզների մեծ մասի մաշվածությունն ու հաճախ մետաղի քայքայվածությունը, կարող ենք եզրակացնել, որ սկզբնապես գերակշռել են ավելի ծանր կշռի դրամները, այսինքն՝ եթե Հիստագրի մեջ ընդգրկվելին նույն քանակի միայն լավ պահպանված դրամներ, ապա կշռային տվյալները կկուտակվեին դեպի ավելի ծանր կշիռների կողմը, իսկ միջին կշռային ցուցանիշն ավելի բարձր կլիներ: Պարզ է նաև, որ նոր տվյալների ներգրավումով մեր ստացած միջին կշռային տվյալները, մնալով 5.5-ից 6 գ սահմաններում, կարող են որոշ չափով փոխվել, բայց առավել տարածված կշռային չափերի ընդգրկույթը հաղիվ թե մեծ փոփոխությունների ենթարկվի:

Տրամագծային հիստագրը ցույց է տալիս, որ նոճի և Նիկե տիպի դրամների չափերը տատանվում են 16-ից 24 մմ-ի սահմաններում, և երկուսի մոտ էլ ամենատարածված չափը 22 մմ-ն է. Նիկե տիպի 52 դրամներից 13-ը՝ մոտ 25 %-ը, նոճի տիպի 17 դրամներից 5-ը՝ մոտ 29 %-ը: Երկուսի մոտ էլ շեղումն ուղղված է դեպի ավելի փոքր չափը՝ 16-ից 21 մմ չափ ունեն Նիկե տիպի 52 դրամներից 34-ը և նոճի տիպի 17 դրամներից 11-ը՝ երկու դեպքում էլ շուրջ 65 %-ը:

Երկուսի համար ընդհանուր հիստագրը հաստատում է այս օրինաչափությունը. ըստ 69 դրամների տվյալների, 18 դրամներ ունեն շուրջ 22 մմ տրամագիծ (26 %-ը), իսկ 45 դրամներ՝ 16-ից 21 մմ տրամագիծ (մոտ 65 %-ը):

Նախորդ պարագրաֆում տեսանք, որ Արտավազդի

բրոնզների առնվազն 59 %-ը հատված է ավելի վաղ թողարկված դրամների վրա: Իրականում վերաթողարկված դրամների բաժինը կարող է ավելի մեծ լինել: Կան նմուշներ, որոնց մասին չենք կարող որոշակիորեն ասել, որ դրանք վերաթողարկված են, քանի որ նախորդ տիպի հետքերը չեն երևում, բայց իրենց խոշոր չափով ու արտաքին տեսքով դրանք նման են վերաթողարկված դրամների: Ուրեմն և Արտավազդի բրոնզների չափագիտությունը մեծապես կախված է այն դրամների տվյալներից, որոնք որպես հումք են ծառայել նրա դրամաթողարկման համար: Տրամագծի հիստագրերում նկատելի է չափային երկու խմբերի գոյությունը մոտավորապես 20/21-24 մմ և 16-19 մմ սահմաններում: Մեծ չափ ու հաճախ նաև ավելի ծանր կշիռ ունեցող դրամները գերադանցապես վերահատված դրամներն են: Օրինակ, փյունիկյան Արադոս քաղաքի դրամների վրա կատարված թողարկումներում առավել մեծ թիվ են կազմում շուրջ 5-ից 7 գրամ կշռող դրամները<sup>139</sup>:

Ինչպես տեսանք, Արտավազդի նիկե և նոճի տիպի դրամները չափով և կշռով իրարից չեն տարբերվում. երկուսն էլ ունեն կշռային և չափային տատանումների գրեթե նույն ընդգրկույթը և դրա ներսում ավելի հաճախ հանդիպող չափերի ու կշիռների նույն ցուցանիշները: Ուրեմն ինչպե՞ս բացատրել նույն չափ ու կշռի երկու տարբեր տիպի դրամների թողարկման փաստը:

Դրամների մեծ մասի մաշվածությունը և վատ պահպանվածությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ դրամներից շատերը հայտնի են ինձ լուսանկարներով, երբեմն ոչ բավարարորակի, անհնար են դարձնում դրամաթողարկման կնիքների

<sup>139</sup> Տե՛ս NERCESSIAN & SARYAN 1996, p. 35, Table I, Type F (17-ից 11-ը՝ 64 %-ը) և Type H (39-ից 24-ը՝ 61 %-ը): Այստեղ հաշվառված են նաև Տիգրան Մեծի վերաթողարկումները, բայց հիմքը նույնն է՝ Արադոսի նույնատիպ դրամները, որոնք օգտագործվել են նաև Արտավազդի կողմից: Իրենց կշռային տվյալներով սրանց մոտ են Անտիոքի դրամները՝ որպես հատաձույլ ծառայած դրամների մյուս խումբը (Type A):

լիարժեք համեմատական ուսումնասիրութիւնը: Այդուհանդերձ, որոշ դիտարկումներ հնարավոր եղավ կատարել: Այսպես, պարզվեց, որ դարձերեսին նոճի տիպի ցուց. 3.1 և 3.8 դրամներից բացի, դիմերեսի նույն կնիքով են թողարկվել նաև դարձերեսի Նիկե տիպի ցուց. 4.21 և 4.23, ըստ երևույթին նաև 4.6 և 4.19 դրամները: Հավանաբար դիմերեսի նույն կնիքով կամ միմյանց շատ մոտ կնիքներով են հատված 3.6, 3.9, 3.14 - 3.20 (նոճի) դրամները, որոնք սերտորեն առնչվում են 4.12, 4.17, 4.20, 4.34 (Նիկե) դրամների հետ դիմերեսի դիմապատկերի նմանութեամբ (չի բացառվում նաև՝ նույնութեամբ): Այս կապերն ու առնչութիւնները վկայում են այն մասին, որ նոճի և Նիկե տիպի պղնձե թողարկումները համաժամանակյա են: Միևնույն դրամահատարանը կամ դրամահատարանները միաժամանակ թողարկել են ե՛ւ մեկ, ե՛ւ մյուս սերիայի դրամներից, երբեմն երկուսի համար էլ օգտագործելով դիմերեսի նույն կնիքը:

Ելնելով երկու սերիաների չափազիտական տվյալների գրեթե նույնութիւնից և այն փաստից, որ դրամահատման ընթացքում երկուսի համար երբեմն կիրառվել է դիմերեսի նույն կնիքը, օրինաչափ կլիներ եզրակացնել, որ սրանք նույն պայմանական արժեչափի դրամական թողարկումներ են: Նկատի ունենալով, սակայն, որ Արտավազդի պղնձե դրամների մեծ մասը հատված է Փյունիկիայից և Սիրիայից բերված համեմատաբար մեծ չափի ու ծանր կշռի դրամների վրա, և միայն ավելի փոքր մասն է, որի համար տեղական դրամահատարանում պատրաստվել են ավելի փոքր չափի ու թեթև կշռի հատածույլեր, կարող ենք ենթադրել, որ չափ ու կշռի հանդամանքը էական նշանակութիւն չի ունեցել նրա դրամաթողարկման մեջ: Տիգրան Մեծի պղնձե դրամաթողարկումը, որն առավել բազմազան էր և, այս տեսանկյունից, համեմատաբար ավելի կանոնավոր, մեզ հուշում է, որ Արտավազդի Նիկե և նոճի տիպերով դրամները կարող են իրականում երկու տարբեր արժեչափի թողարկումներ լինել, որոնց զանազանել են ոչ թե չափով ու կշռով, այլ դարձերեսի պատկերատիպով: Տիգրանի պղինձների արժեքային համակարգում նոճու

պատկերով դրամները ավելի ցածր տեղ էին դրադեցնում: Հետևաբար, հնարավորութիւն չունենալով համապատասխան չափի ու կշռի հատաձուլներ պատրաստելու կամ դրա անհրաժեշտութիւնը չտեսնելով, Արտավազդը ելել է հոր օրոք ձևավորված սովորույթից, երբ առօրյա գործարքներում պղնձե դրամների արժեքը տարբերում էին ոչ թե դրանց չափով ու կշռով, որը հաճախ հնարավոր չէր, այլ դարձերեսի պատկերով<sup>140</sup>:

\* \* \*

Կնիքների առանցքային հարաբերութեան վերաբերյալ մեր ունեցած տվյալները թերի են, բայց այն ինչ կա (թե՛ արծաթում, և թե՛ բրոնզում), ցույց է տալիս որոշակի կանոնավորութիւն: Ներքևի կնիքի նկատմամբ վերևի կնիքի դիրքը սովորաբար ժամացույցի թվատախտակի 11-ից 1-ի սահմաններում է (այդ տվյալները տե՛ս ցուցակներում):

## 7.2 Դրամաթողարկման տեխնիկական առանձնահատկութիւնները

Հարկ է անդրադառնալ Արտավազդ II-ի բրոնզե դրամների մի առանձնահատկութեանը, որն անմիջապես ուշադրութիւն է գրավում. նրա բրոնզե դրամներից շատերի դարձերեսներն ընդգծված կերպով գոգավոր են: Այս տեխնիկական յուրահատկութիւնը գրեթե չի հանդիպում Տիգրան Մեծի, և ո՛չ էլ Արտավազդի հաջորդի՝ Արտաշես II-ի ու մյուս հայ արքաների դրամներում:

Տիգրան II-ի և Արտավազդ II-ի պղնձե դրամահատման համար օգտագործվել են ոչ միայն նրանց դրամահատարանում պատրաստված հատաձուլները, այլև, ինչպես վերը տեսանք, վերահատվել են փյունիկյան և սիրիական դրամներ, որոնց մի մասն ունեցել է գոգավոր դարձերես: Սակայն, եթե Տիգրան

<sup>140</sup> ՎԱՐԴԱՆՅԱՆ 1997, էջ 8-9:

Մեծի դրամահատման կնիքները հարթում էին տարբեր ծագման դրամների հատաձույլերի միջև եղած տարբերությունները, քանի որ կնիքի մակերեսը չափով համապատասխանում էր հատաձույլի մակերեսին կամ նրանից մեծ էր լինում, ապա Արտավազդի դրամահատարանում գործածվող կնիքների տրամագիծը հաճախ հատաձույլից ավելի փոքր լինելով, դարձերեսին առաջացնում էր որոշակի գոգավորություն, կամ ավելի էր խորացնում նախնական դրամի արդեն ունեցած գոգավորությունը: Ի դեպ, այն դրամները, որոնք վերահատված չեն, ունեն ավելի փոքր տրամագիծ և հարթ պրոֆիլ: Արտավազդի պղնձե դրամներն ունեն թեք, կլորավուն կամ ուղիղ կողեր, ինչպիսիք կարելի է տեսնել նկ. 1-ում: Այսպիսի բազմադանությունը ևս խոսում է հատաձույլերի զանազան ծագման մասին:

Նկ. 1



Արտավազդի արծաթները աչքի են ընկնում տեխնիկական և գեղարվեստական կատարման վարպետությամբ, մինչդեռ բրոնզե, մասնավորապես՝ վերաթողարկված դրամներում կարելի է նկատել դիմապատկերի ու դարձերեսի պատկերների սխեմատիկություն ու կաշկանդվածություն, գրությունների անկանոնություն, կնիքների փորագրման ու դրամահատման մեջ՝ անփութություն ու շտապողականություն:

Ուշագրավ է նաև, որ Արտավազդի արծաթները, որպես կանոն, լավ պահպանվածություն ունեն՝ կարծես նրանք գրեթե չեն շրջանառվել: Հակառակ դրան, բրոնզե դրամները հաճախ խիստ մաշված են, որն այդ դրամների երկարատև ու ինտենսիվ գործածության նշան է:

## 8. ԴՐԱՄԱԳՅՈՒՏԵՐԸ

Մեր կողմից հաշվառված Արտավազդ II-ի շուրջ 100 դրամներից միայն 4-ի մասին ունենք տվյալներ հայտնաբերման վայրի ու հանգամանքների վերաբերյալ: Դրանք ՀՊԹ-ում պահվող դրամներ են, որոնցից մեկը՝ տեսրադրախմա (ցուց. 5. 3), հայտնաբերվել է 1958 թ. Փարաքարում, մի քանի տարի անց՝ 1961 թ., Գ. Տիրացյանի կողմից այստեղ պեղումների ընթացքում բացած աշտարակաձև դամբարանի տեղում: Պեղելիս, շինության մեջ գտնվել են ևս 7 հայկական, պարթևական և հանրապետական Հռոմի դրամներ, որոնց հիման վրա դամբարանը թվագրվել է մ.թ.ա. I դ. երկրորդ կեսով<sup>141</sup>: Մյուս երկուսը՝ դրախմաներ (2.1-2), ծագում են Սառնակունքի՝ հիմնականում մ.թ.ա. II-I դդ. դրամներ պարունակող գանձից, որոնցից ամենակրտսերը թվագրվում է ոչ ուշ քան մ.թ.ա. 31 թվականով<sup>142</sup>: Վերջապես, չորրորդը՝ դարձերեսին Նիկեի

<sup>141</sup> Հայտնաբերված դրամներն են. Տիգրան Բ, 3 տեսրադրախմա, ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ գրությամբ՝ ՀՊԹ 18305/1, 15.04 գ, 29.3 մմ (ՏԻՐԱՑՅԱՆ 1970, Աղ. 1.1 և 2.1 = NERCESSIAN 2000, p. 69, Gr. 8, A61-P79), ՀՊԹ 18305/2, 15.41 գ, 26.2 մմ, (ՏԻՐԱՑՅԱՆ 1970, Աղ. 1.2 և 2.2 = NERCESSIAN 2000, p. 55, Gr. 2, A15-P9), ՀՊԹ 18305/3, 15.34 գ, 26.4 մմ, (ՏԻՐԱՑՅԱՆ 1970, Աղ. 1.3 և 2.3 = NERCESSIAN 2000, p. 55, Gr. 2, A17-P18), Պարթևաստան՝ ՀՊԹ 18305/4, Որոդ Բ, դրախմա, 3.70 գ, 19.7 մմ, SELLWOOD 1971, type 47.5 (ՏԻՐԱՑՅԱՆ 1970, Աղ. 1.7 և 2.7), Հռոմի հանրապետություն՝ ՀՊԹ 18305/7, Մ. Վոլտեյուս, դենար, 3.70 գ, 18 մմ, մ.թ.ա. 78 թ., CRAWFORD 1974, p. 399, Pl. XLIX, no. 385.1 (ՏԻՐԱՑՅԱՆ 1970, Աղ. 1.6 և 2.6), ՀՊԹ 18305/5, Կ. Կոնստանդինոս Պետրուս, դենար, 3.63 գ, 20 մմ, մ.թ.ա. 46 թ., CRAWFORD 1974, p. 477, Pl. LV, no. 465.4 (ՏԻՐԱՑՅԱՆ 1970, Աղ. 1.5 և 2.4), ՀՊԹ 18305/5, Կ. Վիրիուս Վարուս, դենար (պղնձե՝ արծաթապատված), 2.85 գ, 19.5 մմ, մ.թ.ա. 42 թ., CRAWFORD 1974, p. 508, Pl. LX, no. 494.36 (ՏԻՐԱՑՅԱՆ 1970, Աղ. 1.5 և 2.5):

<sup>142</sup> ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973, էջ 122:

պատկերով պղնձե դրամ, գտնվել է Արտաշատի պեղումներից, VIII բլուրում (ցուց. 4.47): Վերջերս ՀՊԹ-ի կողմից ձեռք բերված պղնձե մի դրամ, դարձերեսին Նիկեի պատկերով, ըստ երևույթին նույնպես հայտնաբերվել է հին Արտաշատի տարածքից կամ նրա շրջակայքից (ցուց. 4, 49):

Մնացած դրամների հայտնաբերման վայրի մասին որևէ վստահելի տեղեկություն չկա: Կարելի է պարզապես ենթադրել, որ Սիրիայում կազմված ժողովածուի և սիրիահայ նվիրատուների կողմից ՀՊԹ-ին հանձնված դրամները ծագում են այժմյան հյուսիս-սիրիական կամ հարավ-թուրքական տարածքներից, որոնք, հավանաբար, Արտավազդ II-ի օրոք դեռևս գտնվելիս են եղել հայոց արքայի իշխանության ներքո:

## 9. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱՐԿՈՍ ԱՆՏՈՆԻՈՍԻ ԵՎ ԿԼԵՈՊԱՏՐԱ VII-Ի ԴՐԱՄՆԵՐՈՒՄ

Առաջին հռոմեական դրամները, որոնցում հիշատակվում է Հայաստանը, Մ. Անտոնիոսի արծաթե դենարներն են:

Դիմ. ANTONIVS · AVGV · COINIS(VL) · DESIGNATVS) · ITER(VM) · ET · TER(TIO)<sup>143</sup>: Մ. Անտոնիոսի գլուխը աջ:

Դարձ. IMP(ERATOR) · TERTIO · III · [VM]VIR · R[E]IP[VBLICAE] · C[ONSTITV]ENDAE)<sup>144</sup>: Հայկական թագ՝ վզկալով և ականջակալով, յոթ ելուստներով, երեք աստղերով, նախադարձ եղրագոտիով: Թագի հետևում, խաչաձևված՝ նետ ու աղեղ:

BABELON 1885, Antonia 94 – CRAWFORD 1974, 539 – BELLONI 1960, 2301.

ՀՊԹ դրամագիտական ժողովածուն պարունակում է այս տիպի երկու դրամ.

1. ՀՊԹ 17824/172, 3.95 գ, 19.0 մմ, 1 ժ., Սառնակունքի դանձ (ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973, 361):

Դիմ. ANTONIVS · AVGV · COS · DES · ITER · ET · TERT:

Դարձ. IMP · TERTIO · III · VIR · R · P · C:

2. ՀՊԹ 18276/1, 3.70 գ, 20.5 մմ, 8 ժ., Զ. Պտուկյանից նվեր (1968):

Դիմ. ANTONIVS · AVGV · COS · [DES · ITER · ET · T]ERT:

Դարձ. IMP · TERTIO · III · VIR · R · P · C:

Հայոց արքայի թագն այստեղ պատկերված է այլ մանրամասներով, քան մենք այն տեսնում ենք հայկական

<sup>143</sup> Թարգմանությունը՝ «Անտոնիոս, քրմապետ, կոնսուլ՝ նշանակված երկրորդ և երրորդ անգամ»:

<sup>144</sup> Թարգմանությունը՝ «Իմպերատոր երրորդ անգամ, եռապետ, Հանրապետությունը հաստատող»:

դրամների վրա: Ե՞րբ և ի՞նչ առիթով է թողարկվել դրամը: Այս հարցի պատասխանը կատանայինք, եթե ճշգրիտ իմանայինք թողարկման ժամանակը: Առաջին հայացքից, Անտոնիոսի տիտղոսները բավականաչափ տվյալներ են պարունակում: Այսպես, 39 թ. Անտոնիոսը միանգամից երկրորդ և երրորդ անգամ ընտրվել է նշանակված կոնսուլ (*consul designatus iterum et tertio*)<sup>145</sup>, 38 թ. երկրորդ անգամ հռչակվել է իմպերատոր (*imperator iterum*), երրորդ անգամ իմպերատոր է հռչակվել 36 թվին (*imperator tertio*)<sup>146</sup>, 34 թ. հունվարի սկզբից իրականացրել է իր երկրորդ կոնսուլությունը և նույն պահից մինչև 31 թ. եղել է երրորդ անգամ նշանակված կոնսուլ (*consul designatus tertio*)<sup>147</sup>: Երրորդ անգամ կոնսուլ է եղել 31 թ. և նույն թվականին, Ակտիոնի ճակատամարտից առաջ, չորրորդ անգամ հռչակվել է իմպերատոր, որի մասին վկայում են միայն նրա վերջին դրամական թողարկումները (*IMP · IIII, COS · TERT*)<sup>148</sup>: Դրամի գրություն մեջ *imperator tertio*-ն ցույց է տալիս, որ այն պետք է թողարկված լինի ոչ ավելի վաղ քան 36 թ., իսկ *consul designatus iterum et tertio*-ն՝ ոչ ավելի ուշ քան 34 թվականի սկիզբը, քանի որ 34 թ. հունվարից նա արդեն կոնսուլ էր երկրորդ անգամ: Ուրեմն, դրամը թվագրվում է 36 կամ 35 թվականով: Բայց ե՞րբ է այն հատվել. մինչև պարթևական արշավա՞նքը՝ 36 թվին, թե՞ դրանից հետո՝ 35 թվին: Այս հարցը կարևոր է, քանզի պատերազմից հետո Անտոնիոսի և Արտավազդ II-ի հարաբերություններում կտրուկ շրջադարձ տեղի ունեցավ: 35 թվականին, Անտոնիոսը Արտավազդ Մեդացու հետ խարդավանքներ հյուսելով Արտավազդ II-ի դեմ, պատրաստվում էր պարթևական նոր արշավանքի՝ Հայաստանի վրայով: Արտաքուստ, Անտոնիոսն ամեն ջանք գործադրում էր Արտավազդ II-ի հետ իր հարաբերությունները

<sup>145</sup> Կոնսուլ, որը, ընտրված լինելով, դեռ չի անցել իր պաշտոնական պարտականությունների կատարմանը:

<sup>146</sup> BABELON 1885, p. 183.

<sup>147</sup> *Idem.*, p. 197.

<sup>148</sup> *Idem.*, p. 205.

բարեկամական ներկայացնելու համար: Այդ ընթացքում «Թեպետև նրա վրա զայրացած էր, որովհետև նա իրենց լքել էր, ու թեև ցանկանում էր պատժել նրան, այնուամենայնիվ սիրաշահեց նրան և հարգանք մատուցեց, որպեսզի նրանից կենսամթերք և դրամ ստանա» (Dio, XLIX. 31, 2-3), «Արմենին նա նախ հրավիրեց Եգիպտոս իբրև բարեկամի, որպեսզի նրան առանց դժվարության ձեռք գցելով, այնտեղ ոչնչացնի» (Dio, XLIX. 33, 2), «(Անտոնիոսն) իր զայրույթը նրա հանդեպ ցույց չէր տալիս, որպեսզի չթշնամանա իր հետ, բայց նրան անպատրաստ գտնելու նպատակով նա շարժվեց Եգիպտոսից, իբրև թե արշավում է պարթևների դեմ» (Dio, XLIX. 33, 3), խնդրում է «աղջկան կնության տալ իր Ալեքսանդր որդուն և խոստանում է նրան շատ պարգևներ շնորհել» (Dio, XLIX. 39, 2), հրավիրում է Նիկոպոլիս «իբրև թե նրա հետ խորհրդակցելու և պարթևների դեմ համագործակցելու նպատակով» (Dio, XLIX. 39, 3): Ի տարբերություն Հայաստանին վերաբերող հաջորդ թողարկման, որտեղ Անտոնիոսի գլխի հետևում պատկերված հայկական փոքրիկ թագի հետ միասին գրությունը բացահայտ ասում է, որ Հայաստանը նվաճված է (*Armenia devicta*)<sup>149</sup>, այս դրամի վրա գրավոր որևէ ակնարկ չկա այդ մասին: Այս ամենը հաշվի առնելով, միանգամայն համոզիչ է թվում Ջ. Պտուկյանի կարծիքը, որ «այս դրամի վրայ տեսնուած հայկական խոյրը՝ թշնամական-նուաճողական նշան մը չէ. այլ ավելի դաշնակից-հպատակութեան նշան մը»<sup>150</sup>: Այդուհանդերձ, մյուս հարցը՝ 36 թե՞ 35 թվական, ըստ իս, մնում է բաց<sup>151</sup>:

<sup>149</sup> Devincto բայն ունի «լիովին, վերջնականապես հաղթել» իմաստը, որը տվյալ կոնտեքստում կարող է թարգմանվել վերոհիշյալ բառով:

<sup>150</sup> ՊՏՈՒԿՅԱՆ 1971, էջ 34:

<sup>151</sup> Վ.Տառնը, Ջ. Պտուկյանը (ՊՏՈՒԿՅԱՆ 1971, էջ 34), Մ.Քրաուֆորդը (CRAWFORD 1974, p. 537, no. 539, Մ. Անտոնիոսի հետ շրջող դրամահատարան) թվագրում են 36 թվականով, Ն.Գրյուբերը (ՊՏՈՒԿՅԱՆ 1971, էջ 34), Ի. Բելլոնին (BELLONI 1960, p. 281, no. 2301, թողարկված Փոքր Ասիայում)՝ 35 թվականով: Է. Բարելոնը ճիշտ վերլուծելով և ցույց տալով, որ դրամը պետք է թողարկված լինի 36-34 թվականների միջև, այնուհետև եզրակացնում է, թե այն հատվել է 34 թվականին

Մյուս թողարկումը, որին հպանցիկ անդրադարձանք, ունի հետևյալ նկարագրութիւնը.

Դիմ. CLEOPATRAE · REGINAE · REGVM · FILIORVM · REGVM<sup>152</sup>:  
Կլեոպատրայի կիսանդրին աջ, ապարոշով. կրծքի մոտ նավի  
դեկ:

Դարձ. ANTONI · ARMENIA · DEVICTA<sup>153</sup>: Մ. Անտոնիոսի  
գլուխը աջ, ծոծրակի մոտ փոքրիկ հայկական թագ չորս կամ  
հինգ ելուստներով, միայն վզկալով. թագի կենտրոնում գնդիկ  
կամ աստղ:

ՀՊԹ-ն ունի այս տիպի չորս դրամ, որոնցից երեքը  
Սառնակունքի գանձից:

3. ՀՊԹ 15143, 3.63 գ, 18.3 մմ, 1 ժ., Սառնակունքի գանձ  
(ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973, 363):

Դիմ. CLEOPATRAE · REGINAE · REGVM · FILIORVM · REGVM:

Դարձ. ANTONI · ARMENIA · DEVICTA: Թագի կենտրոնում  
գնդիկ:

4. ՀՊԹ 17824/173, 3.86 գ, 19.2 մմ, 1 ժ., Սառնակունքի  
գանձ (ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973, 362):

Դիմ. CLEOPATRAE · REGINAE · REGVM · FILIORVM · REGVM:

Դարձ. ANTONI · ARMENIA · DEVICTA: Թագի կենտրոնում  
գնդիկ:

5. ՀՊԹ 16116, 3.81 գ, 17.4 մմ, 1 ժ., Սառնակունքի գանձ  
(ՄՈՒՇԵՂՅԱՆ 1973, 364):

Դիմ. CLEOPATRAE · REGINAE · REGVM · FILIORVM · REGVM:

Դարձ. ANTONI · ARMENIA · DEVICTA: Թագի կենտրոնում  
աստղ:

6. ՀՊԹ 18254, 3.80 գ, 19.1 մմ, 1 ժ., Մ. Միքայելյանից

Հայաստանը նվաճելու և Ալեքսանդրիայի հաղթահանդեսի կապակ-  
ցությամբ (BABELON 1885, p. 195, Antonia no. 94), որն, ինչպես  
տեսանք, հնարավոր չէ:

<sup>152</sup> Թարգմանութիւնը՝ «Կլեոպատրայի՝ թագավորների (և) թագա-  
վորների որդիների թագուհու»:

<sup>153</sup> Թարգմանութիւնը՝ «Անտոնիոս. Հայաստանը նվաճված»:

գնված (1970):

Դիմ. CLEOPATRIAE · REGINAE | REGVM · FILIORVM · REGVM:

Դարձ. ANTONI · ARMENIA · DEVICITA: Թագի կենտրոնում  
աստղ:

Դրամի գրությունները ցույց են տալիս, որ թողարկումը կատարվել է Հայաստանը նվաճելուց և Արտավազդին գերեվարելուց հետո աշնանը Ալեքսանդրիայում կաղմակերպված Հաղթահանդեսի և, այսպես կոչված, «Ալեքսանդրիայի նվիրատվությունների» կապակցությամբ, երբ Կլեոպատրան Անտոնիոսի կողմից հռչակվեց թագավորների թագուհի: Անտոնիոսի դիմապատկերի ոճական առանձնահատկություններով, այս դրամները կապվում են վատահորեն թվագրվող երկու այլ թողարկումների հետ: Դրանցից մեկը, որը դարձերեսին ունի Մարկոս Անտոնիոս կրտսերի դիմապատկերը, Մարկոս Անտոնիոսի IMP. TERT. COS. ITER. DESIGN. TERT. տիտղոսներով թվագրվում է 34 թվականով<sup>154</sup>: Մյուսը՝ դարձերեսին դեպի ձախ կանգնած Նիկեի պատկերով, Անտոնիոսի IMP. IIII. COS. TERT. տիտղոսներով թվագրվում է 31 թվականով<sup>155</sup>: Ահա այս երկու թողարկումների արանքում, Անտոնիոս/Կլեոպատրա դենարները Ի. Բելլոնին թվագրում է 32-31 թթ.<sup>156</sup>, Մ. Քրատոֆորդը՝ 32 թվականով<sup>157</sup>, Ջ. Պտուկյանը նույնպես ավելի հավանական է համարում 32 թվականը<sup>158</sup>, և այնքան էլ պարզ չէ, թե ինչո՞ւ այն չէր կարող թողարկվել հենց 34 թ., ինչպես

<sup>154</sup> BABELON 1885, pp. 193-194, Antonia, no. 91-92; CRAWFORD 1974, p. 538, no. 541, նաև p. 102.

<sup>155</sup> BABELON 1885, pp. 205-206, Antonia, no. 146-147; CRAWFORD 1974, p. 542, no. 545, նաև p. 102.

<sup>156</sup> BELLONI 1960, p. 281-282, no. 2305-2307, Asia Minore.

<sup>157</sup> CRAWFORD 1974, p. 539, no. 513, mint — moving with M. Antonius.

<sup>158</sup> ՊՏՈՒԿՅԱՆ 1971, էջ 39-40: Ջ. Պտուկյանը և, ինչպես Յ. Ֆրիդլենդերը, կարծում է, թե սա այն դրամներից է, որոնք թողարկվել են Անտոնիոսի և Կլեոպատրայի կողմից Աթենքում կաղմակերպված Հաղթահանդեսների առիթով:

կարծում է է. Բարելոնը<sup>159</sup>:

Բոլոր հեղինակների մոտ այս դրամը տեղադրվում է Անտոնիոսի թողարկումների շարքում, իսկ Անտոնիոսի դիմապատկերով կողմը համարվում է դրամի դիմերեսը: Երեք հանգամանքներ, սակայն, խոսում են այն մասին, որ դրամ թողարկողը եղել է Կլեոպատրան կամ էլ դրամը թողարկվել է Կլեոպատրայի, այլ ոչ Անտոնիոսի անունից: Նախ, դրամի այն կողմը, որում պատկերված է Կլեոպատրան, հարթ է կամ քիչ ուռուցիկ, իսկ մյուս կողմը, որտեղ Անտոնիոսն է՝ քիչ գոգավոր է - հատկանիշներ, որոնք, սովորաբար, բնորոշ են համապատասխանաբար դիմերեսին և դարձերեսին: Գրության մեջ Կլեոպատրայի անունը հիշատակված է սեռական հոլովով՝ CLEOPATRAE, ցույց տալով, որ դրամը պատկանում է Կլեոպատրային, և տրված է նրա ընդարձակ տիրադոսաչարը: Սակայն պարզ չէ, արդյոք Անտոնիոսի անունը նո<sup>ւ</sup>ւյնպես սեռական հոլովով է տրված, քանի որ այս թողարկման դրամների վրա այն հանդես է գալիս միայն ANTONI ձևով<sup>160</sup>: Դրանից բացի, Անտոնիոսի տիրադոսաներից և ոչ մեկը հիշատակված չէ, մինչդեռ նրա բոլոր մյուս թողարկումներում դրանք, ամբողջությամբ կամ մասամբ, նշվում էին՝ քրմապետ, կոնսուլ, իմպերատոր, եռապետ: Այս թողարկման գրություններում կան սխալներ ու աղավաղումներ<sup>161</sup>, ինչը քիչ հավանական է դարձնում Մ. Քրաուֆորդի կարծիքն այն մասին, որ դրամները թողարկվել են Մ. Անտոնիոսի հետ շրջող դրամահատարանում: Այնտեղ պետք է որ լատիներենը լավ իմացող վարպետներ աշխատեին:

<sup>159</sup> BABELON 1885, p. 196.

<sup>160</sup> Antōnius անունը սեռական հոլովում ունի Antonii ձևը, տե՛ս ДВОРЕЦКИЙ 1976, с. 80, МАЛИНИН 1961, с. 722:

<sup>161</sup> ՊՏՈՒԿՅԱՆ 1971, էջ 41, CRAWFORD 1974, p. 539.

## 10. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԴՐԱՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Այս թագավորության դրամները, որոնցից Հայտնի են պղնձե հաղվագյուտ օրինակներ, դեռևս բավական մութ բնագավառ է:

**Ասիննալ**

**Տիպ 1**

**Դիմ.** Արքայի կիսանդրին աջ, թագով և ապարոշով, թագն ունի երկու եզրային եռանկյունաձև և մեկ կենտրոնական ուղղանկյունաձև ելուստներ և դարդարված է Π-աձև շրջանակի մեջ ներառված սկավառակով (գնդով), արքայի գլխի հետևում Ա:

**Դարձ.** Նիկեն կվադրիգայի վրա աջ, ձախ ձեռքում սանձը, աջում՝ պսակ, ձիերի տակ՝  կամ M: Գրությունը վերևում՝ ΒΑΣΙΛΕΩΣ →, աջից՝ ΜΕΓΑΛΟΥ ↓, ներքևում՝ ΑΣΙΝΝΑΛΟΥ (կամ ΑΣΙΜΝΑΛΟΥ) →:

Երկար ժամանակ այս դրամներից Հայտնի էր միայն երկու օրինակ: Ֆրանսիայի Ազգային Գրադարանի մեդալների կաբինետի կողմից ձեռք բերված դրամը հրատարակել է Ժ. Լը Ռիդերը (Աղ. 12, C)<sup>162</sup>: Երկու դրամների վրա էլ գրությունը լրիվ ընթեռնելի չէ, արքայի անվան սկզբնատառերը չեն երևում: Թագի ձեռք և դարձերեսի մենագիրը հուշում են, որ այս դրամները կապվում են հաջորդ երկու տիպի դրամների հետ, որոնք վերագրվում են Ատրպատականի թագավոր Արտավազդին: Վերջինիս դրամների գրությունների տառերի հետ համեմատած, այս դրամների տառերն ավելի կանոնավոր են, ինչը հիմք է տվել Ժ. Լը Ռիդերին սրանք համարել ավելի

<sup>162</sup> LE RIDER 1959/60, p. 27, no. 34. Մյուս դրամը տե՛ս MACDONALD 1905, III, p. 3, Pl. LXIII, 5, uncertain king.

վաղ թողարկումներ<sup>163</sup>: Պատկերազրական երկու այլ տարրերով ևս՝ արքայի գլխի հետևում  $\Lambda$  տառով և դարձերեսի կվադրիգայով, այս դրամները սերտորեն առնչվում են Հայոց արքաներ Տիգրան Մեծի և Արտավազդ II-ի, բայց ավելի շատ՝ վերջինիս դրամների հետ: Վերջերս ի Հայտ են եկել նոր օրինակներ, որոնց վրա արքայի անվան սկզբնամասը բավական լավ երևում է, ու այդպիսով արքայի անունը վերականգնվում է որպես Ասիննալ կամ Ասիմնալ (Աղ. 12, A և B)<sup>164</sup>:

### Արտավազդ

#### Տիպ 2

Դիմ. Արքայի կիսանդրին՝ աջ, թագով և ապարոշով: Թագն ունի երեք կլուստ՝ երկու եզրային եռանկյունաձև և մեկ կենտրոնական՝ ձվաձև, և զարդարված է  $\Pi$ -աձև շրջանակի մեջ ամփոփված գնդիկով, որի երկու կողմից թևերը բաց արծիվներ են: Արքայի գլխի հետևում՝ նրան պսակող Նիկեն է:

Դարձ. Արքան կանգնած ձախ, բարձր խույրով, ձախ ձեռքում գավազան, աջ ձեռքը պարզած դեպի նրա դիմաց ծնկի եկած Տիսեն՝ պարսպաձև թագով, որը դեպի արքան մեկնած ձեռքում ունի պսակ և արմավենու ճյուղ: Երկուսի միջև ներքևում  $\boxtimes$  մենագիրը: Վերևում ΒΑΣΙΛΕΩ[Σ] →, աջից [ΒΑ]ΣΙΛΕ[ΩΝ] ↓, ներքևում [ΑΡ]ΤΑΥΑΖΔΟΥ ←, ձախից ΜΕΓΑΛΟΥ ↓:

Հրատարակություններից Հայտնի է երեք օրինակ<sup>165</sup>: ՀՊԹ-ն ունի այսպիսի մեկ դրամ:

<sup>163</sup> *Idem.*, p. 28.

<sup>164</sup> CNG 36, 1995, no. 640, 4.83 gr., 19 mm և CNG 46, 1998, no. 674, 4.86 gr., 18 mm.

<sup>165</sup> HILL 1913, p. 273, Pl. XIII, 15, 3.06 gr, 17 mm, 12 h., Armenia, Artavasdes III (?) (Աղ. 12, D); ROBINSON 1937, p. 250, no. 29, Pl. XXXII, 5.14 gr, 19.0 mm, 12 h., Artavasdes the Mede; LE RIDER 1959/60, p. 26, no. 33, 3.36 gr, 12 h. (= ALLOTTE DE LA FUÏE, La monnaie incertaine au nom d'Artavasde, Revue Numismatique 1914, p. 154, fig. 1) (Աղ. 12, E).

7. ՀՊԹ 19585/50, 4.32 գ, 18.5 մմ, 11 ժ., Ա. Այվադյանից նվեր (1998): Դիմերեսին՝ նույնը, դարձերեսին՝ նույնը, գրութունը վեր.՝ ΒΑΣΙΛΕΩ[Σ], աջից՝ [անընթեռնելի], ներք.՝ [չի երևում], ձախից՝ ΜΕΓΑΛΟ[Υ] (դժվար ընթեռնելի) (նկ. 7):

է. Ռորինսոնը դրամը վերագրել է Ատրպատականի Արտավազդին, այն արքային, որը մ.թ.ա. 36 թ. Անտոնիոսի արշավանքի ժամանակ թագավորում էր Փրասպայում և Հայոց Արտավազդի թշնամին էր<sup>166</sup>: Դրամական պատկերագրության տեսանկյունից այս թողարկումը միաժամանակ կրում է Հայկական (Թագը) և պարթևական (Նիկեն արքայի գլխի հետևում, ծնկաչոք Տիսեն արքայի դիմաց, գրության քառակողմ դասավորությունը) ազդեցություն: Թագը, որն իր ուրվագծով հիշեցնում է Հայկականը, որոշ մանրամասներում տարբերվում է նրանից: Հայկական թագի վերին մասում տեղադրված, սովորաբար հինգ, երբեմն չորս կամ երեք միանման ելուստների փոխարեն, այս թագի վրա տեսնում ենք եզրերին երկու խոշոր եռանկյունիներ և նրանց միջև ձվաձև ելուստ: Ի տարբերություն Տիգրանի և Արտավազդի թագերի, որոնց վրա երկու արծիվների միջև պատկերված է ութաթև կամ վեցաթև աստղ, մար Արտավազդի թագի կենտրոնում ինչ-որ նախ է, որը նման է ուռուցիկ սկավառակի: Բացառված չէ, սակայն, որ այն լինի վարդյակի տեսքով պատկերված արև-աստղի խորհրդանշան, որը եղած օրինակների վրա, վատ պահպանվածության պատճառով, հստակ չի երևում:

Արքային պսակող Նիկեն՝ նրա գլխի հետևում պատկերված, պարթևական դրամական պատկերագրության մեջ առաջին անգամ հայտնվում է պղնձե դրամների վրա մոտավորապես մ.թ.ա. 70-60-ական թթ. (SELLWOOD 1980, 36. 19,

<sup>166</sup> ROBINSON 1937, pp. 250-254. Նույն կարծիքին է ժ. լը Ռիդերը (LE RIDER 1959/60, pp. 26-27): Վերջերս հրատարակված գրքում Ա. Մուշեղյանն ու ժ. Դեպեյրոն այս և հաջորդ թողարկումը (տիպ 3), առանց որևէ հիմնավորում ներկայացնելու, վերագրել են Արտավազդ III-ին (մ.թ.ա. 5-2 թթ.), այն համարելով Արտաշատ քաղաքի թողարկում (MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, p. 182 և 227, no. 159, Pl. 8):

20, 22)<sup>167</sup>: Այնուհետև, մ.թ.ա. I դարի երկրորդ կեսի պարթևական թողարկումներում, արքային պսակող Նիկեին կարելի է տեսնել հաճախակի<sup>168</sup>:

Արքային իշխանության կամ հաղթանակի նշաններ (պսակ, արմավենու ճյուղ) մատուցող աստվածուհու (Տիխե, Դեմետրա, Աթենաս) մոտիվը Հրահատ III-ից սկսած (SELLWOOD 1980, 39) դառնում է բնորոշ պարթևական տեսրադրախմաների համար: Մասնավորապես, արքայի առջև ծնկի եկած և ձեռքը դեպի արքան մեկնած Տիխեին պարթևական դրամների վրա առաջին անգամ հանդիպում ենք Որոդ II-ի վաղ սերիաներից մեկում (SELLWOOD 1980, 45), իսկ ավելի ուշ՝ մ.թ.ա. 30 թ. Հրահատ IV-ի թողարկած տեսրադրախմաների վրա (SELLWOOD 1980, 53): Մար Արտավազդի դրամի պատկերատիպի վրա պարթևական ազդեցությունն անվիճելի է, թեև այն ճշտորեն չի կրկնում վերոհիշյալ տիպերից որևէ մեկը:

Արքայի առջև ծնկի եկած կինը, ըստ է. Ռորինսոնի, խորհրդանշում է Հայաստանի մի հատվածը, որը բռնակցվել էր Մեդիա Ատրոպատենեի թագավորութանը<sup>169</sup>: Կնոջ պարսպաձև թագը վկայում է, որ արքայի առջև Տիխեն է, բայց ո՛չ որպես միայն ճակատագրի աստվածուհի, այլ որպես քաղաքի հովանավոր աստվածուհի: Հետևաբար, ակնարկը ինչ-որ քաղաքի (կամ քաղաքների) մասին է, որն իր համակրանքը կամ

<sup>167</sup> SELLWOOD 1980, 36-ի ատրիբուցիայի հարցում չկա միասնական կարծիք: Այստեղ այս հարցի մեջ խորանալու անհրաժեշտություն չենք տեսնում, միայն նշենք, որ տարբեր հեղինակներ այս խումբը վերագրում են Սինատրուկին, Հրահատ III-ին, Դարեհին, Որոդ II-ին կամ համարում են մեզ անհայտ արքայի թողարկում:

<sup>168</sup> SELLWOOD 1980, 42 (Որոդ II, դրախմա և բրոնզ, Եկրատան), 49 (Բակուր V, դրախմա և բրոնզ, Եկրատան), 50 (Հրահատ IV, դրախմա և բրոնզ, Ռագա և Եկրատան), 56 (Հրահատակ, դրախմա և բրոնզ, Միհրդատկերտ, Նիսա), 57 (Հրահատակ, երկու Նիկե՝ գլխի ձախ և աջ կողմում, տեսրադրախմա, դրախմա և բրոնզ, Տիգրիսի Սելևկիա, Եկրատան, Մարգիանե), 58 (Հրահատակ և Մուսա, մեկական Նիկե թագավորի և թագուհու գլխի դիմաց, տեսրադրախմա, Տիգրիսի Սելևկիա, երկու Նիկե՝ արքայի գլխի ձախ և աջ կողմում, Եկրատան):

<sup>169</sup> ROBINSON 1937, p. 254.

հնազանդությունն է հայտնում արքային: Սակայն, ինչպես այս պատկերատիպի, այնպես էլ Արտավազդ Մեդացու արքայից արքա տիտղոսի մեկնաբանման հարցը կախված է դրամի ճիշտ թվագրումից: Ցավոք, դրամն ինքնին հնարավորություն չի տալիս պարզելու, թե մ.թ.ա. 40-30-ականների ընթացքում հատկապես ո՞ր թվին է այն թողարկվել: Եթե այն թողարկվել է մինչև 36 թվականը, ապա կարելի է ենթադրել, որ նախկինում Հայաստանին ենթակա Ատրպատականի արքան ըմբոստացել էր, ըստ երևույթին պարթևների աջակցությամբ, հայոց Արտավազդի դեմ և, գուցե, Տիգրան Մեծի հետ աղգակցական կապերը մեջտեղ բերելով, հավակնում էր գերիշխանության: Սա կարող էր լինել երկու թագավորների միջև թշնամանքի պատճառը (կամ պատճառներից մեկը) Անտոնիոսի արչավանքի նախօրյակին: Իսկ եթե արքայից արքա տիտղոսով այս դրամը թողարկվել է 35-31 թթ. ընթացքում, ապա այդ քայլին կարող էր դրդել և խրախուսել Անտոնիոսը, որը դարձել էր մար Արտավազդի դաշնակիցն ու խնամին, իսկ 33 թ. նրան էր հանձնել «նորանվաճ Հայաստանից որոշ մասեր» (Dio XLIX. 44, 2): Եթե այդ «որոշ մասերի» տակ պետք է հասկանալ Հայաստանի արևելյան շրջանները, ապա հնարավոր է, որ Արտաշատը նույնպես անցած է եղել մար Արտավազդի իշխանության ներքո և, այս կոնտեքստում, ծնկաչոք Տիսեն կարող է խորհրդանշել Արտաշատը:

### Տիպ 3

Դիմ. Արքայի կիսանդրին աջ, թագով և ապարոշով: Թագն ունի երեք ելուստ՝ երկու եզրային եռանկյունաձև և մեկ կենտրոնական ուղղանկյունաձև (ինչպես նախորդը) կամ ձվաձև ելուստներ, և զարդարված է Π-աձև շրջանակի մեջ ամփոփված խորհրդանշաններով<sup>170</sup>: Գլխի հետևում արծիվ՝

<sup>170</sup> ՀՊԹ-ի օրինակի վրա պատկերի այդ մասը պարզ չէ: Ռ. Սուլիվանի հրատարակած լուսանկարում երեք անհասկանալի պատկերներ են (արծիվ - ~ - արծիվ), SULLIVAN 1973, Pl. 14, 8: Նախորդի հետ

կտուցին պսակ:

Դարձ. կնոջ կիսանդրի ձախ, աշտարակաձև թագով և ապարոշով: Շուրջը՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΤΑΥΑΖΔ[....] ΙΟΥ (?):

Հրատարակություններից հայտնի է մի քանի օրինակ<sup>171</sup>: Մեկ դրամ կա ՀՊԹ-ում:

8. ՀՊԹ 19059, 4.32 գ, 18.5 մմ, 11 ժ., L. և Մ. Արգարյաններից նվեր (1980): Դիմերեսին՝ նույնը, դարձերեսին՝ նույնը, գլխի հետևում՝ [ΒΑΣ]ΙΛΕΩ[Σ] †: Գրության մյուս հատվածները չեն երևում (Աղ. 12, 8):

Թագը հիմնականում նման է նախորդ տիպի վրա պատկերված թագին, բայց արքայի դիմագծերը զգալիորեն տարբերվում են: Տիպ 2-ի վրա պատկերված արքան գեր է, լիքը այտերով, ներքնակղակով: Տիպ 3-ի դիմապատկերում արքան նիհար է, ընդգրծված այտոսկրով, արծվաքիթ, սրածայր դնչով: Հեղինիստական դարաշրջանի դրամների վրա կարելի է տեսնել նույն արքայի իրարից տարբերվող դիմապատկերներ: Այստեղ այդ տարբերությունները բավական մեծ են, որպեսզի թագի և անվան ընդհանրությունից ելնելով այդ երկու թողարկումները նույն արքային վերագրելիս որոշ կասկած չմնա այդ հարցում:

Պարթևական դրամների վրա արքայի գլխի հետևում կտուցին պսակ ունեցող արծիվ պատկերվել է միայն Հրահատ IV-ի օրոք (մ.թ.ա. շուրջ 38-2)<sup>172</sup>: Այս պատկերագրական հատկանիշը դրամի թվագրման կովաններից մեկը կարող է լինել:

Դարձրեսին պատկերված կնոջը է. Ռորինսոնը համարում է թագուհի և ենթադրում է, որ այն կարող է լինել Արտավազդ Մեղացու դուստրը՝ Յոտապեն, որին Անտոնիոսը տարավ իր և

դիմապատկերի նմանություն մասին նշելով, է. Ռորինսոնն ավելացնում է, որ թագն առանց գնդի է, ROBINSON 1937, p. 251, no. 30:

<sup>171</sup> ROBINSON 1937, p. 251, no. 30 (4.61 gr, 18.5 mm, †), 31 (4.30 gr, †); SULLIVAN 1973, Pl. 14, 8 (Աղ. 12, H); CNG 36, 1995, no. 639, 4.24 gr., 17 mm (Աղ. 12, F).

<sup>172</sup> Sel. 52 և 53 (դրախմա և բրոնզ), Sel. 54 (դրախմա):

Կլեոպատրայի որդի Ալեքսանդր Հելիոսի հետ ամուսնացնելու համար (Dio XLIX. 44, 2), և որին պարգևեց «Հայաստանը ու Եփրատից այն կողմ ընկած բոլոր երկրները՝ մինչև Հնդկաստան. ... կարծես արդեն նվաճած լիներ» (Dio XLIX. 41. 3-4)<sup>173</sup>: Եղած օրինակները դեռևս հնարավորութուն չեն տալիս ճշտորեն վերականգնել մարական դրամի վրա պատկերված կնոջ թագի ձևը: Այն որոշ չափով նման է սովորաբար Տիխեի գլխին պատկերվող, երեք աշտարակներ ունեցող պարսպաթագին (corona muralis), երբեմն՝ մազերը շղարշող քողով: Այստեղ, սակայն, այդ աշտարակները կարծես միաձույլ են և թողնում են ավելի շուտ կլոր բարձր աշտարակի տպավորություն: Միևնույն ժամանակ, կնոջ գլխի հետևում կարծես թե ապարոշի ժապավեն է կախված, որն, իր հերթին, բնորոշ է Տիխեի պատկերագրությանը: Ապարոշը արքայական իշխանության նշան էր, և աստվածներին դրանով չէին պատկերում: Հրահատակի և Մուսայի դրամների վրա, օրինակ, թագուհին կրում է նոստիճան բարձր թագ, ապարոշով կապված և թանկարժեք քարերով դարդարված, որոնք տրված են փոքր և մեծ կետիկների տեսքով (SELLWOOD 1980, 58): Պետք է սպասել ավելի լավ պահպանված, ընթեռնելի գրություններ օրինակների ի հայտ գալուն, որպեսզի հնարավոր լինի պարզել, թե ո՞ւմ է ներկայացնում մարական այս դրամի դարձերեսը:

Այժմ կարող ենք արձանագրել, որ գրության շրջանաձև տեղադրությունը խոսում է հռոմեական ազդեցության մասին: Շրջանաձև հունարեն գրությունը առաջին անգամ հայտնվում է Մարկոս Անտոնիոսի և Կլեոպատրայի կողմից մ.թ.ա. 38-31 թթ. Անտիոքում թողարկված տետրադրախմանների վրա: Ավելի ուշ, Օգոստոս կայսեր օրոք, գրության այդ ձևը սկսում է լայնորեն կիրառվել, այդ թվում՝ մ. թ. առաջին տասնամյակում թողարկված պարթևական և հայկական դրամների վրա<sup>174</sup>:

Ո՞վ է այս դրամը թողարկող արքան՝ Արտավազդ II-ի

<sup>173</sup> ROBINSON 1937, p. 254.

<sup>174</sup> Sel. 58, 60; BEDOUKIAN 1978, no. 163-167.

ժամանակակից մար Արտավազդը, որը, որպես Անտոնիոսի դաշնակից, կարող էր այն թողարկած լինել մ.թ.ա. 35-31 թթ., թե՛ Ատրպատականի Արտավազդ անունով մեկ այլ, ավելի ուշ թագավորած արքա: Թվագրման առումով որոշակի է առնվազն հետևյալը. տիպ 3-ը թողարկող արքան եղել է Հրահատ IV-ի ժամանակակիցը կամ իշխել է նրանից հետո, և այն հատված է ավելի ուշ, քան տիպ 2-ը:

Եթե, ամփոփելով, միմյանց հետ համեմատենք ատրպատենյան այս երեք խմբերը, ապա կարելի է նկատել, որ տիպ 1-ի վրա գերակշռում է հայկական, մասնավորապես՝ Արտավազդ II-ի դրամական պատկերագրության ազդեցությունը (թագը, կվադրիգան), իսկ դարձերեսի պատկերի երեք կամ չորս կողմից տեղադրված գրությունը խոսում է նաև պարթևական ազդեցության մասին: Պահպանելով հայկական տարրը (թագը), տիպ 2-ն ավելի հակվում է դեպի պարթևական պատկերագրությունը (Նիկեն՝ արքայի գլխի հետևում, արքա և Տիխե տեսարանը, գրության քառակողմ դասավորությունը): Տիպ 3-ում հայկական (թագը) և պարթևական (արծիվը՝ արքայի գլխի հետևում) տարրերին ավելանում է հռոմեականը (գրության շրջանաձև տեղադրությունը): Պատկերագրական այսպիսի փոփոխությունները տարածաշրջանում մ.թ.ա. I դարի երկրորդ կեսի քաղաքական զարգացումների ուրույն արձագանքն են:

## ՎԵՐՋԱՐԱՆ

Տիգրան Մեծի օրոք քաղաքական ու տնտեսական հզորացման գաղաթնակետին հասած Արտաշեսյանների թագավորութունը մ.թ.ա. 69-66 թթ. հռոմեացիների դեմ պատերազմներում կրած կորուստներից հետո, իսկ հետագայում՝ Հռոմի ու Պարթևաստանի չղադարող ճնշումների ներքո, աստիճանաբար կորցնելով քաղաքական անկախութունը, գնում էր դեպի անկում: Այդուհանդերձ, դեռ երկար ժամանակ Հայաստանը մնալու էր Արևելքի ազդեցիկ պետութուններից մեկը և միջագային քաղաքականության վրա ծանրակշիռ ազդեցութուն ունեցող գործոն:

Արտաշեսյան Հայաստանում դրամաթողարկման սկիզբն ու ծաղկումը միաժամանակ վերաբերում է Տիգրան Մեծի թագավորման շրջանին, երբ առատորեն թողարկվել են բարձրորակ արծաթե ու պղնձե դրամներ: Դատելով Արտավազդ II-ի մեզ հասած դրամների քանակից ու ընդամենը դարձերեսի երկու տիպ ներկայացնող պղնձե դրամների գոյության փաստից, քաղաքական գործընթացներն անմիջականորեն ներգործել են դրամաթողարկման ծավալների վրա: Անտոնիոսի կողմից հայկական գանձատների կողոպուտը կարող է լինել այժմ հայտնաբերվող Արտավազդի դրամների սակավության բացատրութուններից մեկը, բայց ոչ գլխավորը: Մինչև հռոմեական պատերազմը Տիգրանի թողարկած մեծ քանակությամբ դրամները, որքան էլ դրանք պակասած լինեին Պոմպեոսին վճարած ռազմատուգանքների հետևանքով, պատերազմից հետո իրագործված նոր դրամաթողարկումների հետ միասին դեռևս շարունակում էին կազմել Հայաստանում շրջանառող հայկական դրամների հիմնական զանգվածը:

Հայաստանում դրամագյուտների, մասնավորապես՝ գանձերի ու դրանց բաղադրության մասին ստույգ տվյալների

բացակայութեան պայմաններում մեծ կարևորութիւն են ներկայացնում Սառնակունքի գանձում հայկական 10 արծաթե դրամները, որոնցից 8-ը պատկանում են Տիգրան II-ին և միայն 2-ը՝ Արտավազդ II-ին: Ի դեպ, Տիգրանի 8 դրամներից 2-ը (տետրադրախմաներ) հատվել են նրա դրամաթողարկման առաջին փուլում՝ մինչև 69 թ., իսկ մյուս 6-ը (1 տետրադրախմա և 5 դրախմա)՝ թագավորման վերջին տարիներին: Արտաշատի պեղումներից հայտնաբերված Տիգրան Մեծի արծաթե դրամների գանձն ամբողջութեամբ բաղկացած է 61-56 թթ. թողարկումներից (1 տետրադրախմա և 28 դրախմա): Սառնակունքի գանձի տվյալները, անուղղակի կերպով՝ նաև Արտաշատինը, վկայում են այն մասին, որ Արտավազդ II-ի օրոք Հայաստանում շրջանառող դրամական զանգվածում Տիգրան II-ի դրամները, հատկապես՝ նրա վերջին տարիների թողարկումները, իշխող արքայի դրամների համեմատութեամբ շարունակում էին գերակշռել:

Այս աշխատութեամբ փորձեցի ներկայացնել Արտավազդ II-ի դրամահատութեան վերաբերյալ ինձ հասանելի նյութը, որն անշուշտ ամենը չէ, ինչ իրականում կա թանգարանային և անհատական հավաքածուներում, բայց և այնպես կազմում է այդ արքայի մինչ այժմ հայտնաբերված դրամների հիմնական մասը: Դրանց կատալոգացումը, մասնավորապես՝ բրոնզե դրամներինը, որն առաջին անգամ է կատարվել, հասունացած խնդիր էր դարձել Արտավազդի դրամաթողարկման մասին քիչ թե շատ ամբողջական պատկերացում ստանալու համար: Դրա շնորհիվ հնարավոր դարձավ վերանայել նախկինում արտահայտված տեսակետներ Արտավազդի դրամների ուսումնասիրման առանձին հարցերի վերաբերյալ և անդրադառնալ այնպիսի խնդիրների, որոնք երբևէ չեն քննարկվել նախորդ հետազոտողների կողմից:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

**ԶԱՐԴԱՐՑԱՆ 1977** - Զարդարյան, Մ., Արտաշատում կտրված դրամների մի տիպի մասին, *Լրաբեր Հասարակական գիտությունների* 2, էջ 80-85:

**ԶԱՐԴԱՐՑԱՆ 1998** - Զարդարյան, Մ., Եզակի դրամներ Արտաշատի պեղումներից, Արտաշես Բ, *Դրամաչրջանառությունը Հայաստանում. Հանրապետական գիտական նստաչրջան, 21 նոյեմբերի. զեկուցումների թեզիսներ*, Երևան, էջ 5-7:

**ԶԱՐԴԱՐՑԱՆ 2000** - Զարդարյան, Մ., Արտաշես II-ի անդրանիկ դրամները և պատմա-դրամագիտական դրվագներ վերջին Արտաշեսյանների ժամանակաչրջանից, *Դրամագիտական հետադոտություններ*, Երևան, էջ 4-25:

**ՀԺՊ 1** - Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1971:

Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, [Հին հունական աղբյուրներ Ա], թարգմ. Ս. Կրկյաչարյանի, Երևան, 1976:

**ՂԱՐԱԳՅՈՋՑԱՆ 1959** - Ղարազյոզյան, Հ., Արտաշես I-ի հեթանոսական աշտարակ-մեհյանը, *Երևան (օրաթերթ)*, թիվ 97, 17 մայիս:

**ՄԱՆԱՆԴՑԱՆ 1977** - Մանանդյան, Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, վերահրատարակված՝ Հ. Մանանդյան, *Երկեր Ա*, Երևան, էջ 9-403:

**ՄԱՆԱՍԵՐՑԱՆ 1997** - Մանասերյան, Ռ., Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան:

**ՄՈՒՇԵՂՑԱՆ 1964** - Մուշեղյան, Խ., Արտավազդ 2-րդի չորեքդրամյանը, *Պատմա-բանասիրական հանդես* 2, էջ 317-323.

**ՄՈՒՇԵՂՑԱՆ 1973** - Մուշեղյան, Խ., Հայաստանի դրամական գանձերը 1, Երևան:

**ՄՈՒՇԵՂՑԱՆ 1978** - Մուշեղյան, Խ., Արտաշատի հայկա-

կան գանձը, Հայ դրամագիտական Հանդես 4, pp. 105-124.

**ՄՈՒՇԵՂՅԱՆ 1983** - Մուշեղյան, Խ., Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. - մ.թ. XIV դ.), Երևան:

**ՄՈՒՇԵՂՅԱՆ 1997** - Մուշեղյան, Խ., Հայոց պատմության դրամագիտականը, Երևան:

Պլուտարքոս, Կենսագրություններ, թարգմ. Ս.Կրկյաչարյանի, Երևան, 2001:

**ՊՏՈՒԿՅԱՆ 1971** - Պտուկյան, Զ., Հայաստանի վերաբերյալ հռոմեական դրամներ և մեդալիոններ, Վիեննա:

**ՍԱՐԳՍՅԱՆ 1966** - Սարգսյան, Գ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան:

**ՍԱՐԳՍՅԱՆ 1971** - Սարգսյան, Գ. Խ., Հայաստանը, Փոքր Ասիան և Սելևկյանները, Հայ ժողովրդի Պատմություն 1, Երևան, էջ 545-546:

**ՍԱՐԳՍՅԱՆ 1975** - Սարգսյան, Հ., Հայոց թագավոր Արտավազդ 4-րդի դրամները (4-6 թթ. մ.թ.), Բանբեր Հայաստանի արխիվների 3, էջ 183-190:

**ՎԱՐԴԱՆՅԱՆ 1999** - Վարդանյան, Ռ., Հորինված արծաթե դրամ «Աստվածային Արտաքսերքսեսի» անվամբ, Պատմա-բանասիրական Հանդես 1, էջ 321-326:

**ՏԻՐԱՅՅԱՆ 1970** - Տիրացյան, Գ., Փարաքարի աշտարակաձև դամբարանը և նման հուշարձաններ Հայաստանում և Առաջավոր Ասիայում, Բանբեր Երևանի Համալսարանի 1, էջ 222-239:

**АРАКЕЛЯН 1976** - Аракелян, Б. Н., Очерки по истории искусства гревней Армении (VI в. до н. э. - III в. н. э.), Ереван.

**ВАРДАНЯН 1987** - Варданян, Р. Е., К вопросу о датировке двух групп армянских монет эллинистической эпохи, Պատմա-բանասիրական Հանդես 2, էջ 195-207:

**ВАРДАНЯН 1999** - Варданян, Р. Е., Великий царь царей Фарнак, Боспорский город Нимфей: новые исследования и материалы и вопросы изучения античных городов Северного Причерноморья, Санкт-Петербург, с. 14-17.

*ДВОРЕЦКИЙ 1976* - Дворецкий, И. Х., *Латинско-русский словарь*, Москва.

*ДЬЯКОНОВ, ЗЕЙМАЛЬ 1988* - Дьяконов, И. М., Зеймаль, Е. В. *Правитель Парфии Андрагор и его монеты*, *Вестник древней истории* 4, с. 4-19

*ЗЕЙМАЛЬ 1979* - Зеймаль, Е. В., *Амударьинский клад. Каталог выставки*, Ленинград.

*МОЛЕВ 1995* - Молев, Е. А., *Властитель Понта*, Нижний Новгород.

*МОЛЕВ 1999* - Молев, Е. А., *О времени установки статуи Митридата Евпатора в Нимфее*, *Античный мир, Материалы научной конференции*, Белгород, с. 85-91.

*МУШЕГЯН 1978* - Мушегян, Х., *Портреты армянских царей эпохи эллинизма*, Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիում, Երևան, 10 էջ:

*ТИРАЦЯН 1973* - Тирацян, Г., *Портретное искусство Армении по монетам Тиграна II и Артавазда II*, Պատմա-րանասիրական Հանդես 4, էջ 43-69:

*ТИРАЦЯН 1985* - Тирацян, Г., *Вопросы преемственности официального культа в античной Армении*, Լրարժեր Հասարակական գիտություններ 10, էջ 58-65:

*ШЛЮМБЕРЖЕ 1985* - Шлюмберже, Д., *Эллинизированный Восток (греческое наследие и его наследники в несредиземноморской Азии)*, Москва.

*ACB, Bulletin 17 (1994)* - Nercessian, Y.T., *Armenian Coins and Books, Bulletin No. 17.*

*ACB, Bulletin 18 (1996)* - Nercessian, Y.T., *Armenian Coins and Books, Bulletin No. 18.*

*ACB, Bulletin 19 (1998)* - Nercessian, Y.T., *Armenian Coins and Books, Bulletin No. 19.*

*ARNAUD 1987* - Arnaud, P., *Les guerres des Parthes et de l'Arménie dans la première moitié du premier siècle av. n. è.: problèmes de chronologie et d'extension territoriale (95 B.C.-70 B.C.)*, *Mesopotamia* 22, 129-145.

*BABELON 1890* - Babelon, E., *Les rois de Syrie, d'Arménie*

*et de Commagène*, Paris.

Bank Leu AG Zürich, Auktion 30: Antike Münzen; Griechen Römer (Zürich, April 28, 1982).

**BEDOUKIAN 1968** - Bedoukian, P.Z., A Classification of the Coins of the Artaxiad Dynasty of Armenia, in: Bedoukian, P.Z., *Selected Numismatic Studies*, Los Angeles, 1981, pp. 113-141.

**BEDOUKIAN 1978** - Bedoukian, P.Z., *Coinage of the Artaxiads of Armenia* [=RNS Special Publication 10], London.

**BEDOUKIAN 1983** - Bedoukian, P.Z., Some Unpublished Coins of the Artaxiads of Armenia, *Revue des Etudes Arméniennes XVII (1983)*, pp. 279-287.

**BELLONI 1960** - Belloni, G. G., *Le Monete Romane dell'Età Republican*, Milano.

**BMC Galatia** - WROTH, W., *A Catalogue of the Greek Coins in the British Museum, (Galatia, Cappadocia and Syria)*, London, 1899.

**BMC Phoenicia** - HILL, G.F., *Catalogue of the Greek Coins of Phoenicia. British Museum*, London, 1910; reprint, Bologna, 1965.

**CNG 36** - Classical Numismatic Group, Inc. A Public and Mail Bid Auction Sale, Auction 36, December 5 & 6, 1995.

**CNG 46** - Classical Numismatic Group, Inc. Mail Bid Sale, Auction 46, June 24, 1998.

**CNG 51** - Classical Numismatic Group, Inc. A Public and Mail Bid Auction Sale, Auction 51, September 15, 1999.

**CNG 61** - Classical Numismatic Group, Inc. A Mail Bid Sale, Auction 61, September 25, 2002.

**CNG XXVII** - Classical Numismatic Group, Inc. A Mail Bid Auction Sale of Classical Coins, September 29, 1993.

**CRAWFORD 1974** - Crawford, M. H., *Roman Republican Coinage*, Cambridge.

**FOSS 1986** - Foss, C., *The Coinage of Tigranes the Great:*

Problems, Suggestions and a New Find, *Numismatic Chronicle* 146, pp. 19-66.

**HILL 1913** - Hill, G. F., Greek Coins acquired by the British Museum, 1911-1912, *Numismatic Chronicle* 13, pp. 257-275.

**KOCH 1992** - Koch, H., *Es Kündet Darios der König...* [=Kulturgeschichte der antiken Welt, Band 55], Mainz/Rhein.

**KOCH 1993** - Koch, H., Heimat und Stammvater der Arsakiden, *Archaeologische Mitteilungen aus Iran*, Band 26, pp. 165-173.

**LE RIDER 1959/60** - Le Rider, G., Monnaies grecques acquises par le Cabinet des Médailles en, *Revue Numismatique*, pp. 7-35.

**MACDONALD 1905** - Macdonald, G., *Catalogue of Coins in the Hunterian Collection*, III, Glasgow.

**MC EWAN 1986** - Mc Ewan, G., A parthian campaign against Elymais in 77 B.C., *Journal of the British Institute of Parsian Studies* 24, pp. 91-94.

**MIRONE 1927** - Mirone, S., Monnaies historiques de la Sicile antique, *Arethuse* 2, pp. 67-91.

**MOUSHEGHIAN & DEPEYROT 1999** - Mousheghian, A., Depeyrot, G., *Hellenistic and Roman Armenian Coinage (1st c. BC-1st c. AD)* [=Moneta 15], Wetteren.

**MOUSHEGHIAN, K., MOUSHEGHIAN, A., DEPEYROT, G. 2000** - Mousheghian, K., Mousheghian, A., Depeyrot, *History and coin finds in Armenia: Antiquity* [=Moneta 17], Wetteren.

**NERCESSIAN 1995** - Nercessian, Y.T., *Armenian Coins and Their Values*, [=ANS Special Publication 8], Los Angeles.

**NERCESSIAN 2000** - Nercessian, Y.T., Silver Coins of Tigranes II of Armenia, *Armenian Numismatic Journal* XXVI, pp. 43-108.

**NERCESSIAN 2003** - Nercessian, Y.T., Some Unpublished Coins of Tigranes the Great of Armenia, *Armenian Numismatic Journal* XXIX, pp. 61-65.

**NERCESSIAN 2003a** - Nercessian, Y.T., Silver Coins of Artavasdes II of Armenia, *Armenian Numismatic Journal* XXIX, pp. 3-11.

**NERCESSIAN & SARYAN 1996** - Nercessian, Y.T., Saryan, L.A., Overstruck and Countermarked Coins of the Artaxiad Dynasty of Armenia, *Armenian Numismatic Journal* 22, pp. 23-62.

**NEWELL 1937** - Newell, E.T., *Royal Greek portrait Coins*, Racine (Wisc.).

**NEWELL 1938** - Newell, E.T., *The Coinage of the Parthians*, in *A Survey of Persian Art 1*, Oxford-London-New York, pp. 475-492.

**NEWELL 1939** - Newell, E.T., *The Late Seleucid Mints*, New York.

**NFA V** - Numismatic Fine Arts, Inc. Auction V: Ancient Coins, Beverly Hills, 1978.

**NFA XXII** - Numismatic Fine Arts International, Inc. Auction XXII, Los Angeles, 1989.

Numismatic Collection N. K., Paris - Drouit Richelieu - Salle no. 7, les 27-28-29 octobre 1992.

Peus, Katalog 340, Sammlung Nicolas V. Jamgochian, 2 November 1994.

**ROBINSON 1937** - Robinson, E. S. G., British Museum Acquisitions 1935-1936, *Numismatic Chronicle* 65, pp. 250-254.

**ROBINSON 1971** - Robinson, E. S. G., *A Catalogue of the Calouste Gulbenkian Collection of Greek Coins, Part I-II. Italy, Sicily, Carthage, Lisbon.*

**SELLWOOD 1980** - Sellwood, D.G., *An Introduction to the Coinage of Parthia*, London, (sec. ed.).

**SELLWOOD 1983** - Sellwood, D.G., *Parthian Coins*, in: *Cambridge History of Iran 3 (1)*, Cambridge, pp. 279-299.

**SEYRIG 1964** - Seyrig, H., Un tétradrachme d'Artavasde I, *Revue Numismatique* 6, pp. 139-140.

*SIMONETTA 1966* - Simonetta, A.M., Some Remarks on the Arsacid Coinage of the Period 90-57 B.C., *Numismatic Chronicle* 6, pp. 15-40.

*Spink 102* - Spink & Son, Ltd. Coin Auction 102: Ancient, Foreign and English Coins and Commemorative Medals. London, March, 1994.

*SULLIVAN 1973* - Sullivan, R.D., Diadochic Coinage in Commagene After Tigranes the Great, *Numismatic Chronicle* 13, pp. 18-39.

*TEKIN1992* - Tekin, O., The Coins from Üçtepe with a Problematic Emission of Tigranes the Younger, *Epigraphika Anatolica* 20, pp. 43-53.

*VARDANYAN 1999* - Vardanian, R., Le titre de «roi des rois» dans les relations entre les Parthes, l'Arménie et Rome, in: *Roma-Armenia* (Grande Salle Sixtine, Bibliothèque Apostolique du Vatican, 25 mars-16 juillet 1999), pp. 43-47.

*VARDANYAN 2001* - Vardanian, R., A Dated Copper Coin of Artaxias II: Evidence on the Use of the Pompeyan Era in Artaxata, *Armenian Numismatic Journal* XXVII, pp. 89-94, Pl. 3: 1-2.

*WALTON DOBBINS 1975* - Walton Dobbins, K., The Successors of Mithradates II of Parthia, *Numismatic Chronicle* 15, pp. 19-45.



1



(3x)



Աղյուսակ 2



2.1



2.2



2.4



2.5



2.6



2.7



2.8



2.9



2.13



2.14



2.2(3x)





3.1



3.2



3.3



3.4



3.5



3.6



3.7



3.8



3.9



3.10



3.11



3.12



Աղյուսակ 4



3.13



3.14



3.15



3.16



3.17



3.18



3.19



3.20



3.18 (2.5x)





Աղյուսակ 6



4.13



4.14



4.15



4.16



4.17



4.18



4.19



4.20



4.21



4.22



4.23



4.24





4.25



4.26



4.28



4.29



4.30



4.31



4.32



4.33



4.34



4.35



4.36



4.37



Աղյուսակ 8



4.38



4.39



4.40



4.41



4.42



4.43



4.44



4.45



4.46



4.47



4.48



4.49





4.50



4.51



4.52



4.53



4.54



4.55



4.56



4.57



4.58



4.59



0.1



4.22 (2.5x)

Աղյուսակ 10



5.1



5.2



5.3



5.3 (1.5x)



Ա (1.5x)

Տիգրան II



Բ (1.5x)

Տիգրան V

Հոռն



1



2



1(2x)



3



4



5



6



5(2x)




Ա(2x)

Օգոստոս






Արտավազդի Բ. նոճի և Նիկե (Վիսաբին)



Արտավազդի Բ. դրախմա



□ 9 = 8.5-13.9 q

■ 9 = 8.75-13.9 9.25 q

Պարթևաստան



1



2



3



4



5



6



7



8



9



10



11



12



13



14



15



16



4.29 (2x)

Տիգրան II



Արժ. Ա



Պղ. Բ



Արժ. Գ



Պղ. Դ



Արժ. Ե



Պղ. Զ



## ՀԱՎԵԼՎԱԾ

(Արտավազդ II-ի դրամների մատենագրութունը)

Հավելվածում ներկայացված են տվյալներ Արտավազդ II-ի հրատարակված դրամների վերաբերյալ՝ հնագույն հրատարակութուններից սկսած, ժամանակագրական կարգով: Հավասարության նշանը (=) ցույց է տալիս, որ հիշատակված աշխատությունների մեջ հրատարակված է նույն դրամը: Այն դեպքերում, երբ դրամի լուսանկարը կա մեր տախտակներում՝ արված է համապատասխան հղում:

Այս ցուցակը սպառիչ է, բայց այն հիմնականում արտացոլում է Արտավազդի դրամների վերաբերյալ գոյություն ունեցող հրատարակությունները:

Pellerin, J., *Recueil de Médailles de Rois, qui n'ont point encore été publiés ou qui sont peu connues*, Paris, 1762, Pl. XV (1 պղինձ, բկ.՝ Նիկե = Visconti 1811 = Langlois 1859 = Babelon 1890):

Visconti, E.Q., *Iconographie ancienne; Iconographie grecque*, Paris, 1811, IIe part., chap. XII, § 7, Pl. XIV, no. 7 (1 պղինձ, բկ.՝ Նիկե = Pellerin 1762 = Langlois 1859 = Babelon 1890):

Bartholomaei, J. de, *Drachme inédite d'Artavasde, roi d'Arménie (61-34 av. J.C.)*, *Zeitschrift für Münz-, Siegel- und Wappenkunde*, Vol. III (1849), pp. 179-181, (1 դրախմա՝ Z տառով = Langlois 1859 = Babelon 1890 = Nercessian 2003, a4-p9a, ցույց. 2.14):

Langlois, V., *Numismatique de l'Arménie dans l'antiquité*, Paris, 1859, p. 33-34, pl. III, no. 1-2; reprint: Bologna, 1979 (1 դրախմա = Bartholomaei 1849 = Babelon 1890, և 1 բրոնզ, բկ.՝

Նիկե, ցույց. 4. 2):

Imhoof-Blumer, F., *Porträtköpfe auf antiken Münzen, hellenischer und hellenisierter Völker*, Leipzig, 1885 (1 դրախմա և 1 բրոնզ, բկ.՝ Նիկե):

Gardner, P., *On an Unpublished Coin of Artavasdes II, King of Armenia*, *Numismatic Chronicle* XII (1872), pp. 9-15 (1 դրախմա = Bartholomaei 1849 = Langlois 1859 = Babelon 1890):

Babelon, E., *Les rois de Syrie, d'Arménie et de Commagène*, Paris: Bibliothèque Nationale, 1890; reprint: Bologna 1971 (1 դրախմա, p. CCIV, fig. 43 = Langlois 1859 = Bartholomaei 1849, և 1 բրոնզ, բկ.՝ Նիկե, p. 215, Pl. XXIX, fig. 16 = Pellerin 1762 = Visconti 1811 = Langlois 1859):

Wroth, W., *Catalogue of the Greek Coins of Galatia, Cappadocia, and Syria*, London, 1899. Repr. Bologna, 1964, p. XLII, 101, Pl. XIV, 2 (1 դրախմա = MOUSHEGHIAN & DEPEYROT 1999, Pl. 7, 113/A = Nercessian 2002, Gr. 2, a4-p9a, Ծույց. 2. 14).

Prowe, Th., *Auctions-Catalogue der Sammlung griechischer, römischer und byzantinischer Münzen des Herrn Theodor Prowe in Moskau, Vienna*, 1904, p. 86, no. 1521, Pl. 10 (1 դրախմա = *Catalogue Ars Classica*, X, 1573, anc. coll. Th.Prowe = Nercessian 2003, a1-p3a, ցույց. 2.5).

Prowe, Th., *Monnaies inédites ou rare de ma collection*, *Труды Московского Нумизматического Общества* 3 (1905), с.155, ном.19, таб. 4, ном. 20 (Prowe 1904-ի նույն դրախման = *Catalogue Ars Classica*, X, 1573, anc. coll. Th.Prowe).

Voigt, W. von, 1911: *Die Seleucidenmünzen der Kaiserlichen Ermitage zu St.-Petersburg*, *Journal International d'Archéologie Numismatique* 13 (Հավանաբար, Bartholomaei 1849-ի նույն դրախման):

Ատրպետ, Հայ Թագավորների դրամները, յետ Տիգրան Մեծի, *Ազգագրական Հանդես* 23/2 (1912), էջ 57-67 (1 դրախմա և 1 բրոնզ, բկ.՝ Նիկե):

Morgan, J. de, *Histoire du peuple arménien*, Paris, 1919 (1 դրախմա = Բասմաջևան 1936 = Bedoukian 1978 = Nercessian 2003, a2-p7a, ցուց. 2.7):

Morgan, J. de, *Manuel de Numismatique orientale de l'antiquité et du moyen âge 1-3*, Paris 1923-1936, p. 193, fig. 217: Գծանկարը պատկերում է դրախմա, բայց նկարագրված է (սխալներով) *Babelon 1890*, p. 215, Pl. XXIX, fig. 16-ի բրոնզը, 9.00 գ:

Բասմաջևան, Կ. Յ., Հայկական ընդհանուր դրամագիտութիւն եւ Հայաստանի վերաբերեալ դրամներ, Վենետիկ, 1936, էջ 37 (1 դրախմայի գրչանկար = Morgan 1919 = Bedoukian 1978 = Nercessian 2003, a2-p7a):

Շահնազարյան, Ա., Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղի մոտ հայտնաբերված դանձր, Հայաստանի Պատական Թանգարանի «Աշխատություններ» 2 (1949), էջ 33, 1 դրխմա (= տե'ս ցուց. 2.2, Աղ. 2.2):

Seyrig, H., *Trésor monétaire de Nisibe*, *Revue Numismatique* 17 (1955), p. 128, note 69: Հիշատակված է մի դրախմա 5 տառով, որտեղ հղված է *Catalogue Ars Classica*, X, 1573 (anc. coll. Th.Prowe), ինչպես նաև Վիննայի Միթարյանների օրինակը՝ 5 տառով, ցուց. 2. 9, և Բրիտանական Թանգարանինը՝ Z տառով, ցուց. 2. 14:

Մուշեղյան, Խ., Արտավազդ II-ի չորեքդրամյանը Պատմա-Բանասիրական Հանդես 2, (1964), էջ 317-323: Հրապարակում և վերլուծական աշխատություն Փարաքարում հայտնաբերված տեսրադրախմայի մասին, ցուց. 5. 3:

Seyrig, H., *Un tétradrachme d'Artavasde I*, *Revue Numismatique* 6 (1964), 139-140: Հաղորդում Փարաքարի տեսրադրախմայի մասին, ցուց. 5. 3:

Պտուկեան, Զ., Հայաստանի Արտաշեսեան Հարստութեան Թագաւորներու դրամներու դասաւորումը, Հանդէս Ամսօրեայ 7-9 (1968), էջ 324-327, 335. 347-348, Թիւլ 22-24 (Փարաքարի տեսրադրախման, Ցուց. 5. 3, մի դրախմա Զ. Պտուկյանի հավաքածուից, Ցուց. 2. 7 և մի բրոնզ՝ Փարիզի Ազգային

Գրադարանի օրինակը, բկ.՝ Նիկե, Յուլ. 4. 2):

Bedoukian, P.Z., A Classification of the Coins of the Artaxiad Dynasty of Armenia, *ANS Museum Notes* 14 (1968), p. 45-47, 55, Pl. X, 21-25 (Պատուկյան 1968-ի նույն դրամները):

Պատուկեան, Զ., Հայաստանի Արտաշէսեան Հարստութեան դրամները, Վիեննա, 1969 (Պատուկյան 1968-ի նույն դրամները):

Պատուկեան, Զ., Արտաշէսեան դրամներ, Հանդէս Ամսօրեայ 1-3 (1969), էջ 64-69: Հիշատակված են խոշոր հավաքածուներում առկա Արտավազդ II-ի դրամները, առանց նկարագրութիւնների և լուսանկարների. Բրիտանական Թանգարան (Լոնդոն)՝ 1 դրախմա, Յուլ. 2. 14, Աղգային Մատենադարան (= Գրադարան) (Փարիզ)՝ 1 պղինձ, բկ.՝ Նիկե, Յուլ. 4. 2, Պետական էրմիտաժ (Լենինգրադ)՝ 1 դրախմա, Բեռլինի Թանգարան՝ 3 դրախմա, Վիեննայի Մխիթարյան Թանգարան՝ 1 դրախմա, Յուլ. 2. 9, Երևանի Պետական Թանգարան (= Հայաստանի Պատմութեան Թանգարան)՝ 1 տետրադրախմա, Յուլ. 5. 3 և 1 պղինձ, Ջարեհ Պատուկյանի հավաքածու (Նյու Յորք)՝ 1 դրախմա, Յուլ. 2. 7: Ներկայացված են Պատուկյան 1968-ի դրամների լուսանկարները:

Մուշեղյան, Խ., Հայաստանի դրամական գանձերը 1, Երևան, 1973, էջ 81, no. 129 և 130: Ներկայացված են Սառնակունքի գանձի երկու դրախմաների (ՀՊԹ 17824/54 և 16022) նկարագրութիւնը և լուսանկարները, ցուց. 2.2 և 2.1:

Тирация, Г., Портретное искусство Армении по монетам Тиграна II и Артавазда II, Պատմա-բանասիրական Հանդէս 4 (1973), էջ 51, նկ. 4: Ներկայացված են Փարաքարի տետրադրախմայի (ՀՊԹ 17579) և Սառնակունքի գանձի դրախմաներից մեկի (ՀՊԹ 16022) դիմերեսի լուսանկարները: Տրված է դիմապատկերների վերլուծութիւնը:

Զարդարյան, Մ., Արտաշատում կտրված դրամների մի տիպի մասին, Լրաբեր Հասարակական գիտութիւնների 2 (1977), էջ 82-83, նկ. 2 (Արտաշատի 8-րդ բլուրի պեղումներից հայտնաբերված պղնձե դրամ, բկ.՝ Նիկե, ցուց. 4.47:

Bedoukian, P.Z., *Coinage of the Artaxiads of Armenia*,

1978, pp. 25-28, 69-70, No. 129-135, Pl. 6: Ներկայացված են Փարաքարի տետրադրախմայի, ցուց. 5.3, 2. Պտուկյանի հավաքածուից 1 դրախմայի, ցուց. 2.7, և 4 պղնձե դրամների, բկ.՝ Նիկե, ցուց. 4.13, 39, 43, բկ.՝ նոճի, ցուց. 3.10, կշռային տվյալները և լուսանկարները, ինչպես նաև 9 դրախմաների և 4 պղինձների (բկ.՝ Նիկե) կշիռներն ու պատկանելությունը:

Bedoukian, P.Z., *Some Unpublished Coins of the Artaxiads of Armenia*, *Revue des Etudes Arméniennes* XVII (1983), pp. 279-287, pl. II, 1 տետրադրախմա (= տե՛ս ցուց. 5.2, Ադ. 5.2):

Մուշեղյան, Խ., Գրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. - մ.թ. XIV դ.), Երևան, 1983, էջ 55-57: Տրված են Փարաքարի տետրադրախմայի, էջ 55, no. 45, նկ. 73, ցուց. 5.3, 2 դրախմաների՝ մեկը Սառնակունքի գանձից, էջ 56, no. 46, նկ. 74, ցուց. 2.2, մյուսը՝ նկ. 75, որի մասին տեղեկություն չի տրված, ինչպես նաև 2 պղնձե դրամների՝ բկ. Նիկե (Փարիդի Աղգային Գրադարան), էջ 56, no. 47, նկ. 76, ցուց. 4.2, և ՀՊԹ 17620/8-ի (նախկինում՝ Գալաճյանների հավաքածու), էջ 57, նկ. 77, ցուց. 4.29, լուսանկարները:

Hirsch, Münzen und Medaillen, Auktion 165 (14-16 Feb. 1990), no. 504, 1 պղնձե դրամ, բկ. Նիկե, ցուց. 4.58:

Nercessian, Y.T., *Armenian Coins and Their Values*, Los Angeles, 1995, p. 74-77, 195, Pl. 10, 124-132, Pl. 45. 4a, 4b, Pl. 46.9: Ներկայացված են 3 տետրադրախմաների, ցուց. 5.1, 2, 3, 1 դրախմայի, ցուց. 2.4, 6 պղնձե դրամների, բկ.՝ Նիկե, ցուց. 4.11, 16, 52, 56, 57, բկ.՝ նոճի, ցուց. 3.16, լուսանկարները, և թեքանի օրինակ է հայտնի յուրաքանչյուր տիպից:

Classical Numismatic Group, Inc. A Public and Mail Bid Auction Sale, Auction 36, December 5 & 6, 1995 p., 58, no. 607-616: Տրված են 1 տետրադրախմայի, ցուց. 5.1, 1 դրախմայի, ցուց. 2.13, 8 պղնձե դրամների՝ բկ. Նիկե, ցուց. 4.16, 20, 21, 50, բկ.՝ նոճի, ցուց. 3. 1, 5, 9, 20, լուսանկարները և չափազիտական տվյալները:

Nercessian, Y.T., Saryan, L.A., *Overstruck and Countermarked Coins of the Artaxiad Dynasty of Armenia*, *Armenian*

*Numismatic Journal* 22 (1996), pp. 56-57, no. 112-140: Ներկայացված են վերաթողարկված 1 տետրադրախմա, ցուց. 5.2, և 28 պղնձե դրամներ, բկ.՝ Նիկե, ցուց. 4. 1, 4, 6, 8, 9, 11, 16, 18, 20, 21, 24, 28, 31, 38, 40, 44, 50, 52, բկ.՝ նոճի, ցուց. 3. 1, 5, 7, 8, 9, 12, 20, որոնց չափագիտական տվյալները և 25 դրամների լուսանկարները տրված են:

Roma-Armenia. Grande Salle Sixtine, Bibliothèque Apostolique du Vatican, 25 mars - 16 juillet 1999, p. 43, II, 29: Սառնակունքի գանձի դրախմաններից մեկի դիմերեսի լուսանկարը, ՀՊԹ 16022 = Մուշեղյան 1973, no. 129 = Bedoukian 1978, no. 130 = Մուշեղյան 1983, no. 74, ցուց. 2.2:

Mousheghian, A., Depeyrot, G., *Hellenistic and Roman Armenian Coinage (1<sup>st</sup> c. BC - 1<sup>st</sup> c. AD)*, Wetteren, 1999. Ներկայացված են 1 տետրադրախմայի (no. 115 = ցուց. 5.1, 3 դրախմանների (no. 113/A = ցուց. 2.5, no. 113/B = 2.8, no. 114 = 2.14) և 7 պղնձե դրամների (բկ.՝ Նիկե, no. 117/A, no. 117/B = ցուց. 4.2, 117/D = 4.44, 117/E = 4.58, 117/F = 4.29, բկ.՝ նոճի, no. 118 = 3.4) լուսանկարները և Արտավազդ II-ի դրամների ցուցակը, որտեղ հիշատակված են չափագիտական տվյալներն ու պատկանելությունը (էջ 221-222):

Mousheghian, K., Mousheghian, A., Depeyrot, G., *History and coin finds in Armenia: Antiquity*, Wetteren, 2000, p. 124, Pl. 13, no. 129-130. Ներկայացված են Սառնակունքի գանձի երկու դրախմանները և նրանց լուսանկարները, ցուց. 2.1-2:

Nercessian, Y.T., *Silver Coins of Artavasdes II of Armenia*, *Armenian Numismatic Journal* XXIX (2003), pp. 3-11, Pl. 1. Ներկայացված են 3 տետրադրախմա և դրանց լուսանկարները, 14 դրախմանների մասին տվյալներ, որոնցից 10-ի լուսանկարները և 6 կեղծ դրամների մասին տվյալներ, որոնցից 3-ի լուսանկարները:

**Ռ. Վարդանյան**

**Արտավազդ II-ի դրամները**

Շարվածքը եւ  
ձեւավորումը՝ Ռուբեն Վարդանյանի  
Շապկի ձեւավորումը՝ Ալբերտ և Համիկ  
Հովհաննիսյանների  
Շապկի լուսանկարը՝ Վրամ Հակոբյանի

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրար.



220089865

1000000000

Թուղթ՝ օֆսեր: Տառատեսակը՝ Barz Normal:  
Տպագրական 8,75 մամուլ:

---

Տպագրվել է «ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊԸ տպագրատանը,  
ՀՀ, Երևան, Փ. Բուզանյի 1/3, հեռ. 54-12-87, 54-12-89



A  $\overline{11}$   
89865